

ԱՆՌԾ. Ամփոփ ծրագրի մշակման գործընթաց



ԱՂԲԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՅԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԾՐԱԳԻՐ

Մասնակցության գործընթաց

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐ

ԻՆՉ Է ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- Ինչ է մասնակցությունը. նպատակ եւ խնդիրներ
- Ինչպես է իրականացվում մասնակցությունը
- Ինչ է քաղաքացիական հասարակությունը
- Մասնակցության գործընթացի փուլերը
- Ինչպիսի արդյունքների կարելի է հասնել մասնակցության շնորհիվ
- Մասնակցության հնարավոր խոչընդոտները
- Արտասահմանյան փորձի մասին

Մասնակցության գործընթաց ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

2000թ. սկսած, Հայաստանում նախաձեռնվել է Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագիրը (ԱՀՌԾ), որտեղ ներգրավված են ՀՀ Կառավարությունը, Ազգային ժողովը, միջազգային ու հասարակական մի շարք կազմակերպություններ:

Ի տարբերություն մինչ այդ մշակված ծրագրերի, միջազգային հանրությունը, Հայաստանի կառավարությունը եւ քաղաքացիական հասարակության բոլոր սուբյեկտները հստակորեն գիտակցում են այս ծրագրի կարեւորագույն առանձնահատկությունը. այն, որ սա ոչ միայն պետական, այլեւ ամբողջ երկրի ծրագիր է: Այսինքն, ծրագրի անբաժանելի մաս է հանդիսանում բոլոր խմբերի շահագրգիռ մասնակցությունը ԱՀՌԾ մշակման եւ իրականացման փուլում:

Սա նմանատիպ ծրագրերի առաջին փորձն է մեր երկրի համար: Այդ իսկ պատճառով ծրագրի առաջնահերթ խնդիրներից է հասարակության իրազեկության եւ ընդգրկման ապահովումը: Այստեղ անգնահատելի դեր ունեն զանգվածային լրատվամիջոցները, որոնք, հենց իրենք էլ հանդիսանալով քաղաքացիական հասարակության սուբյեկտ, մեծ ներդրում ունեն տեղեկատվության հաղորդման եւ հասարակության տարբեր խմբերի միջև կապի հաստատման գործում: Պետք է նշել, որ մեր հասարակությունում ՁԼՄ-ները, հասարակական կազմակերպությունների հետմեկտեղ, քաղաքացիական հասարակության առավել կազմակերպված ուժն են, մինչդեռ քաղաքացիական հասարակության այնպիսի սուբյեկտներ, ինչպես, օրինակ, արհմիությունները, կրոնական կազմակերպությունները, գործարարները եւ համայնքային միությունները շատ ավելի թույլ են եւ հիմնականում համախմբված չեն: Ակնկալվում է, որ մասնակցության գործընթացի իրականացման արդյունքում հնարավորինս կնոբելիզացվեն քաղաքացիական հասարակության բոլոր խմբերը եւ կստեղծվի սոցիալական գործընկերության կառույց, որտեղ առավել

նշանակալի ձեռքբերումը պետություն-քաղաքացիական հասարակություն երկխոսության հաստատումը կլինի:

Չարք. Ի՞նչ է մասնակցությունը:

Պատասխան. Մասնակցության մի շարք սահմանումներ կան, որոնց տարբերությունը ի հայտ է գալիս հիմնականում երկրների մակարդակով: Առավել ընդհանուր եւ համառոտ ձեւով մասնակցությունը սահմանվում է որպես մի գործընթաց, որի միջոցով բոլոր ընդգրկված սուբյեկտները ներազդում են զարգացման նախաձեռնությունների, նրանց վրա ազդող որոշումների ու ռեսուրսների վրա եւ վերահսկում դրանք:

ԱՅՌԾ ՀՀ Համակարգող խորհրդի կողմից ընդունված Տեխնիկական առաջադրանքում բերված է հետեւյալ սահմանումը. “Մասնակցությունը մի գործընթաց է, որի շրջանակներում մասնակիցներն ազդում են խնդիրների ու նրանց լուծման հերթականության սահմանման, քաղաքական որոշումների ընդունման, ռեսուրսների բախշման, ինչպես նաեւ օրենքով սահմանվող պետության կողմից տրվող հնարավորություններից ու ծառայություններից օգտվելու մատչելիության կարգավորման վրա եւ իրականացնում են այդ խնդիրների համատեղ լուծումն ու հսկողությունը”:

Չարք. Ը՞րն է մասնակցության գործընթացի նպատակը:

Պատասխան. Մասնակցության գործընթացն ունի կարճաժամկետ եւ երկարաժամկետ նպատակներ:

Մասնակցության գործընթացի կարճաժամկետ նպատակն է ԱՅՌԾ-ի մշակման ընթացքում քաղաքացիական հասարակության հետ համաձայնեցված պետական քաղաքականության ռազմավարական այնպիսի փոփոխությունը, որը կնպաստի երկրում աղքատության առկա մակարդակի պատճառների վերացմանը եւ առաջիկա 3 տարիների ընթացքում երկրում աղքատության մակարդակի որոշակի իջեցմանը:

Մասնակցության գործընթացի երկարաժամկետ նպատակն է ստեղծել երկրի կառավարման սկուզբունքորեն նոր համակարգ՝ որոշումների ընդունման գործընթացում քաղաքացիական հասարակության գործունակ ինստիտուտների ներգրավման ճանապարհով:

Մասնակցության գործընթացի կարելորագույն նպատակներից են հասարակություն-պետություն համագործակցության ինստիտուցիոնալ ուժեղացումը եւ սոցիալական գործընկերության հաստատումը, որպես պետական կառավարման նոր երկարաժամկետ բաղադրիչ: Սոցիալական գործընկերության հաստատումն է, որ կարող է ԱՅՌԾ-ն դարձնել արդյունավետ, եւ դրա շրջանակում իրականացվող միջոցառումների շնորհից ստացված դրական արդյունքները հասանելի կդառնան աղքատ խավերին:

Չարք. Ի՞նչու է մասնակցությունը անհրաժեշտ:

Պատասխան. Մասնակցության գործընթացը անգնահատելի նշանակություն ունի Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրում: Ստորեւ բերված են հիմնական փաստարկները հօգուտ մասնակցության.

- Ապահովելով քաղաքականությունների ու գործողությունների սեփականության զգացումը՝ մասնակցությունը դրանով իսկ նպաստում է գործընթացին կատարողների նվիրվածությունը:
- Մասնակցությունը նպաստում է կառավարության հաշվետու լինելուն:

Թափանցիկությունը աճում է, երբ հանրությունը տեղյակ է ու հասկանում է կառավարության կողմից իրականացվող գործընթացը, ավելին՝ կարող է վերահսկել այն: Ոչ պետական կառույցների դերի ու կարողության աճի շնորհիվ պետական իշխանությունը հակակշիռ է ձեռք բերում:

- Իրականացվող քաղաքականության որակը բարելավվում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններից մասնագիտական ու տեղական գիտելիքների ստացման շնորհիվ:
- Մասնակցության շնորհիվ աճում են աղքատների լիազորությունները, քանի որ նրանք հնարավորություն են ստանում որոշումների ընդունման գործընթացում ներդնել իրենց վերլուծությունները, գերակայությունները եւ ձայները, եւ դրանով իսկ իրենց կարիքները համապատասխանեցնում են իրականացվող գործընթացին:
- Մասնակցությունը հավասարություն եւ սոցիալական ինտեգրացիա է ապահովում՝ հասարակության տարատեսակ կարիքների գնահատման միջոցով:
- Կառավարության, մասնավոր սեկտորի եւ քաղաքացիական հասարակության խմբերի միջեւ համագործակցություն է ստեղծվում, որը բերում է աղքատության կրճատման նպատակին հասնելու համար միասնական գործողությունների իրականացմանը:

Չարք. *Ովքե՞ր են ընդգրկված մասնակցության գործընթացում:*

Պատասխան. Մասնակցության գործընթացում ընդգրկված են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ներկայացուցչական իշխանությունը եւ լայն հանրությունը: Իբրեւ կատարյալ տարբերակ՝ մասնակցության գործընթացի մեջ պետք է ներգրավված լինեն բոլոր կողմերի եւ հասարակության բոլոր ինստիտուտների ներկայացուցիչները: Գործնականում մասնակցության չափերն ու խորությունը կանոնավորվում են գործընթացի փուլային իրականացմամբ եւ ներգրավված անձանց առավել ներկայացուցչությամբ:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների շարքում հասարակական կազմակերպությունների եւ խմբերի մասնակցության հետ միասին կարելի է ընդգրկել մասնավոր սեկտորի ներկայացուցիչները եւ նրանց միավորումները, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու համայնքները: Քննարկման գործընթացում հասարակության այլ խավերի հետ միասին անհրաժեշտ է ներգրավել նաեւ ազդեցիկ պետական եւ քաղաքական գործիչների:

ԱՅՈՒՄ Տեխնիկական առաջադրանքում որպես մասնակցության սուբյեկտ առանձնացված են հետևյալ խմբերը.

- հասարակական կազմակերպություններ
- զանգվածային լրատվության միջոցներ
- քաղաքական կուսակցություններ
- արհմիություններ
- երիտասարդություն
- հիմնարկների եւ կազմակերպությունների կոլեկտիվներ
- խոցելի խմբեր, աղքատներ
- գիտական հիմնարկների ներկայացուցիչներ եւ առանձին գիտնականներ
- արվեստի, գրականության, մշակույթի ներկայացուցիչներ եւ նրանց միություններ
- մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ
- տեղական ինքնակառավարման մարմիններ եւ համայնք
- կառավարություն
- Ազգային ժողով
- դոնորներ:

Չարց. Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը:

Պատասխան. Քաղաքացիական հասարակությունը պարզ սահմանմամբ գործունեության մի վայր է, որտեղ մարդիկ միավորվում են ընդհանուր շահերը հետապնդելու նպատակով, եւ դա անում են ոչ թե շահույթի կամ քաղաքական նպատակների համար, այլ պարզապես մտահոգված լինելով որեւէ բանով: Այս առումով ընտանիքից ու պետությունից դուրս բոլոր կազմակերպությունները, բացի ֆիրմաներից, քաղաքացիական հասարակության մաս են կազմում, ներառյալ կրոնական ու պրոֆեսիոնալ կազմակերպությունները, արհմիությունները, զանգվածային լրատվամիջոցները, համայնքային միավորումները, տարբեր հասարակական կազմակերպությունները եւ այլն:

Չարց. Ի՞նչպես է իրականացվում մասնակցությունը:

Պատասխան. Մասնակցության հիմնական մեթոդներն են.

1. տեղեկատվության տարածում
2. խորհրդատվություն
3. համագործակցություն
4. լիազորությունների տրամադրում

Մասնակցության գործընթացի կարելուրագույն ձեւերից են՝

- թեմատիկ քննարկումների կազմակերպում,
- վերլուծությունների եւ եզրակացությունների տպագրում եւ մշակում,
- ՁԼՄ-ներով, ինչպես նաեւ ուղղակի հասցեագրված առաքումներով ԱՅՌԾ-ին վերաբերող նյութերի տարածում,
- խորհրդատվություն ինչպես ոչ ֆորմալ, այնպես էլ որոշ կառուցվածքների միջոցով,
- հետազոտություններ, թեմատիկ ուսումնասիրություններ,
- աշխատանքային խմբերի եւ կոմիտեերի ձեւավորումներ,
- քաղաքական որոշումներ ընդունող կառույցների մեջ ինտեգրում,
- դոնորների մասնակցությամբ քննարկումներ:

Չարկ է մշել, որ մասնակցության արդյունավետ ձեւերից է նաեւ թեմատիկ քննարկումներին անկախ փորձագետների ներգրավումը, որոնց մշակումները պետք է հասցվեն մասնագիտական խմբերին եւ հանրությանը:

Չարց. Ինչպիսի՞ն են մասնակցության գործընթացի սկզբունքները:

Պատասխան. Մասնակցության գործընթացի կազմակերպման գործում նպատակահարմար է հետեւել ստորեւ բերվող սկզբունքներին ու մոտեցումներին.

- նպատակային մոտեցման պահպանում ինչպես առհասարակ գործընթացի, այնպես էլ նրա բոլոր բաղադրիչների (մասնակիցներ, միջոցառումների տեսակներ, տարածված նյութերի բովանդակություն, մասնակցության ձեւեր եւ այլն) նկատմամբ,
- գործընթացի մատչելիություն եւ թափանցիկություն ողջ հասարակության համար,
- մոտեցումների եւ մեթոդների ճկունություն եւ ակնկալվող արդյունքների իրատեսական բնույթ,
- գործընթացի փոխկապվածություն, կայունություն, տեւականություն եւ ներթափանցում բոլոր սեկտորներ ու շրջաններ,
- հակառակ կապի եւ գործընթացի փուլայնության ապահովում,
- տեղեկատվական աղբյուրների հավասարակշռություն, արժանահավատություն եւ ներկայանալիություն,
- գործունեության ընթացքի եւ արդյունքների չափելիություն,
- բովանդակային արդյունքների (եզրակացություններ, առաջարկություններ,

հանձնարարականներ) տրամաբանականություն, կոնկրետություն եւ համապատասխանություն ԱՅԻԾ-ի (քննարկման ներկայացված նրա տարբերակի) որոշակի բաժիններին:

Արդեն կուտակված փորձը (երկրում եւ արտասահմանում) թույլ է տալիս պնդել, որ մասնակցության գործընթացը ձեւերի եւ մեթոդների իր ողջ բազմազանությամբ հանդերձ պետք է բավարարի մի քանի ընդհանուր պահանջների:

Մասնակցության գործընթացը պետք է՝

- ուղեկցի ԱՅԻԾ-ից բխող ծրագրերի քննարկման, մշակման, մասնակիցների կարծիքը որոշում ընդունողներին հասցնելու, մոնիտորինգի եւ գնահատման, ինչպես նաեւ դրանց արմատավորման գործընթացի մեջ ներգրավվելու բոլոր փուլերին,
- փուլային բնույթ ունենա, այսինքն՝ քննարկման գործընթացի մեջ հասարակության առանձին խմբեր կամ շերտեր ներգրավելու դեպքում ցանկալի է սկսել առավել իրազեկ եւ նման գործունեության բնագավառում որոշակի գիտելիքներ ու հմտություններ ունեցող անձանցից ու կազմակերպություններից,
- հնարավորինս բաց լինի՝ օգտագործելով խորհրդատվության եւ հասարակությանը հաշվետու լինելու բազմազան ձեւեր,
- պարունակի իր մեջ ուսումնական տարրեր՝ բարձրացնելով լայն խավերի գիտելիքներն ու կարողությունները երկրի կառավարման գործընթացներին առավել արդյունավետ մասնակցելու նպատակով:

Չարդ. *Ի՞նչ փուլերով է ընթանում մասնակցության գործընթացը:*

Պատասխան. Մասնակցության գործընթացն ընթանում է ԱՅԻԾ մշակման ու իրականացման փուլերին զուգահեռ.

1. Միջանկյալ ծրագրի մշակում (2001թ. հունվար-դեկտեմբեր)
2. Վերջնական ԱՅԻԾ մշակում (մինչեւ 2002թ. օգոստոս)
3. Կառավարության կողմից հաստատված ծրագրի մասին տեղեկատվության տարածում եւ ԱՅԻԾ իրագործման եւ վերահսկման համար խմբերի կազմակերպում քաղաքացիական հասարակության սուբյեկտների ներկայացուցիչների մասնակցությամբ (սկսած 2002թ. սեպտեմբերից)
4. ԱՅԻԾ իրականացում, վերահսկում եւ վերլուծություն (2003-2005թթ.)
5. ԱՅԻԾ ենթածրագրերի վերանայում, շտկում եւ լրացում (2005-2015թթ.)

Այս փուլերին զուգընթաց, մասնակցությունը պետք է ընդգրկի նաեւ հետեւյալ գործողությունները.

- քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հզորացում եւ ինստիտուցիոնալիզացիա
- օրենսդրական բարեփոխումների իրականացում:

Չարդ. *Ո՞ր ոլորտներում եւ ինչպիսի՞ արդյունքների է հնարավոր հասնել մասնակցության գործընթացի շնորհիվ:*

Պատասխան. Մասնակցության գործընթացը կարելի է առաջին հերթին աղքատության ախտորոշման, պետական ծախսերի վերահսկման ու մակրոտնտեսական քաղաքականության մշակման, ինչպես նաեւ ԱՅԻԾ իրականացման վերահսկման ու գնահատման ոլորտներում:

Մասնակցության վրա հիմնված մոտեցումների հիմքի վրա աղքատության ախտորոշման բնագավառում հնարավոր է դառնում հետեւյալը.

- Աղքատության մակարդակի նվազեցման աշխատանքի շրջանակներում միջոցառումների ընտրություն, որը հիմնված կլինի աղքատության կոնկրետ հիմնախնդիրների՝ այդ թվում խոցելիության, անվտանգության բացակայության, կառավարական ձեւերի հետ կապված հիմնախնդիրների հաշվառման վրա:
- ԱՅԴԾ շրջանակներում ազդեցության որոշակի միջոցների մշակման ընթացքում աղքատության մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցառումների քանակական եւ որակական ասպեկտների ինտեգրում:
- Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցություն եւ մասնակցության վրա հիմնված գործընթացների օգտագործում, որը աղքատ համայնքներին եւ նրանց ինստիտուտներին թույլ կտա արդյունավետ մասնակցություն ցուցաբերել աղքատության ախտորոշման եւ վերլուծության, ինչպես նաեւ այդ գործընթացների վերահսկողության մեջ:
- Պետական ծախսերի կառավարման ոլորտում մասնակցությունը ապահովում է հետեւյալ արդյունքները.
 - Ռեսուրսների հաշվետու, թափանցիկ եւ արդյունավետ բաշխում, ծախսերի կառավարում եւ ծառայությունների մատուցման վերահսկում:
 - Բյուջեի կազմման, ծախսերին հետեւելու եւ ծառայությունների մատուցման վերահսկման գործընթացներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցություն:
 - Բյուջեի կազմման, ծախսերին հետեւելու եւ ծառայությունների որակի, ծավալի ու արդյունավետության վերահսկման գործընթացներում համայնքների եւ դրանց ինստիտուտների ներկայացուցիչների հնարավորությունների ընդլայնում:
 - Բյուջետային ինֆորմացիայի հրապարակայնացում եւ վերլուծության իրականացում, որը թույլ կտա տեղեկատվության փոխանակում եւ քննարկումներ անցկացնել Ազգային ժողովում, ՁԼՄ-ներում եւ քաղաքացիական հասարակության շրջանակներում:
- Մակրոտնտեսական քաղաքականության ձեւակերպման եւ բարելավման ոլորտում մասնակցությունը օգնում է հասնել հետեւյալ արդյունքների.
 - Գործընթացին մասնակցող մի շարք ինստիտուտների հետ համաձայնությունների կնքում եւ քաղաքականության ձեւակերպման ու իրականացման առանցքային ոլորտներում կոնսենսուսի մշակում:
 - Գործընթացի մասնակիցների հիմնական խմբերի մասնակցության կանոնների ու բանակցությունների վարման մեխանիզմների մշակում:
- Տարբեր մասնակիցներին հուզող առանձին հարցերի մասով մակրոտնտեսական հարցերի հրապարակայնացում, ինչպես նաեւ հանրությանը ներկայացվող տեղեկատվության առավել լայն տարածում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մեջ մասնակիցների շրջանակի ընդլայնման նպատակով:
- Մասնակցության հիման վրա մոնիտորինգի ու գնահատման համակարգում հնարավոր է դառնում իրականացնել մի շարք խնդիրներ.
 - Մասնակցության հիման վրա հակադարձ կապի մեխանիզմների եւ մոնիտորինգի համակարգերի մշակում, որը քաղաքացիներին եւ կառավարական կառույցի հիմնական մասնակիցներին թույլ կտա իրականացնել չքավորության նվազեցմանն ուղղված գործունեության հիմնական ուղղությունների, կառավարական մակարդակով իրականացվող միջոցառումների եւ առկա արդյունքների վերահսկում ԱՅԴԾ ձեւակերպման եւ իրականացման շրջանակներում:
- Քաղաքացիների կողմից տրամադրվող՝ ԱՅԴԾ շրջանակներում ստացված արդյունքներին եւ ռազմավարության իրականացման արդյունավետության վերաբերյալ հաշվետվությունների, ինչպես նաեւ այնպիսի մեխանիզմների օգտագործում, որոնք թույլ կտան ինտեգրացնել հակադարձ կապի շրջանակներում քաղաքացիներից ստացվող տեղեկատվությունը ԱՅԴԾ աղապտացման եւ կատարելագործման աշխատանքում /քաղաքացիների մասնակցության հնարավորությունների ընդլայնում/:

Չարք. *Ի՞նչ խոչընդոտներ ու վտանգներ կարող են հանդիպել մասնակցության գործընթացի ընթացքում:*

Պատասխան. Մասնակցության հնարավոր խոչընդոտներն են.

- մասնակցության այնպիսի զուգահեռ գործընթացների ստեղծումը, որոնք ինտեգրված չեն լինի առկա սոցիալական եւ քաղաքական կառույցներում.
- վստահության պակասը, մասնակցող խմբերի բախվող շահերը, կարողությունների տարբերությունը, որը կարող է բերել գործընթացի ապակազմակերպմանը.
- մասնակցության գործընթացի, աղքատության, դրա կրճատմանն ուղղված ջանքերի կարելիության վերաբերյալ պատկերացումների տարբերությունը ընդգրկված խմբերում.
- մասնակցության գործընթացից մասնակիցների չափազանց բարձր ակնկալիքները.
- գործընթացում ներգրավվածների միջեւ տեղեկատվության ոչ բավարար շրջանառությունը.
- մասնակցության գործընթացների թերի նախագծումը.
- պետության ներկայացուցիչների քաղաքական կամքի բացակայությունը՝ իշխանության կամ ազդեցության կորստի վախից դրդված.
- ժամանակի ու ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը.
- այն վտանգը, որ կառավարությունը ձեւական նշանակություն կարող է հաղորդել մասնակցության գործընթացին եւ փնտրել միայն իր առաջարկների հաստատումը, այլ ոչ իրական երկխոսություն: Բացի այդ, եթե պետությունը ձգտի ճնշում գործադրել, որ քննարկումները սահմանափակվեն նեղ ենթաժողովրդով եւ չընդգրկեն կառուցվածքային բարեփոխումների ու մակրոտնտեսական քաղաքականության հիմնախնդիրները:
- քաղաքացիական հասարակության թույլ կարողությունները, հատկապես տեխնիկական քաղաքականության վերլուծության հարցում: Մեկ այլ մտահոգություն կարող է լինել այն, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները չներկայացնեն աղքատների շահերը:

Չարք. *Ինչպիսի՞ դրական փորձ կա այլ երկրներում ԱՅՌԾ մասնակցության գործընթացի արդյունավետության առումով:*

Պատասխան. Շատ երկրներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ընդգրկելու համար ժամանակ է պահանջվել: Թեեւ հաճախ սկիզբը շատ քարքարոտ է լինում, ժամանակի ընթացքում տեղեկատվության տարածման ռազմավարությունները բարելավվում են՝ զանգվածային լրատվամիջոցների, տպագիր նյութերի եւ այլ միջոցների օգտագործման ընդլայնման շնորհիվ: ԱՅՌԾ գործընթացում մասնակցության աստիճանը շատ լայն է՝ հաճախ հարյուրավոր մասնակիցներով տասնյակ խորհրդատվություններով, որտեղ ներկայացուցչական խմբեր են ընդգրկվում՝ սկսած տեղական շահերի պաշտպանության խմբերից, արհմիություններից ու մասնավոր սեկտորից մինչեւ կրոնական ու երիտասարդական կազմակերպությունները, լրատվամիջոցներն ու դոնոր կազմակերպությունները: Անհրաժեշտ է գիտակցել, որ մասնակցության գործընթացը կարող է զգայուն ու քաղաքականացված դառնալ, ինչպես, օրինակ, Ալբանիայում, որտեղ վեճեր էին առաջացել տեխնիկական աշխատանքային խմբում ներկայացուցչության շուրջ: Բոլիվիայում ՅԿ-ների ու եկեղեցիների կոալիցիաները զուգահեռ խորհրդատվական գործընթաց էին վարում հանքափորերի, խոցելի խմբերի, փոքր արտադրությունների հետ, եւ միայն շատ ավելի ուշ միացան ձեւական ԱՅՌԾ գործընթացին:

Մի շարք դեպքերում կառավարությունից հետադարձ կապ է ապահովվել՝ առաջարկությունների ներառման կամ չներառման մասին: Նման հետադարձ կապի

բացակայությունը կարող է ֆրուստրացիա առաջացնել մասնակցության գործընթացում ներգրավվածների համար: Լավ փորձ կարող են համարվել այն դեպքերը, երբ ԱՅՌԾ թիմերը փորձել են հավաքագրել մասնակիցների տեսակետերը եւ ավելի ուշ հաշվի առել դրանք ԱՅՌԾ փաստաթղթի կազմման մեջ:

Որոշ օրինակներ կան, թե ինչպես են քաղաքացիական հասարակության ջանքերը նպաստել ԱՅՌԾ բովանդակության փոփոխմանը, մասնավորապես, ուշադրություն բեւեռելով վատ կառավարմամբ պայմանավորված սոցիալական անտեսման ու աղքատացման հետեւանքներին: Մասնակցության գործընթացը բացահայտել է նաեւ յուրահատուկ հիմնախնդիրների նկատմամբ կիրառվող քաղաքականության նրբությունները: Քաղաքացիական հասարակության ներդրումը սովորաբար մեծ է առողջապահության, սննդի, կրթության բնագավառներում եւ աղքատության սահմանման ու բազմաչափելիության հասկացման գործում: Տանգանիայում քաղաքացիների լոբբինգի արդյունքում արգելվեց տարրական դպրոցի վարձավճարը, մեծ կարեւորություն տրվեց համայնքային զարգացման ծրագրերին, եւ աղքատների զբաղվածության սխեմաներ ստեղծվեցին: ԱՅՌԾ-ն կենդանի ու բաց քննարկումների դրդիչ հանդիսացավ Մավրիտանիայում, թեւ այստեղ մասնակցության կամ ուժեղ քաղաքացիական հասարակության ոչ մի ավանդույթ չի եղել: Քննարկումների ընթացքում քաղաքացիական հասարակությունը միջառք գերակայող խնդիրներ առաջ բերեց, ներառյալ կառավարման ու աղքատության միջեւ կապի հստակեցման անհրաժեշտությունը, դատական բարեփոխման շեշտադրումը, ազգային կրթական ծրագրի զարգացումը եւ առողջապահական ծառայությունների ապակենտրոնացումը: ԱՅՌԾ փաստաթուղթն այս երկրում ինքնին արդեն մի հատված է ներառում քաղաքացիական հասարակության դիրքորոշման ու կառավարության արձագանքի մասին: Մասնակցության համար բարենպաստ միջավայր ստեղծելով ԱՅՌԾ գործընթացում, կառավարությունը այժմ ավելի շահագրգռված է ավելի շատ ներառել քաղաքացիական հասարակությունը: Միաժամանակ, ընդգրկվելով ԱՅՌԾ-ում, վերջինս շահել է նաեւ վստահելիության ու փորձի առումով:

Չարց. *Որտեղի՞ց կարելի է լրացուցիչ տեղեկատվություն ստանալ մասնակցության գործընթացի եւ ընդհանրապես ԱՅՌԾ վերաբերյալ:*

Պատասխան. ԱՅՌԾ եւ մասնավորապես մասնակցության գործընթացի վերաբերյալ նյութեր կարելի է քաղել հետեւյալ ինտերնետային աղբյուրներից.

www.gov.am/am/gov/iprsp

www.worldbank.org/wbi/sourcebook/sbhome.htm

www.worldbank.org/participation

www.undp.org/dpa/publications/poverty.html

www.ids.ac.uk/ids/particip/index.html

www.eldis.iks.ac.uk/

Տպագիր նյութերի, ինչպես նաև հարցերի, դիտողությունների կամ առաջարկությունների համար դիմեք մասնակցությունը ապահովող հետելյալ անձանց եւ կազմակերպություններին.

Լարիսա Ալավերդյան,

Մասնակցության գործընթացի լիազոր անձ
Ընդդեմ Իրավական Կամայականության ՀԿ
Երեւան, Արշակունյաց 6, հեռ. 58 28 19, 56 82 72,
Էլ. փոստ՝ favl@netsys.am

Աղասի Թադևոսյան

Մարդու Իրավունքների ու Ժողովրդավարության
Ինստիտուտ (ՄԻԺԻ)
Երեւան, Այգեձորի 4/1, հեռ., էլ. փոստ՝ idhr@arminco.com

Ալբերտ Ղալթախչյան

ՀՀ Կառավարության
«Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն»
Երեւան, Հանրապետության հրապարակ,
Կառավարության Տուն 1, մասնաշենք 4,
հեռ. 52 37 90, 54 30 51, էլ. փոստ՝ info@gov.am

ԱՆՌԾ. Ամփոփ ծրագրի մշակման գործընթաց



ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՎԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԾՐԱԳԻ

Մասնակցության Գործընթաց

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐ

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ)

- Բացարձակ եւ հարաբերական աղքատություն
- Օբյեկտիվ եւ սուբյեկտիվ աղքատություն
- Ֆիզիոլոգիական եւ սոցիալական գրկանքներ
- Աղքատությանն առնչվող այլ հասկացություններ
- Աղքատության գնահատումը
- Ցուցանիշների խմբերը եւ ընտրությունը
- Նպատակային ցուցանիշներ

Քանի որ աղքատությունը բազմագործոնային երեւոյթ է, գոյություն ունեն այն գնահատելու տարբեր մոտեցումներ: Աղքատությունը կարող է դիտարկվել տարբեր տեսանկյուններից. որպէս եկամուտների բացակայություն կամ որպէս միջոցների անհասանելիություն: Աղքատությունը կարող է լինել հարաբերական կամ բացարձակ, խրոնիկական կամ ժամանակավոր եւ այլն: Աղքատության դիտարկման ընտրված մոտեցումը պայմանավորում է դրա գնահատման մեթոդների, ինչպէս նաեւ այն հաղթահարելու մոտեցումների ընտրությունը: Ընտրված կոնցեպցիան պայմանավորում է նաեւ ինդիկատորների ու ցուցանիշների ընտրությունը: Օրինակ, եթէ ԱՅՌԾՆ նպատակաուղղված է ինչպէս խրոնիկական, այնպէս էլ ժամանակավոր աղքատության կրճատմանը, ապա հարկ կլինի մշակել միջոցառումների ու ծրագրերի երկու խումբ, ուստի կարիք կլինի ունենալ նաեւ ցուցանիշների երկու խումբ:

Բացարձակ եւ հարաբերական աղքատություն

Բացարձակ աղքատությունը վերաբերում է սոցիալապէս ընդունելի նվազագույն կենսապայմաններից ցածր մակարդակում գտնվելուն եւ սովորաբար նկատի է առնում սննդով եւ այլ անհրաժեշտ ապրանքներով ապահովված չլինելը:

Հարաբերական աղքատություն ասելով նկատի է առնվում նվազագույն կենսապայմաններ ունեցողների եւ առավել ապահովվածների կենսամակարդակների տարբերությունը: Պետք է նկատել, որ հարաբերական եւ բացարձակ աղքատությունները կարող են զարգանալ հակադարձ ուղղություններով: Օրինակ, հարաբերական աղքատությունը կարող է նվազել բացարձակ աղքատության աճի պարագայում, եթէ հարուստների կենսապայմանները վատթարանան, անգամ այն դեպքում, երբ ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ են ընկնում աղքատության գծից ցած:

Բացարձակ աղքատության շրջանակներում տարբերակում են, այսպէս կոչված,

ընդհանուր աղքատությունն ու ծայրահեղ աղքատությունը: Առաջինի տակ հասկանում են «աղքատության գծից» ցածր մակարդակի վրա գտնվելը, մինչդեռ երկրորդը բնորոշում է գոյատևման համար նվազագույն պայմանների անհասանելիությունը: Տնային տնտեսությունները, որոնք ի վիճակի չեն ձեռք բերել գոյատևման համար անհրաժեշտ սննդի զանյուղի նվազագույնը, բացարձակ աղքատ են: Մյուս կողմից, այդ զանյուղի կազմն ու արժեքը կարող է էականորեն տատանվել տարբեր խմբերի, տարածաշրջանների եւ երկրների տնային տնտեսությունների միջև: Բացարձակ եւ հարաբերական աղքատությունը կախված են նաեւ հանգամանքների փոփոխությունից: Այսպես, եթե գներն աճում են եկամուտներից արագ, ապա հարաբերականորեն աղքատ տնային տնտեսությունների մի մասը կարող է հայտնվել փաստացի բացարձակ աղքատության վիճակում՝ սակայն առանց կարգավիճակի փոփոխության, քանի որ համարժեքորեն կվատթարանան նաեւ բացարձակ աղքատների կենսապայմանները:

Սովորաբար, բացարձակ աղքատության կրճատումը դիտարկվում է որպես առավել կարելու խնդիր, որովհետեւ առնչվում է մարդու ֆիզիկական գոյության եւ նմանատիպ խնդիրներին: Այդուհանդերձ, հարաբերական աղքատության կրճատմանն ուղղված միջոցառումները նույնպես չպետք է թերագնահատել, քանի որ դրանք նույնպես նպաստում են բացարձակ աղքատության հաղթահարմանը: Ավելին, որոշ մեթոդաբաններ մերժում են բացարձակ աղքատության կոնցեպցիան, պնդելով, որ պետք է ձգտել հարաբերական աղքատության վերացմանը, ելնելով նրանից, որ «նվազագույն» զանյուղի սահմանումը ենթադրում է որոշակի բարիքների սահմանում որպես էականորեն անհրաժեշտ մնացած ամբողջ հասարակության, բայց ոչ աղքատների համար:

Օբյեկտիվ եւ սուբյեկտիվ աղքատություն

Աղքատությունը կարող է տարբերակվել նաեւ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ տեսանկյուններից: Առաջինի հիմքը դատողությունն է այն մասին, թե ինչ է աղքատությունը եւ ինչ է պետք անել՝ մարդկանց այդ վիճակից դուրս բերելու համար: Երկրորդ մոտեցումը շեշտադրում է ապրանքների եւ ծառայությունների նկատմամբ մարդկանց ունեցած նախասիրությունները:

Ֆիզիոլոգիական եւ սոցիալական գրկանքներ

Աղքատության տեսությունները տարբերվում են նաեւ աղքատության պատճառների մեկնաբանությամբ, կարելուրագույնը համարելով կամ ֆիզիոլոգիական կամ էլ սոցիոլոգիական խնդիրները: Առաջինի տրամաբանությունը հետեւյալն է. մարդիկ աղքատ են, որովհետեւ նրանք չունեն եկամուտ, սնունդ, հագուստ եւ տանիք: Ինչպես եկամուտների, այնպես էլ նվազագույն կարիքների վրա հիմնված տեսությունները պատկանում են տեսությունների այս խմբին: Հետեւաբար, այս տեսությունների առաջարկած՝ աղքատությունը նվազեցնելու ստրատեգիաները կենտրոնանում են աղքատների եկամուտների եւ սպառման ավելացման վրա: Աղքատությունը որպես սոցիալական բնույթի խնդիրների հետեւանք հանդիսացող երեւույթ ներկայացնող տեսությունները շեշտադրում են կառուցվածքային բնույթի հիմնախնդիրները: Այսպես, դրանք մատնանշում են, որ եթե անգամ միջոցներն ուղղվում են դեպի աղքատները, վերջիններս ի վիճակի չեն դրանք լիովին տնօրինելու կառուցվածքային բնույթի հիմնախնդիրների պատճառով, որոնք սահմանափակում են վերջիններիս համար բազմաբնույթ ակտիվների՝ հողի, վարկի, բնական ռեսուրսների, առողջապահության, կրթության եւ այլնի հասանելիությունը: Այսպիսով, համաձայն այս մոտեցման, աղքատությունը հետեւանք է անարդյունավետ կառավարման, ինչպես նաեւ մակրոքաղաքականության եւ բաշխման համակարգերի մեջ տեղ գտած անհամաչափությունների: Հաջորդ տեսությունը՝ մարդուն զորացնելու շնորհիվ աղքատության հաղթահարման տեսակետը առնչվում է ինչպես ֆիզիոլոգիական,

այնպես էլ սոցիալական տեսություններին: Համաձայն այս մոտեցման, աղքատությունը ոչ միայն այն վիճակն է, որում մարդը գտնվում է, այլև իրական հնարավորության պակասը՝ պայմանավորված ինչպես սոցիալական, այնպես էլ անձնական հանգամանքներով: «Մարդու զորացման» տեսության կիզակետում աղքատներին հասարակական կյանքին մասնակից դարձնել, սոցիալտնտեսական սանդղահարթակում նրանց առաջխաղացմանը նպաստելն է:

Աղքատությանն առնչվող այլ հասկացություններ

Աղքատության հիմնախնդրին առնչվում են ինչպես եկամուտների, այնպես էլ բաշխման խնդիրները: Աղքատությունն արտահայտություն է միջոցների բացակայության եւ կարող է արտահայտվել տարբեր ցուցանիշների միջոցով, ինչպիսիք են եկամուտները, նվազագույն կարիքները եւ այլն: Մյուս կողմից, «հավասարության» (equity) խնդիրներն առնչվում են միջոցների բաշխմանը որոշակի խմբերի ներսում: Չնայած այս երկու մոտեցումների ակնհայտ տարբեր մեկնակետերին, աղքատության վերլուծության ժամանակ հաճախ անդրադառնում են նաեւ «հավասարության» ինդիկատորներին՝ երկուսի միջեւ ակնհայտ կապի պատճառով: Ավելին, ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, որոշակի երկրների դեպքում աղքատությունն ավելի հեշտ է հաղթահարել համեմատաբար հավասար բաշխման պայմանների առկայության դեպքում:

Աղքատության եւ հավասարության ինդիկատորների կապը կարելի է ստանալ տարբեր մեթոդներով, ինչպես օրինակ՝ բաշխման ցուցանիշները կապելով աղքատության այլ ցուցանիշների հետ (օրինակ, մեկ շնչին ընկնող եկամուտը եւ Լորենցի կորը), կամ մաթեմատիկական բանաձեւերով (ինչպիսին է Ատկինսոնի մեթոդը):

Աղքատությանը սերտորեն առնչվող մեկ այլ հասկացություն է անպաշտպանությունը: Որոշ խմբեր կարող են հայտնվել աղքատության վիճակում իրենց անպաշտպան լինելու պատճառով, սակայն այդ խմբերի ոչ բոլոր անդամներն են անպայմանորեն աղքատ: Եթե աղքատությունը զրկված լինելու արտահայտություն է, ապա անպաշտպանվածությունը ֆունկցիա է արտաքին ռիսկերի ու ցնցումների եւ ներքին անպաշտպանվածության: Աղքատության եւ անպաշտպանվածության միջեւ եղած ուժեղ կորելացիան հիմք է տալիս մասնագետներին՝ օգտագործելու երկրորդը՝ որպես առաջինի մոտավորում: Այդուհանդերձ, դա պահանջում է մանրակրկիտ վերլուծություն՝ գտնելու համար այդ երկու կատեգորիաների միջեւ առկա կորելացիոն կապը, ինչպես նաեւ ենթադրում է հաճախակի ստուգումներ ժամանակի ընթացքում՝ համոզվելու համար այդ կապի արժանահավատության մեջ:

Աղքատությանն ուղղակիորեն առնչվող մեկ այլ հասկացություն է սոցիալական զրկվածությունը (social exclusion), թեւ տեսաբանների կարծիքն այս հարցում զանազանվում է: Տեսաբանների մի մասը սոցիալական զրկվածությունը (կամ մարդկանց զրկված լինելը՝ լիարժեքորեն մասնակցելու հասարակական կյանքին ու դրա զարգացմանը) դիտարկում է աղքատության ենթատեքստում, մինչդեռ մյուսները դիտարկում են սոցիալական զրկվածությունը որպես բազմաթիվ հիմնախնդիրների, այդ թվում՝ աղքատության համակցություն:

Վերջապես, աղքատությունը կապված է նաեւ թերզարգացածությանը: Աղքատությունը հաճախ դիտարկվում է որպես թերզարգացածության արտահայտություն: 1997թ. Մարդկային զարգացման զեկույցը տարբերակում է այս երկու հասկացությունները՝ կապելով առաջինը անհատների եւ երկրորդը՝ անհատների համախմբի (հասարակության) հետ: Այստեղից բխում են աղքատության հիմնախնդրի նկատմամբ տարբեր մոտեցումները: Մի տեսակետը կենտրոնանում է հասարակության բոլոր խմբերի (ինչպես

հարուստների, այնպես էլ աղքատների) արձանագրած առաջընթացի վրա: Մյուս տեսակետի էությունն այն է, որ աղքատների դրությունը չի կարող լավանալ հարուստների արձանագրած առաջընթացի հաշվին, ուստի զարգացումը պետք է գնահատել՝ ելնելով տվյալ հասարակությունում աղքատների վիճակի բարելավումից: Աղքատության եւ թերզարգացվածության կապով է պայմանավորված այս երեւույթների գնահատման համար միեւնույն ցուցանիշների կիրառումը:

Աղքատության գնահատումը

Աղքատության գնահատման համար կիրառվող ցուցանիշների ամբողջ բազմազանությունը կարելի է դասակարգել միջոցների/արդյունքների (means/ends) ցուցանիշների, ինչպես նաեւ քանակական/որակական ցուցանիշների:

Միջոցները բնորոշող ցուցանիշները մուտքային, իսկ արդյունքային ցուցանիշները՝ ելքային ցուցանիշներն են: Օրինակ, սննդամթերքի նվազագույն զանրյուղի արժեքը միջոց, մինչդեռ, ասենք վիտամինային անբավարարության ինդեքսը՝ արդյունքային ցուցանիշ է: Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ որեւէ արդյունք ամբողջապես կախված չէ միմիայն համապատասխան միջոցից:

Սովորաբար, աղքատությունը բնորոշվել է «մուտքային» ցուցանիշների միջոցով (որպես արդյունքների մոտավորումներ), որոնց մեջ գերակշռում են դրամական արտահայտություն ունեցող ցուցանիշները: Դրանք ունեն մի շարք առավելություններ. բազմազան են, որոշ դեպքերում արդյունքային ցուցանիշներից ավելի էժան, հեշտ մոնիտորինգի ենթարկվող եւ այլն: Այդուհանդերձ, ներկայումս միտում կա օգտագործելու նաեւ արդյունքային ցուցանիշները, ինչպիսին է, օրինակ, 1997թ. Մարդկային զարգացման զեկույցում օգտագործված Մարդկային աղքատության ինդեքսը (HPI). Հարկ է նշել, սակայն, որ չնայած արդյունքային ցուցանիշներն ավելի սերտորեն են կապված հիմնախնդրի հետ, դրանք նվազ կիրառելի են աղքատության կարճաժամկետ եւ միջին ժամկետ մոնիտորինգի տեսանկյունից:

Ցուցանիշների այս երկու տեսակների առավելություններն ու թերությունները, ինչպես նաեւ ԱՀՌԾ նպատակներն ու տվյալների հասանելիությունը հաշվի առնելով, հարկ է կիրառել ինչպես միջոցներին, այնպես էլ արդյունքներին վերագրվող ցուցանիշները:

Աղքատությունը բնորոշող քանակական ցուցանիշները կարող են ագրեգացվել ի տարբերություն որակական ցուցանիշների: Մյուս կողմից որակական ցուցանիշներն ի վիճակի են ներկայացնել իրականության ավելի ճշգրիտ պատկերը, ի տարբերություն քանակական ցուցանիշների: Աղքատությունն ըստ եկամուտների բնորոշող, ինչպես նաեւ նվազագույն կարիքների վրա հիմնված կոնցեպցիաները գերազանցապես հիմնված են քանակական ցուցանիշների վրա (չնայած կարող են օգտագործվել նաեւ որակական ցուցանիշներ՝ պարզելու համար, օրինակ, ծառայությունների որակի վերաբերյալ մարդկանց կարծիքը): Անհատին զորացնելու կոնցեպցիան, մյուս կողմից, կիրառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշներ՝ նախապատվությունը տալով վերջիններիս:

Աղքատության առավել հիմնովին գնահատման եւ մոնիտորինգի նպատակով հարկ է կիրառել ցուցանիշների՝ թվարկված բոլոր տեսակները:

Ցուցանիշների խմբերը

Աղքատությունը բնորոշող ցուցանիշները կարելի է դասակարգել նաեւ ըստ երեւույթի

նկատմամբ առկա տարբեր սկզբունքային մոտեցումների: Ըստ այդմ, ցուցանիշները կարելի է դասակարգել որպես եկամուտների վրա հիմնված ցուցանիշների, նվազագույն կարիքների վրա հիմնված ցուցանիշների, ցուցանիշների, որոնք բնորոշում են անհատի զորացումը, ինչպես նաև այդ զորացմանը նպաստող միջավայրը բնորոշող ցուցանիշների:

Աղքատությունը բնորոշող ցուցանիշների շարքում կենտրոնական տեղ ունեն եկամուտների վրա հիմնված ցուցանիշները: Աղքատության գնահատման այս ցուցանիշները խարսխված են այն մոտեցման վրա, որ անհատները եւ տնային տնտեսությունները (ընտանիքները) աղքատ են, եթե նրանց եկամուտները կամ սպառումը ցածր է հասարակության կողմից սոցիալապես ընդունելի նվազագույն կենսամակարդակից: Այս մոտեցման դեպքում շեշտը դրվում է նյութական բարեկեցության վրա:

Եկամուտների վրա հիմնված ցուցանիշներից ամենատարածվածներն են headcount գործակիցը եւ մեկ շնչին ընկնող Ազգային համախառն արդյունքը: Առաջինը հիմնված է աղքատության գծի (կամ գծերի) վրա եւ հաշվարկվում է գոյատեւման համար անհրաժեշտ ապրանքների նվազագույն զանբյուրի գնահատման հիման վրա՝ օգտագործելով ոչ աղքատ տնային տնտեսությունների եկամուտների, սպառման եւ ծախսումների վերաբերյալ տվյալները: Աղքատության մակարդակն այնուհետեւ գնահատվում է որպես այդ մակարդակից ցածր գտնվող բնակչության տոկոսաբաժին:

Եկամուտային ինդիկատորները կարող են օգտագործվել նաև աղքատության խորության եւ ինտենսիվության գնահատման համար: Աղքատության խորության ինդեքսը (poverty gap index) արտահայտում է աղքատների միջին եկամտի եւ աղքատության գծի միջեւ եղած տարբերությունը (աղքատության խորությունը): Այդ ինդեքսի քառակուսի աստիճանը (squared poverty gap index) արտահայտում է աղքատների եկամուտների մակարդակների տարբերությունը (աղքատության ինտենսիվությունը):

Տնային տնտեսությունների վերաբերյալ տվյալների բացակայության դեպքում աղքատությունը հաճախ չափվում է մեկ շնչին ընկնող Ազգային համախառն արդյունքի միջոցով: Այդուհանդերձ, դա աղքատության գնահատման շատ մոտավոր եղանակ է, եւ կարող է անգամ ապակողմնորոշել, քանի որ այս ցուցանիշը կարող է աճել անգամ այն պարագայում, երբ հասարակության աղքատ շերտերի եկամուտները նվազում են: Այս պատճառով մեկ շնչին ընկնող անհատական եկամուտն ավելի գերադասելի ցուցանիշ է:

Չնայած տեսաբաններն ընդունում են եկամուտների մեթոդի թերությունները (ինչպես օրինակ գների տարբերությունները, ոչ դրամային տարրերի՝ ձրի ապրանքների ու ծառայությունների չներառելը եւ այլն), այս մեթոդը հանդիսանում է ամենատարածվածը, մասամբ՝ տվյալների անհամեմատ հեշտ հասանելիության եւ մասամբ էլ հեշտության շնորհիվ:

Նվազագույն կարիքների կոնցեպցիան մեկ քայլ առաջ է տանում եկամուտների վրա հիմնված մոտեցումները: Այն բնորոշում է աղքատությունը որպես նվազագույն մարդկային կարիքների տեսանկյունից էական պահանջումների չբավարարում՝ հաշվի առնելով ինչպես մասնավոր եկամուտները, այնպես էլ հասարակայնորեն հասանելի ապրանքներն ու ծառայությունները (ոչ դրամային եկամուտը): Այն ներառում է այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են սննդի, ծածկի, առողջապահական ծառայությունների, խմելու ջրի հասանելիությունը, աշխատելու հնարավորությունը, հասարակական կյանքին մասնակցելու հնարավորությունը: Այս խմբի ցուցանիշները թույլ են տալիս հաղթահարել նաև եկամուտների վրա հիմնված ցուցանիշների այլ թերություններ: Այսպես, բնակարանների ու տրանսպորտային ծախսերի աճը նվազագույն կարիքների

ինդիկատորները կսահմանեն որպես բարեկեցության անկում, մինչդեռ մեկ շնչին ընկնող Ազգային համախառն արդյունքի տեսանկյունից դրանք կարձանագրվեն որպես բարեկեցության աճ: Այդուհանդերձ, այս խմբի ցուցանիշները նույնպես անթերի չեն. դրանց գլխավոր թերությունը դրանք ընդհանրացնելու անհնարինությունն է:

Աղքատության գնահատման մեկ այլ մոտեցում՝ աղքատության գնահատումը մարդու հնարավորությունների տեսանկյունից, բնորոշում է այս երեւոյթը որպես հասարակության մեջ նվազագույն ընդունելի հնարավորություններով գործելու՝ մարդու անկարողություն: Ցուցանիշները ներառում են կյանքի տևողությունը, գրագիտության մակարդակը: Այս ցուցանիշների առավելությունը դրանց արդյունքային բնույթն է, ինչպես նաեւ, մեծավ մասամբ, տվյալների առկայությունը:

Թերությունները նույնն են, ինչ որ մյուս արդյունքային ցուցանիշներինը. դրանք կարճաժամկետ տեսահորիզոնում դանդաղ են փոխվում, ուստի եւ կիրառելի չեն կարճաժամկետ եւ միջին ժամկետ մոնիտորինգի համար:

Թվարկված խմբերից բացի, ցուցանիշների մի այլ խումբ բնորոշում է աղքատության այլ, բոլորովին վերջերս տեսաբանների ուշադրության կենտրոնում հայտնված հայտանիշներ: Այդպիսիք են աղքատների համար արտադրական ակտիվների (օրինակ՝ հողի, կապիտալի) հասանելիությունը, սոցիալական եւ ֆիզիկական ենթակառուցվածքների հասանելիությունը, բնակարանների եւ այլ նյութական բարիքների հասանելիությունը եւ այլն: Պակաս կարելու չեն նաեւ անհավասարության ցուցանիշները, որոնք ներառում են եկամուտների բաշխմանը վերաբերող ցուցանիշները, ինչպիսին է, օրինակ, Ջինի գործակիցը:¹

Կառավարմանն առնչվող ինդիկատորներն առնչվում են մի ամբողջ շարք խնդիրների, որոնցից շատերը սովորաբար չեն դիտարկվել աղքատության ենթատեքստում: Այդ խնդիրներից, թերեւս, աղքատությանն ամենաուղղակիորեն առնչվողներից են տեղեկատվության հասանելիությունը, ինստիտուցիոնալ կարգավորման մակարդակը, ապակենտրոնացումը: Պետք է նշել, որ խնդիրների այս համախումբը ազդեցություն ունի հասարակության ավելի լայն շերտերի վրա, ուստի հարկավոր է խնդիրների դիտարկման ժամանակ մնալ աղքատության համատեքստում:

Կառավարմանն առնչվող ցուցանիշների առաջին խումբը (օր. 1000 մարդուն բաժին ընկնող թերթերի քանակը), թեւ ընդհանուր պատկեր է տալիս տեղեկատվության հասանելիության վերաբերյալ, այդուհանդերձ, չի արտահայտում այդ տեղեկատվության որակը: Օրինակ, հնարավոր է ունենալ 1000 մարդու հաշվարկով թերթերի մեծ թվաքանակ, սակայն եթե դրանք բոլորը վերահսկվում են մեկ կուսակցության կողմից, ապա անաչառ տեղեկատվության հասանելիության մասին դժվար է խոսել: Ինստիտուցիոնալ ինդիկատորները, ինչպես օրինակ շահերի պաշտպանությամբ զբաղվող գրանցված հասարակական կազմակերպությունները, կարող են վկայել շփումների ազատության մասին: Մյուս կողմից այդ թվերը պետք է զգուշորեն մեկնաբանել, որովհետեւ ՅԿների թիվը կարող է հակադարձ կորելիացիա ունենալ կառավարության ցանկությանը՝ զբաղվելու աղքատության հաղթահարման խնդրով: Ապակենտրոնացման ինդիկատորները (օր. ազգային եկամտի՝ տեղական բյուջեներին հատկացվող մասը) նույնպես հարկ է զգուշորեն մեկնաբանել, քանի որ ապակենտրոնացումը, եթե բավարար չափով չի կշռադատված, կարող է լրացուցիչ անարդյունավետություն հաղորդել հասարակական կառավարմանը: Ուստի ապակենտրոնացման ինդիկատորները, տեղական հզոր կառավարման մարմինների եւ աղքատության հիմնահարցերին առավել արդյունավետ լուծումներ տալու հնարավորության մասին վկայելուց բացի, որոշ դեպքերում, կարող են պարզապես քողարկել ադմինիստրատիվ անարդյունավետության բազմաթիվ շերտերը:

Ցուցանիշների ընտրությունը

Աղքատության տարբեր դեպքերը ենթադրում են տարբեր պատճառահետեւանքային կապեր եւ ասոցացված են ինդիկատորների որոշակի խմբերի հետ, որոնք կիրառվում են վերլուծության մեջ եւ ազդում աղքատության հաղթահարման քաղաքականության մշակման վրա:

Չնայած բոլոր մասնագետներն ընդունում են, որ աղքատությունը բազմազործոնային երեւոյթ է, այդուհանդերձ, աղքատության չափման ինդիկատորների ընտրության հարցում միտում կա հիմնվել եկամտային ինդիկատորների վրա: Պատճառը եկամուտների համեմատական որոշակիությունն ու մյուս ցուցանիշների նվազ չափելիությունն է: Սա է պատճառը, որ տարբեր երկրներում ԱՀՌ ծրագրերի առանցքում ընկած են եկամուտները՝ սոցալական ինդիկատորների վրա որոշ հղում կատարելով: Մյուս կողմից, չնայած որ աղքատության ավելի լայն, մարդու հնարավորությունները ներառող կոնցեպցիաները ավելի բարդ են, այդուհանդերձ հանգում են ավելի ընդգրկուն ծրագրի կազմմանը եւ տեսականորեն ունեն ավելի բարձր արդյունքներ ապահովելու հնարավորություն:

Շատ հաճախ, աղքատությունը բնորոշող ցուցանիշները շփոթում են աղքատության երեւոյթի հետ, ընդ որում, որքան լայն է աղքատության բնորոշման ընդգրկումությունը, այնքան մեծ է այս սխալի հավանականությունը: Պետք է նկատի ունենալ, որ գոյություն չունի ցուցանիշների այնպիսի համակարգ, որը, բոլոր երկրների եւ բոլոր դեպքերի համար, ընդգրկում է երեւոյթի բոլոր կողմերը:

Աղքատության ցուցանիշների ընտրության համար հարկավոր է պատասխանել այն հարցին, թե ո՞ր աղքատության կրճատման մասին է խոսքը. խրոնիկակա՞ն, ժամանակավոր՞, բացարձա՞կ, թե՞ հարաբերական, ինչպէս նաեւ՝ ո՞ր մակարդակում՝ ազգայի՞ն, տարածաշրջանայի՞ն, համայնքայի՞ն, թե՞ տնային տնտեսության: Ցուցանիշների ընտրության համար կարելու է նաեւ, թե հատկապէս ինչ նպատակի համար են ծառայելու դրանք՝ աղքատության քարտեզագրման, մոնիտորինգի, քաղաքականության ձեւավորման, թե այլ: Օրինակ, եթե նպատակը երկրի մակարդակով խրոնիկական աղքատության գնահատումն է մարդկային զարգացման ընդհանուր տեսանկյունից՝ աղքատության կրճատման ծրագրերի մոնիտորինգի եւ բյուջետային հատկացումների նպատակով, ապա ցուցանիշների համակարգը կընդգրկի մարդկային զրկանքները, եկամուտների մակարդակը, ակտիվների եւ սոցիալական ծառայությունների հասանելիությունը բնորոշող ցուցանիշներ: Եթե նպատակը որոշակի տարածաշրջանի բացարձակ աղքատության գնահատումն է՝ ծրագրի կառուցման եւ մոնիտորինգի համար, ապա կկիրառվեն ավելի մասնակի ցուցանիշներ:

Աղքատության ընդգրկում պատկերը ստանալու համար հարկ է լինում կիրառել բազմաթիվ ցուցանիշներ: Դա կարող է հանգեցնել որոշակի խնդիրների՝ քաղաքականության տեսանկյունից: Օրինակ, ինչպէ՞ս վարվել, երբ եկամտային ցուցանիշները արձանագրում են աղքատության աճ, իսկ մարդկային զարգացման ցուցանիշները՝ աղքատության նվազում: Ո՞րն է աղքատության իրական պատկերն այս դեպքում: Որպէս լուծում կարելի է հրաժարվել ընդհանրական գնահատականներից՝ քաղաքականություն մշակելով ցուցանիշների յուրաքանչյուր խմբի գծով: Այդպիսի մոտեցումը, բնականաբար, կհանգեցնի աղքատության տարբեր դրսեւորումների հաղթահարման համար գերակայությունների որոշման եւ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար որոշակի մոտեցումների կիրառման անհրաժեշտության: Ամեն դեպքում հարկ է նկատի ունենալ, որ ԱՀՌԾ մոնիտորինգի նպատակով նպատակահարմար չէ կոմբինացնել ցուցանիշները՝ հավաքական ցուցանիշներով բնորոշելով այս կամ այն երեւոյթը: Մյուս կողմից՝ նպատակահարմար չէ նաեւ ցուցանիշների չափից ավելի մեծ բազմություն ունենալը:

Հարկ է նկատի առնել նաեւ, որ ինչքան ճշգրիտ են ցուցանիշները, այնքան թանկ է դրանց մշակումը: Մյուս կողմից՝ քիչ ծախսումներ պահանջող ցուցանիշները միտում ունեն մոտավոր լինելու:

Նպատակային ցուցանիշները

Նպատակային ցուցանիշը այն արժեքն է, որին տվյալ ցուցանիշը պետք է հասնի մինչեւ որոշակի ժամանակահատված (ինչպես օրինակ՝ մինչեւ 2015 թ. աղքատությունը կիսով չափ նվազեցնել): Արժե նշել, որ նպատակները պետք է հնարավորինս իրատեսական լինեն. չպետք է լինեն չափից ավելի դժվար կամ չափից ավելի հեշտ հասանելի: Այլ կերպ ասած, դրանք պետք է տեխնիկապես եւ ֆինանսապես իրագործելի լինեն: Պետք է նշել նաեւ, որ չափից ավելի մեծ թվով նպատակային ցուցանիշների առկայությունը կարող է թուլացնել դրանց նշանակալիությունը առանձին վերցրած: Պետք է կարողանալ նաեւ գնահատել նպատակների իրագործման համար անհրաժեշտ միջոցները:

Նպատակային ցուցանիշներ պետք է սահմանվեն ԱՅՈԾ իրագործման բոլոր փուլերի համար: Այդ ցուցանիշները կարելի է դասել չորս խմբի՝ մուտքային, ելքային, արդյունքային եւ ազդեցությունը բնորոշող: Առաջին երկուսը բնորոշում են ծրագրի իրագործման ընթացքը, մինչդեռ վերջին երկուսը՝ այդ ծրագրի արդյունքները (քանի որ ծրագիրը գնահատվելու է համաձայն արդյունքների, վերջին երկու խումբ ցուցանիշներն առավել կարելուվում են): Հետեւյալ պատկերը ներկայացնում է ցուցանիշների՝ բերված դասակարգումը:

Ընդհանուր առմամբ, նպատակային այն ցուցանիշները, որոնք բնորոշում են ծրագրի արդյունքներն ու ազդեցությունը, նպատակահարմար է սահմանել միջակայքերի, այլ ոչ նպատակային կետերի ձեւով, ի տարբերություն մուտքային եւ ելքային ցուցանիշների, որոնք հարկ է սահմանել որոշակի թվերով:

1 Այստեղ թերեւս հարկ է նշել, որ Ջինի գործակցին հատուկ են նույն թերությունները, ինչ որ հատուկ են մեկ շնչին ընկնող Ազգային համախառն արդյունքի ցուցանիշին: Այսպես, Ջինի գործակցի անփոփոխ լինելը դեռ չի վկայում աղքատության հիմնախնդրի անփոփոխության մասին:

ԱՆՌԾ. Ամփոփ ծրագրի մշակման գործընթաց



ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱԴԹԱՀԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԾՐԱԳԻ

Մասնակցության Գործընթաց

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐ

7 ՀԱՐՑ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ

- Ի՞նչ է ենթադրում առողջապահության բնագավառի բարեփոխումները
- Ինչպիսի՞ ծառայություններ է ներառում պետպատվերը
- Ի՞նչ պետք է հասկանալ «վճարովի բուժօժանայություններ» ասելով
- Ի՞նչ է բժշկական ապահովագրությունը
- Որո՞նք են ընտանեկան բժշկի դերն ու խնդիրները
- Ի՞նչ տեղ է հատկացված բուժօգնության որակի ապահովմանը
- Ի՞նչ կերպ է տրամադրվում դեղորայքը

Ինչ են ենթադրում առողջապահության բնագավառի բարեփոխումները

Առողջապահության բարեփոխումները, որպես կանոն, դիտարկվում են ընկալվում են ոչ որպես մեկ ամբողջություն, այլ որպես տարբեր միջոցառումների փաթեթ, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է առանձին գնահատական: Առողջապահության համակարգի բարեփոխումների հիմնական տարրեր են հանդիսանում.

1. գործընթաց.

- կառուցվածքային վերափոխումները՝ փոփոխելով կամ էվոլյուցիոն փոփոխությունների փոխարեն,
- առողջապահության ոլորտում քաղաքականության նպատակների վերանայումը՝ հետագա ինստիտուցիոնալ փոփոխություններով,
- շարունակական, երկարաժամկետ եւ նպատակաուղղված միջոցառումների իրականացումը
- քաղաքական գործընթացը վերելից ներքեւ հանրապետական եւ տեղական իշխանությունների ղեկավարությամբ,

2. բովանդակություն

- ձեռնարկվող միջոցառումների բազմազանությունը,
- տարբեր երկրների առողջապահության համակարգին բնորոշ առանձնահատկությունների որոշումը:

Բարեփոխումների իրականացման գաղափարախոսության իրականացումը նպատակաուղղված է այնպիսի համընդհանուր արժեքների կայացման ապահովմանը, ինչպիսիք են

- բնակչության համար բուժօգնություն ստանալու հավասարությունը, արդարությունը, մատչելիությունը,

- բժշկական օգնության որակի ապահովումը,

- առողջության պահպանման գործում կառավարության եւ անհատների նոր դերի սահմանումը, այդ գործընթացում պատասխանատվությունների տարանջատումը,

- ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը եւ լրացուցիչ միջոցների ընդգրկումը:

Առողջապահության ոլորտի բարեփոխումները առանձնահատուկ բնորոշում եւ նշանակություն ունեն անցումային շրջանում գտնվող երկրներում:

Մինչեւ 90-ական թվականները Հայաստանում գործում էր խորհրդային առողջապահական համակարգը, որը, մի շարք առավելությունների հետ միաժամանակ, ուներ նաեւ այնպիսի թերություններ, ինչպիսիք են պետական կենտրոնացված, ուղղահայաց կառավարումը եւ ֆինանսավորումը, շեշտադրումը հիվանդությունների բուժմանը, քան կանխարգելմանը, ոււճացված առողջապահական համակարգը, եւ արդյունքում ռեսուրսների անհամաչափ բաշխումն ու անարդյունավետ օգտագործումը, տնտեսական խթանների բացակայությունը, առողջապահության միադբյուր (պետական բյուջե) եւ «մնացորդային» ֆինանսավորումը եւ այլն:

Անկախության առաջին իսկ տարիներին հանրապետությունում ընդհանուր տնտեսական բարեփոխումների իրականացման պայմաններում ՀՀ առողջապահության նախարարությունը ձեռնամուխ եղավ մշակելու, ուրվագծելու եւ իրականացնելու համակարգի բարեփոխումների եւ զարգացման հիմնական ուղղությունները (կառավարման համակարգ, ցանցի կառուցվածք, ապապետականացում, ֆինանսավորման համակարգ, ԱԱՊ մակարդակ եւ այլն): Գործընթացի հիմնական նպատակն է նոր տնտեսակարգի միջավայրում կենսունակ եւ արդյունավետ առողջապահության համակարգի ձեւավորման եւ զարգացման հիմքերը դնելն ու, հետեւաբար, այն նպատակաուղղելը բնակչության առողջության պահպանմանն ու բարելավմանը:

Ընթացիկ ժամանակաշրջանում առողջապահության համակարգի զարգացման շարունակական քաղաքականության համատեքստում ռազմավարական գործընթացները ամրագրվել են մի շարք հայեցակարգային փաստաթղթերում: Մասնավորապես հատկանշական են 2000-2001թթ. ՀՀ կառավարության կողմից ընդունված առողջապահական հաստատությունների մասնավորեցման ռազմավարության, բժշկական ապահովագրության ներդրման եւ առողջապահության համակարգի օպտիմալացման հայեցակարգերը: Բժշկական օգնության արդյունավետության բարձրացման, առողջապահության ոլորտում քաղաքացիների իրավունքների իրացման ապահովման նպատակով ներկայացման փուլում է բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության որակի կառավարման եւ բարելավման հայեցակարգը:

Ներկայումս համակողմանի աշխատանքներ են տարվում առողջապահության ոլորտի օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ: Մասնավորապես ներկայացման փուլում է գտնվում առողջապահության ոլորտի գործունեությունը կանոնակարգող հիմնական

իրավական փաստաթղթի՝ «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ինչպիսի՞ ծառայություններ է ներառում պետպատվերը

Հայաստանում աղքատության նվազեցման խնդրում կարելու դեր է խաղում բնակչության իրազեկությունը պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության տեսակների եւ ծավալների, ինչպես նաեւ վճարովի բուժօգնության վերաբերյալ:

Պետպատվերի շրջանակներում իրականացվող բուժօժանդակությունները իրենց մեջ ներառում են.

1. հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում

սոցիալապես հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժումը բնակչության բոլոր խավերի համար (ինֆեկցիոն, հոգեկան, նարկոլոգիական, տուբերկուլյոզային հիվանդություններ)

սոցիալապես անապահով եւ առանձին խմբերում ընդգրկված մարդկանց բուժօգնությունը

մինչեւ 7 տարեկան երեխաների բուժօգնությունը

ծննդաբերության հետ կապված բուժօգնությունը

վերակենդանացման եւ անհետաձգելի բժշկական միջամտություններ պահանջող վիճակները

հեմոդիալիզի անցկացումը

զորակոչային տարիքի անձանց բուժումը՝ զինկոմիսարիատի ուղեգրումով

դատափորձաքննության փորձագետի կողմից ուղեգրված անձինք:

2. Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության շրջանակներում

մեծահասակ ազգաբնակչության համար տեղամասային թերապեւտի կողմից իրականացվող բուժօգնության ամբողջ ծավալն ազգաբնակչության համար՝ անկախ այցելությունների թվից, իսկ հաշմանդամների համար՝ տնային կանչերը

բնակչության բոլոր խավերի համար ինֆեկցիոն, հակատուբերկուլյոզային, օնկոլոգիական, հոգեբուժական, նարկոլոգիական, մաշկավեներաբանական կաթինետների մասնագետների ընդունելությունը

մնացած բոլոր նեղ մասնագետների կողմից պետպատվերի շրջանակներում ընդունվում են սոցիալապես անապահով եւ առանձին խմբերում ընդգրկված անձինք՝ անպայման տեղամասային թերապեւտի ուղեգրով

հղիների ընդունելությունը նեղ մասնագետների կողմից՝ տեղամասային մանկաբարձգինեկոլոգի ուղեգրով:

տեղամասային թերապեւտի եւ նեղ մասնագետների կողմից անհետաձգելի ամբուլատոր բուժօգնությունը բնակչության բոլոր խավերի համար:

նախազորակոչային եւ զորակոչային տարիքի անձանց բժշկական զննումը եւ լաբորատոր գործիքային ախտորոշիչ հետազոտությունները:

բժշկական ցուցումների առկայության դեպքում սոցիալապես անապահով եւ առանձին խմբերում ընդգրկված անձանց համար լաբորատոր գործիքային ախտորոշիչ հետազոտությունները՝ առանց ծավալների սահմանափակման:

հանրապետության ողջ տարածքում արտահիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնությունը շտապ օգնության կանչերի միջոցով, որոնք իրականացվում են նեղ մասնագիտացված, ընդհանուր բժշկական, ֆելդշերական բրիգադների, ինչպես նաեւ սանիտարական ավիացիայի միջոցով:

դատաբժշկական փորձագետի կողմից ուղեգրված անձինք:

Հիվանդը պետպատվերի շրջանակներում բուժօգնությունից օգտվելու համար պետք

է ունենա տեղամասային պոլիկլինիկայի տնօրենի կողմից հաստատված ուղեգիր եւ սոցիալական վիճակի վերաբերյալ տեղեկանք:

Վճարովի ծառայությունների մասին տեղեկություն

Ազգաբնակչության բուժսպասարկումը հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային բուժհաստատություններում կազմակերպվում է վճարովի հիմունքներով այն դեպքերում, երբ տվյալ հիվանդը ընդգրկված չէ պետապատվերի շրջանակներում անվճար բուժօգնությունից օգտվողների հատուկ ցանկում եւ կամ տվյալ հիվանդությունն ընդգրկված չէ սոցիալապես հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների ցանկում, որոնց բուժումը կատարվում է պետապատվերի շրջանակներում:

Բոլորբուժհաստատություններում գոյություն ունեն վճարովի բժշկական ծառայությունների եւ լաբորատոր գործիքային հետազոտությունների ցանկ, որում համապատասխան գները հաշվարկվում են տվյալ բուժիմնարկում եւ հաստատվում տնօրենի կողմից: Վճարովի բուժծառայություններից կարող են օգտվել բոլոր ցանկացողները՝ անկախ տարածքային տեղակայությունից: Գոյություն ունեն բարձր եւ թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող ծառայությունների ցանկ (կցվում է), որը վճարովի է սոցիալական հատուկ խմբերում ընդգրկվածների համար նույնպես:

Բարձր եւ թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող ծառայությունների ցանկ

1. Վիրաբուժություն

- 1.1 կոսմետոլոգիական միջամտություն
- 1.2 օրգանների փոխպատվաստում
- 1.3 արհեստական օրգանների եւ հյուսվածքների պատվաստում
- 1.4 սրտի վիրաբուժություն (բացառությամբ մինչեւ 7 տարեկան երեխաների)
- 1.5 միկրովիրաբուժություն
- 1.6 պլաստիկ վիրահատություն
- 1.7 էնդոուրոլոգիական վիրաբուժություն
- 1.8 լիթոտրիպսիա

2. Ակնաբուժություն

- 2.1 սկլերոպլաստիկա
- 2.2 կեռատոպլաստիկա
- 2.3 աչքի էքսիմերային/լազերային միկրովիրաբուժություն (բացառությամբ կոնտակտային կոռեկցիայի չենթարկվող անիզամետրոպիայով եւ աստիգմատիզմով տառապող հիվանդների)
- 2.4 աչքի պրոթեզավորում
- 2.5 կոնտակտային լինզաների տեղադրում

3 . Վնասվածքաբանություն

- 3.1 հոդերի էնդոպրոթեզավորում
- 3.2 վերին եւ ստորին վերջույթների պրոթեզավորում
- 3.3 ոսկրապլաստիկ վիրաբուժություն
- 3.4 սկոլյոզի եւ ողնաշարի կոտրվածքների վիրահատություններ
- 3.5 արթրոսկոպիկ վիրահատություններ
- 3.6 օրթեզավորում եւ կորսետավորում (բացառությամբ մինչեւ 16 տարեկան հաշմանդամ երեխաների)

4. Ստոնատոլոգիա

- 4.1 ստոնատոլոգիայի բնագավառում թանկարժեք մետաղների եւ տիտանի նիտրիտի օգտագործում
- 4.2 ատամի շապիկներ (կերամիկայից եւ մետաղակերամիկայից)
- 4.3 իմպլանտացիա
- 4.4 անշարժ պրոթեզներ (կերամիկայից եւ մետաղակերամիկայից)
- 4.5 մետաղապլաստմասսա
- 4.6 Բյուզելի մասնակի պրոթեզ
- 4.7 դիմածնոտային պլաստիկ վիրահատություններ:

5. Ուռուցքաբանություն

- 5.1 ուռուցքային հիվանդությունների էլեկտրոպունկտուրային ախտորոշում եւ թերապիա վեգետատիվային ռեզոնանսային թեստի օգտագործմամբ:

6. Մանկաբարձություն, գինեկոլոգիա

- 6.1 արհեստական սերմնավորում եւ բեղմնավորում

7. Ախտորոշում

- 7.1 մագնիտամիջուկային ռեզոնանսային հետազոտություն (շԾՀ)
- 7.2 ֆոնոկարդիոգրաֆիա (բացառությամբ մինչեւ 7 տարեկան երեխաների):

Ինչ՞ է բժշկական ապահովագրությունը

Բժշկական ապահովագրությունը բնակչության առողջության պահպանմանն ուղղված ապահովագրության տեսակ է: Այն իրականացվում է պարտադիր եւ կամավոր ձևերով:

Պարտադիր բժշկական ապահովագրությունը պարտադիր սոցիալական ապահովագրության ձեւ է, որի շրջանակներում ապահովագրվողներին երաշխավորվում է բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու իրավունքը՝ պարտադիր բժշկական ապահովագրության ծրագրերին համապատասխան: Պարտադիր բժշկական ապահովագրությունն իրականացվում է համընդհանուր սկզբունքով՝ ՊԲԱ հիմնադրամի կողմից:

Կամավոր բժշկական ապահովագրությունը բնակչության բժշկական ապահովագրության ձեւ է, որն իրականացվում է կամավորության սկզբունքով եւ ապահովագրվողների համար ապահովում է պարտադիր բժշկական ապահովագրության ծրագրերում չընդգրկված բժշկական օգնության ցուցաբերումը՝ կամավոր բժշկական ապահովագրության պայմանագրերով սահմանված կարգով եւ ծավալներով: Կամավոր բժշկական ապահովագրությունն իրականացվում է ապահովագրական ընկերությունների կողմից՝ տվյալ գործունեությամբ զբաղվելու լիցենզիա ունենալու պայմաններում:

Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգը (ՊԲԱ) ծագել է Գերմանիայում ավելի քան 110 տարի առաջ եւ ունեցել է լայն տարածում: Ներկայումս շատ երկրներում այն առողջապահության ֆինանսավորման հիմնական աղբյուրն է: Այսպես, տնտեսապես զարգացած մի շարք երկրներում առողջապահության ֆինանսավորման մեջ ՊԲԱն ունի հետևյալ տեսակարար կշիռը. Նիդեռլանդներ՝ 80,1%, Գերմանիա՝ 60,3%, Ֆրանսիա՝ 73%, Բելգիա՝ 56% եւ այլն: ՊԲԱ կիրառումը որպես բժշկական օգնության փոխհատուցման հիմնական համակարգ լայն տարածում է ստացել նաեւ Կենտրոնական Եվրոպայի եւ նախկին ԽՍՀՄ երկրներում (Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Ռուսաստան, Էստոնիա, Լիտվա, Ղրղզստան, Վրաստան եւ այլն):

ՊԲԱ ժամանակ քաղաքացիները եւ կամ գործատուները, որպէս ապահովագրական հատկացում, իրենց անհատական եկամուտից (իսկ գործատուները աշխատավարձի ֆոնդից) վճարում են որոշակի՝ օրենքով սահմանված չափաբաժին: Այդ միջոցները հավաքագրվում են ՊԲԱ հիմնադրումում: Անկախ վճարման չափից՝ ՊԲԱ համակարգում ընդգրկված յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ստանալ բժշկական օգնության որոշակի ծավալ, որի փոխհատուցումը կատարվում է ՊԲԱ միջոցների հաշվին: Այսպէս իրականացվում են ՊԲԱ սոցիալական ուղղվածության հիմնարար սկզբունքները, երբ առողջը վճարում է հիվանդի համար, հարուստը՝ աղքատի, երիտասարդը՝ առավել տարիքավորի եւ աշխատողը՝ չաշխատողի համար:

Հայաստանի Հանրապետությունում ՊԲԱ ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքներն ունեն պատմական որոշակի նկարագիր: ՊԲԱ ներդրումը առողջապահության համակարգի զարգացման եւ բնակչության առողջության պահպանման ու բարելավման ռազմավարության հիմնական դրույթներից մեկն է:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակվել եւ ՀՀ կառավարության 2000թ. օգոստոսի 10-ի նիստում հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում բժշկական ապահովագրության ներդրման հայեցակարգը», որի հիման վրա նախարարությունը ներկայացրել է «Պարտադիր բժշկական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Հաշվի առնելով Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը, օրենքի նախագծով ամրագրվում է ՊԲԱ համակարգի աստիճանական ներդրման եւ զարգացման գաղափարը (ՊԲԱ ապահովագրավճարների դրույթաչափերի, ՊԲԱ ծրագրի եւ համակարգում բնակչության ընդգրկման առումով):

ՊԲԱ ներդրումը թույլ կտա.

բարձրացնել քաղաքացիների պաշտպանվածության աստիճանը հիվանդության անկանխատեսելի դեպքերից,

ապահովել առողջապահության համակարգի առավել արդյունավետ գործունեությունը, բուժօգնության դիմաց վճարները դարձնել առավել թափանցիկ, կանխատեսելի, մեղմ, անհատականացված ու հասցեագրված,

հաղթահարել բուժօգնության դիմելու՝ բնակչության մոտ խորացող հոգեբանական արգելքը,

քաղաքակիրթ մեխանիզմներով աստիճանաբար օրինականացնել եւ կառավարելի դարձնել այսօր անմիջականորեն բնակչության կողմից կատարվող անմիջական բժշկական ծախսերը՝ բարձրացնելով դրանց օգտագործման արդյունավետությունը:

Ընտանեկան բժշկության ներդրման դերը

Ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է առողջապահական համակարգի բարեփոխումներ, որոնց նպատակն է բնակչության համար մատչելի եւ հասանելի դարձնել բուժօգնությունը եւ ստեղծել պայմաններ՝ հիվանդությունների վաղ հայտնաբերման ու կանխարգելման համար:

Ելնելով հանրապետության սոցիալ-տնտեսական առկա իրադրությունից, առաջացել է անհրաժեշտություն զարգացնելու առողջության առաջնային պահպանման համակարգը, ներդնելով ընտանեկան բժշկության ինստիտուտը, քանզի ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի գործող համակարգը կարիք ունի լուրջ փոփոխությունների:

Կարելորագույն խնդիր է բարելավել բնակչության առողջության վիճակը՝ բարձրացնելով բժշկական օգնության որակը. կազմակերպել ավելի արդյունավետ առողջապահական ծառայություններ, շեշտադրելով առողջության պահպանման եւ հիվանդությունների

կանխարգելման միջոցառումները, հիվանդանոցների ծանրաբեռնվածությունը թեքելով դեպի ԱԱՊ-ի միավորները, այսպիսով փոխարինելով թանկարժեք բժշկական օգնությունը քիչ ծախսատար եւ որակյալ բուժօգնության տեսակով. բարձրացնել բժշկական օգնության մատչելիությունը, ներմուծելով ընտանեկան բժշկության աշխատանքի սկզբունքներն ու մոտեցումները, տալով վերջինիս առանցքային՝ «դարպասապահի» դեր, ֆինանսական խթանների ներդրմամբ, հիվանդների շարունակական բժշկական հետազոտմամբ, ԱԱՊ տարբեր ծառայություններ եւ երկրորդային բժշկական օգնության ծառայություններ իրականացնողների գործունեության կոորդինացմամբ:

Ընտանեկան բժիշկը ընտանիքի անդամներին (անկախ նրանց տարիքից, սեռից, էթնիկական խմբից եւ կրոնական դավանանքից), առաջնային բժշկասոցիալական օգնություն եւ շտապ օգնության ծառայություն /գյուղական վայրերում/ իրականացնելու իրավունք ունեցող, մասնագիտական բազմապրոֆիլ պատրաստություն ստացած մասնագետ է:

Ընտանեկան բժիշկն իրականացնում է առողջ ապրելակերպի քարոզում, հիվանդությունների կանխարգելում, բուժում եւ առողջության վերականգնում՝ հիմնվելով անհատի, վերջինիս ընտանիքի, մասնագիտական եւ սոցիալական պայմանների վերաբերյալ իր իմացության վրա: Ընտանեկան բժիշկն իրականացնում է ամբուլատոր ընդունելություն, տնային այցեր, շտապ օգնության ծառայություն /գյուղական վայրերում/ շտապ եւ անհետաձգելի բժշկական օգնություն, կանխարգելիչ, ախտորոշիչ, բուժական եւ վերականգնողական միջոցառումներ, մասնակցում է ընտանիքի որոշակի բժշկասոցիալական եւ կրթական խնդիրների լուծմանը:

Ընտանեկան բժիշկը պարտավոր է ցուցաբերել առաջնային բժշկական օգնություն եւ շտապ օգնության ծառայություն իր մասնագիտական որակավորմանը եւ ստացած լիցենզիային համապատասխան, իրականացնելով.

Սպասարկվող բնակչության առողջական վիճակի գնահատում եւ հսկողություն
Բնակչության շրջանում առողջապահական ու առողջ ապրելակերպի ուսուցում եւ քարոզչություն

Կանխարգելիչ աշխատանքներ, այդ թվում՝ ռիսկի գործոնների եւ հիվանդությունների վաղ հայտնաբերում

Հիվանդներին՝ նեղ մասնագիտական բժշկական օգնության ժամանակին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հոսպիտալացման ուղեգրում

Վերականգնողական միջոցառումների անցկացում

Ժամանակավոր անաշխատունակության փորձաքննության իրականացում՝ անաշխատունակության թերթիկների տրմամբ եւ բժշկասոցիալական փորձագիտական հանձնաժողովին հիվանդների ներկայացմամբ, գործող կարգին համապատասխան

Սոցիալական պաշտպանության, գթության եւ բարեգործական ծառայությունների հետ համատեղ ծերերի, ծեր միայնակների, հաշմանդամների, երեխաների, անբուժելի եւ սոցիալապես անապահով, խրոնիկական հիվանդների բժշկասոցիալական օգնության կազմակերպում

Սպասարկվող ընտանիքի անդամների բժշկախորհրդատվական օգնության ցուցաբերում, այդ թվում՝ իմունականիսարգելում, հղի կնոջ եւ նորածնի պատրոնաժ, բոլոր տարիքի առողջ երեխաների սնուցման, աճի եւ զարգացման դինամիկ հսկողություն, դեռահասների առողջական վիճակի դինամիկ հսկողություն, ընտանիքի սեռա-հոգեբանական հարցերի վերաբերյալ խորհրդատվություն, կնոջ առողջական վիճակի դինամիկ հսկողություն, երկրորդային եւ երրորդային օղակներում իրականացվող բժշկական պլանավորում եւ բուժման շարունակականության սկզբունքի պահպանում:

Բուժօգնության որակի բարելավման եւ կառավարման հայեցակարգի ներդրումը որպես աղքատության հաղթահարման բաղկացուցիչ մաս

Բուժական ծառայությունների որակի բարելավումը եւ դրա ապահովման մեխանիզմների ստեղծումն առողջապահական ոլորտի բարեփոխումների կարելուագույն բաղկացուցիչ մասն է:

Հայաստանի Հանրապետության բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշների վատթարացման միտումները պայմանավորված են ոչ միայն վերջին տարիներին երկրի բարդ սոցիալտնտեսական իրադրությամբ, այլ նաեւ բուժօգնություն ստացողի եւ այն իրականացնողի իրավունքները, շահերն ու պարտավորությունները հստակեցնող մեխանիզմների բացակայությամբ:

ՀՀ բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության որակի կառավարումը հնարավորություն է ընձեռում ապահովել բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության որակը՝ անկախ բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող իրավաբանական անձանց սեփականության ձեւից: Բուժօգնության որակի կառավարման միջոցով հնարավոր է դառնում նաեւ այն հիմնախնդիրների բացահայտումը, որոնք խոչընդոտում են առողջապահական ընկերությունների արդյունավետ գործունեությանը բուժօգնության արդյունքի առումով:

Ներկայումս Հայաստանում բուժօժանայությունների որակի կառավարումը մասամբ իրականացվում է դեռեւս խորհրդային տարիներին ներդրված նորմատիվ ակտերով, չափանիշներով ու բուժման սխեմաներով: Մինչդեռ դրանց մեծ մասը կորցրել է իր արդիականությունը եւ երբեմն նույնիսկ իրենց նպատակին ծառայելու փոխարեն ստեղծում են բուժհիմնարկների բնականոն գործունեության արգելքներ:

Խորհրդային տարիների բուժօգնության «լավագույն» ցուցանիշներից էր օրեցօր աճող հիվանդանոցային մահճակալների «պտույտը», իսկ պոլիկլինիկայի բժիշկներից, որոնք մտնում էին նախկին շրջանային բուժմիավորման կազմի մեջ, պահանջվում էր առավելագույնս շատ հիվանդներ ուղեգրել հիվանդանոց: Հիվանդանոցային բուժման ուղղվածության տենդենցը սովորույթի ուժով մասամբ պահպանվել է նաեւ ներկայումս, ինչը անհամեմատ ծախսատար է բուժօգնություն ստացողների համար, հետեւաբար եւ՝ դժվարամատչելի:

Հայաստանի Հանրապետությունում ցուցաբերվող բուժօգնության որակի կառավարման նպատակն է ստեղծել բնակչության շահերի պաշտպանության այնպիսի մեխանիզմներ, որոնք, անկախ տարիքից, օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակից, հիմնական եւ ուղեկցող հիվանդություններից, ապահովում են անձի առողջության համար օպտիմալ արդյունքի բերող ախտորոշիչ եւ բուժական համալիր միջոցառումներ:

Բնագավառում որակի կառավարումը շատ ավելին է, քան սոսկ վատորակ բուժօգնության հավանականությունը նվազագույնի հասցնելը կամ նվազագույն չափանիշները բավարարող բուժաշխատողների առկայության ապահովումը:

Հաշվի առնելով, որ առողջապահական ծառայությունների որակի վերահսկումը դյուրին խնդիր չէ, առավել եւս դյուրին չէ ընտրել դրա բարելավման առավել արդյունավետ ձեւը, անհրաժեշտ է, որպեսզի որակյալ բուժօժանայությունների տրամադրման համակարգը կրի հնարավորինս լայնամասշտաբ բնույթ, ընդգրկելով առողջապահական համակարգի բոլոր շահագրգիռ կողմերը՝ պետություն, մասնագետներ եւ հիվանդներ:

Դրա հիմնական նպատակն է ապահովել բոլոր կողմերի ներգրավվածությունը բուժօգնության որակի շարունակական վերահսկման եւ բարելավման ճանապարհների ընտրության գործընթացում:

Բուժօգնության որակի բարելավման գործընթացում շահագրգիռ կողմերը կատարում են տարբեր դերեր եւ նրանցից յուրաքանչյուրի դերը չափազանց կարելու է՝

Պետության մասնակցությունն այս գործընթացին այն է, որ բուժհաստատությունների լիցենզավորման միջոցով ապահովում է համապատասխան որակավորմամբ մասնագետների եւ հզորությունների նվազագույն պայմանների առկայությունը, հավատարմագրման ու ֆինանսական խթանների միջոցով շահագրգռում, որպեսզի դրանք վերածվեն գերազանց որակի կենտրոնների: Սրա շնորհիվ կրճատվում է բուժօգնության որակի լուրջ խախտումների հավանականությունը:

Բուժօժանայություններ իրականացնողները սովորաբար առավել քաջատեղյակ են համակարգի թույլ կողմերին: Որակի գնահատման բժիշկների աշխատանքի կոլեգիալ, պատժիչ նպատակներ չհետապնդող, ազատ հնարավորության ընձեռումը խթանում է որակի բարելավմանը բուժհաստատությունների ներսում: Հավատարմագրման գործընթացը խթանում է նաեւ առողջ մրցակցությանը բուժհաստատությունների միջեւ: Բուժաշխատողները պետք է հետաքրքրված լինեն իրենց առօրյա գործունեության մասը կազմող շարունակական կրթական համակարգ ստեղծելու մեջ, որը հնարավորություն կտա սովորել եւ գործնականում արագորեն կիրառել որակի բարելավման հնարավորությունները:

Հիվանդների, որպես սպառողների, ներգրավումը որակի կառավարման գործընթացում նախատեսում է նրանց իրավունքների պաշտպանություն՝ ներառյալ ծառայություններ տրամադրողների միջեւ ընտրություն կատարելու իրավունքը, ինչպես նաեւ բուժօգնություն իրականացնողների գործողությունների պաշտոնապես բողոքարկման իրավունքը:

Ոչ կառավարական մասնագիտական կազմակերպությունների մասնակցությունը, որպես թե՛ սպառողների, թե՛ բուժօժանայություն իրականացնողների շահերի ոչ շահագրգիռ պաշտպանի:

Վերոհիշյալ կողմերի ակտիվ մասնակցությունը մեծապես պայմանավորված է զարգացած տեղեկատվական համակարգի առկայությամբ, որի զարգացման համար ներկայումս ակտիվ գործողությունների ծրագիր է իրականացվում: Այն հնարավորություն կտա սպառողներին իրազեկ լինել իրենց իրավունքների մասին, պետությանը՝ շարունակական վերահսկողություն իրականացնել բուժհաստատությունների եւ բուժաշխատողների գործունեության նկատմամբ, իսկ վերջիններիս՝ վերլուծել իրենց գործունեությունը եւ համեմատել այն նմանատիպ հաստատությունների գործունեության հետ:

Բուժօգնության որակի բարելավման գործընթացում հիվանդների մասնակցությունը կախված է այն բանից, թե որքան հստակ են սահմանված նրանց իրավունքները եւ որքանով են նրանք տեղեկացված այդ իրավունքների մասին: Բուժօգնության որակի բարելավման տեսանկյունից

Բնակչության (հիվանդների) առավել կարելու իրավունքներից են՝

- 1) տարբեր առողջապահական ծառայություններ տրամադրողների միջեւ ընտրություն կատարելու իրավունքը,
- 2) առողջապահական ծառայություններ տրամադրողից՝ պաշտոնապես ներկայացրած բողոքին պաշտոնական պատասխան ստանալու իրավունքը,
- 3) բնակչության մասնակցությունը բուժօգնության որակի գնահատման համակարգի ստեղծման գործընթացին:

Չնայած ՀՀ օրենսդրությունը սահմանում է հիվանդների իրավունքները, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնակչության մեծամասնությունը իրազեկ չէ դրանց: Ջարգացած երկրներին բնորոշ է բուժհաստատություններում հիվանդների

իրավունքների ցանկի գետեղումն աչքի ընկնող որեւէ տեղում, իսկ աշխատակազմից պահանջվում է, որ հիվանդներին տեղյակ պահեն իրենց իրավունքների մասին եւ կարողանան պատասխանել հիվանդների կողմից այդ իրավունքների մասին տրվող հարցերին: Այս տեսանկյունից Հայաստանում անհրաժեշտ է ոչ միայն օրենսդրորեն ամրագրել հիվանդների իրավունքները, այլեւ ստեղծել գործուն մեխանիզմներ այդ իրավունքների իրականացման եւ խախտման դեպքում բողոքարկման համար:

Հայաստանի Հանրապետության դեղատոմսերի դուրսգրման եւ դեղերի բացթողման Կ Ա Բ Գ Ը

1. ՀՀ տարածքում բոլոր դեղերի համար (բացառությամբ առանց դեղատոմսերի բաց թողնվող դեղերի) բժիշկների կողմից պետք է դուրս գրվեն դեղատոմսեր: Դեղատոմս դուրս գրելու իրավունք ունեն այն բժիշկները, որոնք ունեն բժշկի անձնական կնիք: Դեղատոմսերը պետք է դուրս գրվեն ՀՀ կառավարության 14.08.2001թ. N 759 որոշմամբ հաստատված դեղատոմսային ձեւաթղթերով:

1.1 Դեղատոմսը դուրս է գրվում ընթեռնելի ձեռագրով, առանց ուղղումների, լատիներեն եւ հայերեն լեզվով:

1.2 Թմրադեղերի եւ թունավոր դեղերի անվանումները դեղատոմսի վրա գրվում են սկզբում, այնուհետեւ՝ մնացած բաղադրատոմսերի անվանումները:

1.3 Դեղատոմսը դուրս գրելու ժամանակ հեղուկ դեղերի քանակը գրվում է միլիլիտրերով կամ կաթիլներով, մնացած նյութերը՝ գրամներով:

1.4 Արգելվում է ամբուլատոր հիվանդների համար դուրս գրել դեղեր, որոնք չեն օգտագործվում ամբուլատոր հիվանդների բուժման համար:

1.5 Թմրադեղերի եւ հոգեմետ դեղերի դեղատոմսային ձեւաթղթերի վրա դուրս է գրվում միայն մեկ դեղ ու քանակը նշվում է նաեւ տառերով: Մնացած դեպքերում թույլատրվում է դուրս գրել երկու դեղ:

2. Սովորական դեղերը դեղատոմսով բաց թողնվող դեղերն են, որոնք չեն պարունակում հոգեմետ եւ թմրադեղեր, դուրս են գրվում ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 14-ի N759 որոշմամբ հաստատված N3 եւ N 5 դեղատոմսային ձեւաթղթերով: Այդ նույն ձեւաթղթերով են դուրս գրվում նաեւ զեղչով կամ անվճար տրվող դեղերը:

2.1 Պետության կողմից զեղչով կամ անվճար տրվող դեղերի համար դեղատոմսեր դուրս գրելիս առաջնորդվել ՀՀ առողջապահության նախարարի 07. 03. 2001թ. N 128 հրամանի դրույթներով:

2.2 Անվճար կամ զեղչով դեղատոմսերը վավերացվում են բուժկանխարգելիչ հաստատության դրոշմակնիքով, դեղատոմսի համար կնիքով, բժշկի ստորագրությամբ եւ անձնական կնիքով, ինչպես նաեւ դեղատոմսի վրա գրվում է անվճար կամ զեղչի (տոկոսի) չափը, հաշվառման մատյանի հերթական համարը, որը հաստատվում է տնօրենի ստորագրությամբ ու կլոր կնիքով:

Պետության կողմից մարդասիրական օգնությամբ ստացված դեղերի համար դեղատոմսի վրա կատարվում է նշում՝ «հումանիտար»:

2.3 Անվճար կամ զեղչով դուրս գրած դեղերի դեղատոմսերի հաշվառման համար վարվում է մատյան, որտեղ նշվում է հերթական համարը, ամիսը, ամսաթիվը, հիվանդի Ա.Ա.Հ, ամբուլատոր քարտի համարը, զեղչի կամ տոկոսի չափը, դեղատոմսի բովանդակությունը եւ հիվանդի ստորագրությունը: Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարած եւ վավերացրած կազմակերպության տնօրենի ստորագրությամբ ու կնիքով:

2.4 Պետության կողմից անվճար կամ զեղչով բաց թողնվող դեղերի դեղատոմսերի բովանդակությունը բժիշկը պարտավոր է գրանցել հիվանդի ամբուլատոր քարտի մեջ:

3. Սույն կարգի 2-րդ եւ 4-րդ կետերով նախատեսված դեղատոմսային ձեւաթղթերը եւ դրանց դուրս գրումն ապահովում են բժշկական օգնություն եւ սպասարկում

իրականացնող անհատ ձեռնարկատերերը եւ իրավաբանական անձինք, պահպանելով ՀՀ կառավարության 14. 08. 2001թ. N759 որոշմամբ սահանված դեղատոմսերի ձեւաթղթերի չափսերը:

4. Հոգեմետ դեղերը ամբուլատոր հիվանդների համար դուրս են գրվում ՀՀ կառավարության 14. 08. 2001թ. N759 որոշմամբ հաստատված N 2 եւ N4 ձեւաթղթերով: Դեղատոմսը պետք է գրված լինի բժշկի ձեռքով, վերջինիս ստորագրությամբ ու կնիքով: Դեղատոմսը պետք է գրանցվի հոգեմետ դեղատոմսերի հաշվառման մատյանում՝ մատյանի հերթական համարը գրելով դեղատոմսի վրա:

4.1 Հոգեմետ դեղատոմսային ձեւաթղթերի հաշվառման համար վարվում է մատյան, որտեղ նշվում են հերթական համարը, ամսաթիվը, ընդհանուր քանակը, ում է տրվել (հիվանդի Ա. Ա. Հ.), ամսաթիվը, ամբուլատոր քարտի համարը, դեղատոմսի բովանդակությունը, ստացողի ստորագրությունը: Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարած եւ վավերացրած կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությամբ ու կնիքով:

5. Թմրադեղերը ամբուլատոր հիվանդների համար դուրս են գրվում ՀՀ կառավարության 14.08.2001թ N259 որոշմամբ հաստատված N1 դեղատոմսային ձեւաթղթերով:

Դեղատոմսը պետք է գրված լինի բժշկի ձեռքով, պարզ ընթեռնելի՝ վերջինիս ստորագրությամբ եւ կնիքով հաստատված, որը վավերացվում է հաստատության դրոշմակնիքով, դեղատոմսի համար կնիքով, պետք է հաստատվի տնօրենի կամ բուժօգնականի ստորագրությամբ ու կլոր կնիքով:

5.1 Թմրադեղերի դեղատոմսային ձեւաթղթերի հաշվառման համար վարվում է մատյան, որտեղ նշվում են հերթական համարը, ստացման ամսաթիվը, որտեղից է ստացված, սերիան, համարը, քանակը, բաց թողման ամսաթիվը, ում է տրվել (հիվանդի Ա. Ա. Հ.) ամբուլատոր քարտի համարը, դեղատոմսի բովանդակությունը, դեղատոմսի սերիան, համարը, ստացողի ստորագրությունը եւ մնացորդը: Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարած եւ վավերացված կազմակերպության տնօրենի ստորագրությամբ ու կնիքով:

5.2 Թմրադեղեր բաց թողնող դեղատոմսերի բովանդակությունը, համարը եւ սերիան բժիշկը պարտավոր է գրանցել հիվանդի ամբուլատոր քարտի մեջ:

5.3 Թմրադեղեր պարունակող դեղատոմսերն ուժի մեջ են 20 օր:

5.4 Թմրադեղերի դեղատոմսային ձեւաթղթերը պետք է պահվեն մետաղյա չիրկիզվող պահարանում:

6. Չեղչով եւ անվճար տրվող դեղերի դեղատոմսերը դեղատանը պահվում են 5 տարի, թմրադեղերինը՝ 5 տարի, իսկ հոգեմետ եւ մարդասիրական օգնությամբ ստացված դեղերինը՝ մեկ տարի: Պահպանման ժամկետի ավարտից հետո դեղատոմսերը ոչնչացվում են՝ այրվում, կազմելով համապատասխան ակտ:

7. Դեղատանը պահվում է թմրադեղերի եւ հոգեմետ դեղերի հաշվառման մատյաններ, որտեղ նշվում են դեղի անվանումը, ստացման ամսաթիվը, չափման միավորը, որտեղից է ստացված, փաստաթղթի համարը, քանակը, ում է բաց թողվել, հիվանդի Ա. Ա. Հ, դեղատոմսի համարը, քանակը եւ մնացորդը: Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարված եւ վավերացված կազմակերպության տնօրենի ստորագրությամբ ու կնիքով:

8. Բացառությամբ թմրադեղերի, դեղատոմսում դուրս գրված դեղի դեղաչափի (դոզայի) եւ դեղատանն առկա դեղի դեղաչափի տարբերության դեպքում դեղատան աշխատողը կատարում է վերահաշվարկ. դեղի քանակը համապատասխանեցնում է ըստ դեղաչափի, այդ մասին կատարելով նշում դեղատոմսի ձեւաթղթի հետեւի մասում եւ բացատրում հիվանդին օգտագործման ձեւը:

ԱՆՌԾ. Ամփոփ ծրագրի մշակման գործընթաց



ԱՂԲԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԹԱԳԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԾՐԱԳԻ

Մասնակցության Գործընթաց

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

- Շուկայական տնտեսություն. գործազրկություն
- Մասնագիտական ունակություններ, հմտություններ
- Մասնագիտությունների առաջարկ եւ պահանջարկ
- Կրթական բարեփոխումներ
- Զբաղվածության իրավական կարգավորումը
- Գործատու-աշխատող իրավահարաբերություններ
- Նոր տնտեսական մատրավարություն
- Վերապատրաստման կենտրոններ

Մասնագիտական ունակությունների պակասն ու վերապատրաստման խնդիրները հանրապետությունում

Անցումը շուկայական տնտեսությանը հասարակության մեջ առաջացրեց բազմաթիվ նոր խնդիրներ, այդ թվում գործազրկության աճ, գործազրկության կառուցվածքում տարիքային եւ կրթական ցենզի փոփոխություններ, աշխատուժի նկատմամբ նոր, բոլորովին այլ պահանջներ:

Այս եւ հարակից մի շարք խնդիրներ լուսաբանելու նպատակով սոցիոլոգիական հարցում է կատարվել հանրապետության հետեւյալ մարզերի (Լոռի, Շիրակ, Վայոց Ձոր, Սյունիք, Տավուշ, Գեղարքունիք, Արագածոտն, Երեւան) գործատուների (200 հոգի), աշխատողների (350 հոգի) եւ գործազուրկների (500 հոգի) շրջանում, որի արդյունքները ներկայացնում ենք ստորեւ: Հարցմանը մասնակցած գործատուների 40%-ը ներկայացնում են արտադրական, 35%-ը՝ սպասարկման, 25%-ը՝ գյուղատնտեսական մթերքների մշակման ոլորտը: Հարցումը կատարվել է փոքր եւ միջին ձեռնարկություններում:

«Ի՞նչ հմտություններ պետք է ունենա անձը աշխատանքի շուկայում մրցունակ լինելու համար» հարցը տրվել է թե՛ գործատուներին, թե՛ գործազուրկներին եւ թե՛ աշխատողներին: Հարցմանը մասնակցած գործատուների գերակշռող մեծամասնությունը (85%) նշել է մասնագիտական բարձր պատրաստվածությունը: Գործազուրկների 90%-ը մասնագիտությանը զուգահեռ համակարգչային ծրագրերի եւ օտար լեզուների իմացությունը, 35%-ը անձնական կապերը:

Մասնագիտական բարձր պատրաստվածությունն այսօր ենթադրում է համակարգչային նոր տեխնոլոգիաների կիրառում տվյալ մասնագիտության մեջ, օտար լեզուների իմացություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն, եւ ամենակարեւորը՝

նոր մտածողություն, որը աշխարհին ինտեգրվելու արագորեն ընթացող գործընթացի հիմնական նախապայմաններից մեկն է:

Նույն հարցին աշխատողները պատասխանել են հետևյալ կերպ. աշխատանքային փորձը (48%), պարբերաբար կազմակերպվող որակավորման բարձրացման դասընթացները (62%), ինտերնետային ցանցին միանալը (22%):

«Ինչպիսի՞ հմտություններ ու գիտելիքներ են անհրաժեշտ որոշակի աշխատանքի համար, որը ներկայումս չի ապահովվում մասնագիտական ուսումնական հաստատություններում» հարցին գործատուների պատասխանները հիմնականում համընկնում են: Նրանց 93%-ը գտնում է, որ բուհերի շատ շրջանավարտներ չունեն ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն: Նրանց կարծիքով բարձրագույն ուսումնական հաստատությունից նոր դուրս եկած մասնագետը գրեթե նույն վիճակում է, ինչ տարիներով գործազուրկի կարգավիճակում գտնվող, մասնագիտական հմտությունները կորցրած անձը: Պատահական չէ, որ աշխատաշուկայում առկա բարձր որակավորում ունեցող աշխատուժի դեֆիցիտի պայմաններում, այսօր բուհն ավարտած մեր շրջանավարտների մեծ մասը լրացնում է գործազուրկների բանակը:

Երկարատեւ գործազրկության դեպքում մասնագիտական հմտությունների պակասը միանգամայն տրամաբանական եւ արդարացված է: Նույնը չի կարելի ասել բուհերի, առավել եւս միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների մասին, չնայած թե՛ հարցման արդյունքները, թե՛ աշխատանքի ընթացքում մեր կատարած դիտարկումները ցույց են տալիս, որ նրանցից շատերը չունեն գիտելիքների անհրաժեշտ պաշար: Որո՞նք են պատճառները: Գաղտնիք չէ, որ հանրապետությունում գործող ուսումնական հաստատություններից շատերը իրենց տեխնիկական զինվածության մակարդակով, ուսուցման գործընթացի կազմակերպման եւ ամենակարելուրը՝ աշխատաշուկայում պահանջարկ ունեցող նոր մասնագիտությունների ուսուցման հնարավորությունների տեսանկյունից այլեւս չեն բավարարում գործատուների կողմից ներկայացվող պահանջներին: Այսօր առկա է ոչ միայն ժամանակակից ուսումնանյութական բազայի, այլեւ մանկավարժական որակյալ կադրերի, նոր մտածողությամբ ուսուցիչների զգալի պակաս:

Մյուս ոչ պակաս կարելու պատճառն այն է, որ բուհերում փոքր թիվ չեն կազմում ծնողների կամքով եւ նախաձեռնությամբ ուսանող դարձած երիտասարդները: Ջարմանալի չէ, որ նրանց գերակշռող մասը բուհից դուրս է գալիս գիտելիքներից բոլորովին զուրկ, որպես մասնագետ ոչ պիտանի:

Գործատուների 20%-ի կարծիքով երիտասարդ մասնագետներին խանգարում է փորձի բացակայությունը: 48%-ը նշել է օտար լեզուների իմացության պակասը, իսկ հարցվածների 7%-ի կարծիքով որոշ մասնագիտությունների գծով ընդհանրապես հանրապետությունում մասնագետներ չեն պատրաստվում: Այս փաստին մենք բազմիցս առնչվել ենք: Այսպես, ունենալով ինժեներ-էլեկտրիկի մասնագիտություն ունեցող գործազուրկների պատկառելի թիվ, երեք ամսում հազիվ գտնվեց 10 մասնագետ, որոնք անցնելով վերամասնագիտացման դասընթաց, ձեռք բերեցին նոր՝ մետրոպոլիտենի էլեկտրամեխանիկի եւ էլեկտրափականագործի մասնագիտություն եւ աշխատանքի անցան այդ հիմնարկությունում: Միայն վերամասնագիտացման միջոցով հնարավոր եղավ բավարարել Երկաթգծի վարչության ներկայացրած գծի վարպետների պահանջարկը: Նման խնդրի առաջ կանգնեցինք նաեւ կիսաթանկարժեք քարեր վերամշակողների, ոսկեգործների, գորգագործների, նոր մակնիշի ավտոմեքենաներ նորոգողների պահանջարկի դեպքում: Սա բավականին լուրջ խնդիր է, քանի որ նախկին ՄՊՏՈՒ-ների համակարգը այսօր գրեթե չի գործում եւ բանվորական շատ մասնագիտություններ

պարզապես մոռացության են մատնվում: Եվ եթե այս պահին այդ մասնագիտությունների պահանջարկը չկա կամ չնչին է, դա չի նշանակում, թե վաղն էլ չի լինելու:

Ո՞րն է ելքը. առաջարկում ենք նախկին պրոֆ.տեխ. ուսումնարանների բազայի վրա զբաղվածության ծառայությանը կից ստեղծել արտադրական մասնագիտական ուսումնական կենտրոններ, որտեղ, օգտագործելով փորձառու ուսուցիչների (վարպետների) փորձը, պահանջարկի դեպքում կպատրաստվեն անհրաժեշտ մասնագետներ: Նմանատիպ կենտրոնի ուսումնական ծրագրերը կազմելիս հիմնական շեշտը պետք է դրվի աշխատանքային պրակտիկայի վրա: Ավելորդ չէ ասել, որ մի շարք եվրոպական երկրներում նման կենտրոնների դերը բավականին մեծ է աշխատաշուկայի զարգացման գործում:

Նույն հարցին բարձրագույն կրթություն ստացած գործազուրկները պատասխանել են հետևյալ կերպ. համակարգչային ծրագրերի իմացություն՝ 93%-ը, օտար լեզուների իմացություն՝ 43%, իրավական եւ հարկային օրենսդրության իմացություն՝ 21%, աշխատանքային պրակտիկայի պակաս՝ 19%:

Մտածելու տեղիք է տալիս այն փաստը, որ աշխատանքային փորձի պակասը խանգարում է երիտասարդ մասնագետին աշխատանք գտնել: Անհրաժեշտ է մշակել տարբերակներ, որոնք հնարավորություն կտան ապագա մասնագետին ուսումնառության ընթացքում աշխատանքային պրակտիկա անցնելու գործատուի մոտ: Այս հարցի լուծումը պետական հոգածությունն էլ միջամտություն է պահանջում: Նման փորձ մենք ունեցել ենք խորհրդային տարիներին: Բուհգործատու հարաբերությունները հնարավոր է կարգավորել պայմանագրային հիմունքներով: Պրակտիկայի ընթացքում կադրային ծիշտ ընտրության հնարավորությունը եւս գործատուին խրախուսելու միջոց է: Միայն գործատու-պատվիրատու, բուհ-կատարող հարաբերությունների սերտացումը, որն այսօր հանրապետությունում անբողջովին անտեսված է, հնարավորություն կտա նվազեցնել գործազուրկ շրջանավարտների թիվը:

Հարցի լուծմանը կնպաստեր նաեւ բուհերի շրջանավարտների շրջանում ամենամյա սոցիոլոգիական հարցումների կազմակերպումը, որի արդյունքում կարելի էր ճշտել յուրաքանչյուր բուհի շրջանավարտների աշխատանքի տեղավորման արդյունավետությունը, ինչպես նաեւ առանձին մասնագիտությունների գծով առաջարկի եւ պահանջարկի անհամապատասխանությունը: Նման հարցումների ցուցանիշներից ելնելով՝ թերեւս, բուհի ղեկավարությունը կարողանար հետեւություններ անել: Իսկ եթե բուհերի լիցենզավորման գործընթացի հիմքում եւս դրվեին սոցիոլոգիական նմանատիպ հարցման արդյունքները, ապա կրթական համակարգը մեծապես կշահեր: Թե ո՞վքեր եւ ինչպե՞ս պետք է իրականացնեն առաջարկվածը, հնարավոր է հստակեցնել՝ կառավարության համապատասխան որոշումներով: Հստակ է, որ այս խնդիրը պետք է հավասարապես մտահոգի թե՛ կրթության եւ գիտության, թե՛ սոցիալական ապահովության նախարարության զբաղվածության ոլորտի մասնագետներին եւ թե՛ գործատուներին:

Սակայն հանրապետությունում պատկերն այսօր այլ է. աշխատաշուկայում որոշ մասնագիտությունների առաջարկի եւ պահանջարկի մեծ անհամապատասխանությունը խոսում է այն մասին, որ գրեթե բացակայում է այն միասնական քաղաքականությունը, որի իրականացման արդյունքում կրթական համակարգը պարտավորված կլինի արագ արձագանքելու աշխատուժի պահանջարկի փոփոխությանը: Անհրաժեշտ է դպրոցների բարձր դասարաններում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների կազմակերպում, որի նպատակը տնտեսության մեջ կատարվող փոփոխություններին զուգահեռ՝ մասնագիտությունների »շարժին«, աշխատաշուկայում աշխատուժի առաջարկի եւ պահանջարկի գիտությանը երեխաներին ծանոթացնելն է: Իհարկե,

լավագույն տարբերակը մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի ձեւավորումն է, զբաղվածության ծառայության եւ կրթության եւ գիտության նախարարության անմիջական համագործակցությամբ: Նմանատիպ կենտրոնների դերը մեծ է ոչ միայն աշխատաշուկայի կանխատեսման, մասնագիտության ճիշտ ընտրության, այլեւ նոր ստեղծվող աշխատատեղերին առկա աշխատուժի համապատասխանեցման գործում: Հանրապետության աշխատաշուկայի իրավիճակի ամենամայա վերլուծությունը ցույց է տալիս, որ անհամեմատ դժվար են աշխատանքի տեղավորվում մեկ տարուց ավելի գործազուրկի կարգավիճակում գտնվողները (78%), ինչպես նաեւ 50-ից բարձր տարիք ունեցող (9,3%-ը) գործազուրկները: Եթե երկարատեւ գործազրկությունը անձին գրկում է մասնագիտական հմտություններից՝ առաջ բերելով անինքնավստահություն, թերաբժեքության բարդույթներ, ապա երկրորդ խմբի պարագայում ավելանում են նաեւ հոգեբանական դժվարությունները: Այս մարդիկ դժվար են հարմարվում նոր տնտեսական հարաբերություններին, հոգեբանորեն պատրաստ չեն որեւէ նոր նախաձեռնության, սեփական գործ ստեղծելուն, գործարար հարաբերություններում ճկուն չեն եւ լուրջ դժվարություններ ունեն գործատուի հետ հարաբերվելիս: Այդպատճառով այս խմբի համար մասնագիտական ուսուցում կազմակերպելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաեւ նրանց հոգեբանական բարդույթների հաղթահարմանն ուղղված միջոցառումներին: Այս հարցում եւս կարելի է մասնագիտական կողմնորոշման կենտրոնի դերը:

Իհարկե, նման աշխատանք այսօր ինչ-որ չափով փորձում են կատարել զբաղվածության տարածքային կենտրոններում: Սակայն դա բավարար համարել չի կարելի նախ այն պատճառով, որ կենտրոնների առանց այն էլ փոքրաթիվ հաստիքներով նման լայնածավալ աշխատանք անհնար է իրականացնել, եւ եթե ավելացնենք, որ այդ աշխատանքը պահանջում է լայն տեղեկատվական բազա, մասնագիտական գրականություն եւ ամենակարելիոր՝ համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ (հոգեբան, վիճակագիր եւ այլն), ապա հասկանալի կլինի, թե ինչու այսօր զբաղվածության տարածքային կենտրոնների կատարած աշխատանքը չի կարող բավարար համարվել:

Յուրաքանչյուր տարի բուհերում ուսուցանվող մասնագիտությունները եւ սովորողների թիվը պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել առաջիկա առնվազն հինգ տարիների աշխատաշուկայի կանխատեսումները: Այդ կանխատեսումների հավաստիությունը մեծապես կախված է, թե որքանով են համագործակցում զբաղվածության ծառայությունները եւ տեղական իշխանությունները: Այս համագործակցությունը պետք է իրականացվի տեղական համաձայնեցման կոմիտեների գործունեության արդյունքում, որի կազմում ընդգրկված են նաեւ գործատուների եւ աշխատողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այս համագործակցության արդյունքում են մշակվում զբաղվածության կարգավորման ծրագրերը, եւ որոշումներ կայացվում դրանց իրականացման համար:

«Ինչպիսի վերապատրաստման կարիք ունեն աշխատողները իրենց աշխատանքի բարելավման կամ առաջխաղացման համար» հարցին թե՛ գործատուների, թե՛ աշխատողների մեծ մասը նշել են պարբերաբար անցկացվող որակավորման բարձրացման դասընթացները: Նրանց պատասխաններից հստակ է, որ միայն այդ միջոցով կարելի է հասնել աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Հարցվածների 32%-ը նշել է նաեւ ինտերնետային ցանցի դերը, առանց որի անհնար է իրազեկ դառնալ տնտեսության տվյալ ճյուղում ներդրվող փոփոխություններին, այդ բնագավառի համաշխարհային փորձին:

Հարցմանը մասնակցած աշխատողների 25%-ը (հիմնականում արտադրական ոլորտի) ընդգծել է աշխատանքային պայմանների բարելավումը եւ աշխատանքի պաշտպանության կանոնների ուսուցմանն ուղղված միջոցառումների ընդլայնման անհրաժեշտությունը

աշխատողների շրջանում: Երբեմն չնորմավորված աշխատաժամանակը աշխատողին գրկում է ինքնազարգացման հնարավորությունից, ինչը վերջնական արդյունքում խոչընդոտում է արտադրության առաջընթացին:

Զբաղվածների որակավորման բարձրացման խնդիրը նույնքան կարելու է, որքան գործազուրկներիինը: Անցումը աշխատանքի կազմակերպման նոր ձևերին, նոր տեխնոլոգիաների ներդրումը առանց որակյալ աշխատուժի անհնար է պատկերացնել: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է անընդհատ, շարունակական ուսուցման համակարգ, որի ստեղծմամբ առաջին հերթին պետք է շահագրգռված լինի գործատունը: Հատկապես մեր հանրապետությունում, ուր կա բնական ռեսուրսների սակավություն, տնտեսության զարգացման մեջ առաջնային դերը պետք է տրվի մարդկային գործոնին: Դժբախտաբար մեր հասարակությանը դեռևս պակասում է այն գիտակցությունը, որ ուսուցումը միաժամանակ ներդրում է մարդու եւ արտադրության մեջ:

Կադրերի շարունակական վերապատրաստումը պետք է դիտել որպես երկարաժամկետ տնտեսական մարտավարության անփոխարինելի մաս: Այդ ծրագրերի անընդհատության ճանապարհով միայն կարելի է ներդնել կառավարման առաջադեմ ձևեր եւ մեթոդներ՝ որպես աշխատանքի արդյունավետության բարձրացման հիմնական նախապայման:

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է օրենսդրական դաշտի շուտափույթ կարգավորում: Այս առումով արդարացված է մինչ օրս նախկին տնտեսաիրավական հարաբերությունների օրոք (1972թ.-ին) ընդունված «Աշխատանքային օրենսգրքի» ներկայությունը, որը բնականաբար չի կարող համապատասխանել ներկայիս իրողություններին: Մինչդեռ Աշխատանքային օրենսգիրքը աշխատանքային իրավահարաբերությունների հիմնական կարգավորողն է Սահմանադրությունից հետո եւ գերակա է ոլորտը կարգավորող մյուս այլ իրավական ակտերի նկատմամբ:

Աշխատանքային օրենսգրքում անհրաժեշտ է ամրագրել այն սկզբունքը, որ աշխատողը 3 տարի նույն գործատուի մոտ աշխատելուց հետո ձեռք է բերում գործատուի հաշվին վերապատրաստվելու իրավունք: Սա շատեվրոպական երկրներում ընդունված տարբերակ է եւ կարելի է ասել, այդ երկրների տնտեսական առաջընթացի նախապայմաններից մեկն է: Իսկ վերապատրաստման ձևերը եւ միջոցները յուրաքանչյուր առանձին դեպքում կարող են լինել տարբեր՝ ըստ գործատուի հայեցողության: Այստեղ մոտեցումը պետք է լինի խիստ անհատական, արտադրական անհրաժեշտությունից ելնելով: Այսպես, բարդ տեխնոլոգիաների ներդրման դեպքում ուղղակի անհրաժեշտ է վերամասնագիտացումը կազմակերպել արտադրությունում: Մեկ այլ դեպքում դա կարելի է անել համապատասխան ուսումնական հաստատությունում՝ պայմանագրային հիմունքներով: Երբեմն ուղղակի անհրաժեշտ է լինում մասնագետների վերապատրաստումը արտասահմանում եւ այլն:

Զբաղվածության ցավոտ հիմնախնդիրներից է նաեւ գործատու-աշխատող հարաբերությունները, հատկապես տնտեսության մասնավոր սեկտորում: Շուկայական տնտեսության պայմաններում փոխվում է աշխատանքի բնույթը, բովանդակությունը, ուղղվածությունը: Աշխատաշուկայում առաջանում է աշխատուժի առաջարկի եւ պահանջարկի էական անհամապատասխանություն, որի հետեւանքով խիստ մեծանում է մրցակցությունը: Այսօր մեկ աշխատատեղին միջին հաշվով հավակնում է 200 գործազուրկ: Այս պայմաններում բնականաբար մեծանում է գործատուի պահանջները աշխատուժի որակի նկատմամբ, ավելին, այսօր այն դիտվում է որպես տնտեսության զարգացման կարելու լծակներից մեկը:

Օրենսդրորեն չկարգավորված աշխատանքային հարաբերությունների արդյունքում շատ դեպքերում վարձու աշխատողը հայտնվում է հոգեբանական դժվարին

կացության մեջ: Մի կողմից՝ աշխատանքը կորցնելու վախը, մյուս կողմից՝ գործատուի կամայականությունները, ցածր աշխատավարձը աշխատողին դնում են նվաստացուցիչ իրավիճակում: Ելքը այնպիսի կազմակերպչական կառույցների ստեղծումն է, որոնց շրջանակներում գործատուն եւ աշխատող կողմը կարողանան պայմանավորվել: Նման կառույցի ստեղծումը կարգավորվում է «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքով: Դրանք Համաձայնեցման կոմիտեներն են (հանրապետական եւ տեղական), որոնց կազմում հավասար թվաքանակով ընդգրկվում են աշխատողների, գործատուների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների եւ գործադիր իշխանության, ինչպես նաեւ զբաղվածության պետական ծառայության լիազոր ներկայացուցիչները: Այս կառույցի գործունեության հիմքում պետք է դրված լինի կողմերի փոխադարձ համաձայնությունը եւ համերաշխությունը: Հատկապես կարեւոր է արհեստակցական միությունների՝ որպես աշխատողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների, դերի մեծացումը: Հուսով ենք, որ «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ նոր օրենքը կնպաստի դրան:

«Ի՞նչ հմտությունների, գիտելիքների կամ վերապատրաստման կարիք ունեն գործազուրկները աշխատանք գտնելու համար» հարցին պատասխանել են եւ՝ գործատուները եւ՝ գործազուրկները:

Գործատուների 73%-ի կարծիքով գործազուրկների ճնշող մեծամասնությունը չունի պահանջվող անհրաժեշտ որակավորում: Այսօր շատ մասնագիտություններ անհնարին է պատկերացնել առանց համակարգչային տեխնոլոգիաների կիրառման, անչափ կարեւորվում է նաեւ օտար լեզուների իմացությունը:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ այսօր դժվար համալրվող են համակարգչային օպերատորի, օտար լեզուների մասնագետի, հաշվապահի, տնտեսագետի, բրոկերի մասնագիտություններով աշխատատեղերը, իսկ բանվորական շատ մասնագիտությունների դեպքում (կար, ոսկեգործություն, կիսաթանկարժեք քարերի մշակում) եղած աշխատուժի որակը չի համապատասխանում գործատուի պահանջներին:

Հարցմանը մասնակցած գործազուրկների 69%-ը աշխատանք գտնելու հարցում ունեցած դժվարությունը կապում է համակարգչին չտիրապետելու, իսկ 15%-ը ավելացրել է նաեւ օտար լեզուների չիմացությունը կամ վատ իմացությունը: Հատկապես որոշ մասնագիտությունների դեպքում (գործավարություն, հաշվապահություն, ֆինանսիստ) աշխատանք գտնելը հնարավոր են համարում միայն համակարգչային ծրագրեր եւ օտար լեզու (հիմնականում անգլերեն) սովորելու պարագայում:

Մինչ այսօր այս ուղղությամբ որոշ աշխատանքներ իրականացվել են. այսպես 1998-2001թ. հանրապետությունում սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի՝ զբաղվածության ծրագրերին հատկացված միջոցներով մասնագիտական ուսուցում է անցել թվով 1906 գործազուրկ եւ 220 սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով անձ: Ուսուցումը կազմակերպվել է աշխատաշուկայում պահանջարկ ունեցող հետեւյալ մասնագիտություններով՝ համակարգչային գործավար՝ դեկավարի օգնական-ռեֆերենտ, համակարգչային հաշվապահություն, համակարգչային դիզայն, համակարգչային հրատարակչություն, համակարգչային տեխնիկայի նորոգում եւ սպասարկում, փոքր բիզնես, ֆինանսներ, գործավարության համակարգչային ապահովում, գործարարության կառավարում եւ կազմակերպում, ֆերմերային գործ, երկաթգծի վարպետներ, մետրոպոլիտենի էլեկտրամեխանիկներ, մետրոպոլիտենի էլեկտրամոնոյորներ, գորգագործ, ոսկեգործ, ավմաստի հումքից ադամանդի մշակման տեխնոլոգ, կիսաթանկարժեք քարերի գեղարվեստական մշակում, ավտոփականագործ

վերանորոգում, կար:

Ըստ զբաղվածության տարածքային կենտրոնների տվյալների ուսուցում անցածների շուրջ 80%-ը զբաղվածության ծառայության աջակցությամբ տեղավորվում է աշխատանքի: Զբաղվածության տարածքային կենտրոնների հայտերի հիման վրա, որոնք կազմվում են սեփական տարածքի աշխատաշուկայի պահանջարկից ելնելով, 2002թ. նախատեսվում է իրականացնել 1500 գործազուրկի մասնագիտական ուսուցում՝ ընդլայնելով ուսուցանվող մասնագիտությունների ցանկը: Այսպես տարածքային կենտրոնների կողմից տեղական աշխատաշուկայի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հանրապետությունում վերը թվարկված մասնագիտություններից բացի մեծ պահանջարկ ունեն նաև հետեւյալ մասնագիտությունները. ռադիո, հեռուստա եւ հեռահաղորդման սարքերի տեխնիկ եւ օպերատոր, էլեկտրոնային սարքերի նորոգող, ռադիո-էլեկտրոնիկ, քիմիկ-տեխնոլոգ, թվային ծրագրավորման ֆրեզերագործ, թանկարժեք մետաղների եւ քարերի վերամշակման եւ հղկման մասնագետ, փականագործ, քարտաշ, ատաղձագործ, ձուլող, խառատ, լեռնահանքային արդյունաբերության ջարդիչ մեքենաների մեքենավար, լեռնագործ-հորատող, գայլիկոնող, հնոցապան, գյուղատնտեսական մթերքների վերամշակման տեխնոլոգ, կաթի տեխնոլոգ, հրուշակագործ, վաճառող, խոհարար, մատուցող եւ այլն:

Ի դեպ, Կրթության եւ գիտության նախարարություն խնդրանքով պահանջարկ ունեցող մասնագիտությունների այս ցանկը՝ ըստ մարզերի, տրամադրվել է նախարարությանը՝ ուսումնական ծրագրերում ներառելու ակնկալիքով:

Ինչպես երեւում է վերոշարադրյալից, կնճռոտ հարցերը զբաղվածության ոլորտում բազմաթիվ են: Իհարկե, կառավարության իրականացրած քաղաքականության արդյունքում մշակվում են դրանց լուծմանն ուղղված ծրագրեր: Այս բնագավառում մեծ է նաև միջազգային կազմակերպությունների ներդրումը: Այսպես, շվեդական կառավարությունը հանրապետությունում սկսել է իրականացնել զբաղվածության ոլորտին ուղղված նոր ծրագիր, որի հիմնական նպատակներից մեկը կադրերի ուսուցումն է՝ շվեդական փորձի ուսումնասիրման ճանապարհով: Մեկ այլ, ԵՄ «Tacis» ծրագիրը եւս ավարտելով՝ «Աջակցություն ՀՀ զբաղվածության քաղաքականությանը» նախագիծը, 2002թ. սկզբից իրականացնում է նոր ծրագիր՝ վեցամսյա ժամկետով: Հիմնական նպատակը զբաղվածության ծառայությունների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումն է եւ զբաղվածության ծառայության տեխնիկական զինումը:

Գերմանական GTZ կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շուրջ 750 աշխատանք փնտրողներ են ուսուցանվել Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերում: Այս տարի այդ կազմակերպությունը ծրագրեր է իրականացնում Տավուշի մարզում:

Զբաղվածության ոլորտում, մասնավորապես վերապատրաստման գործում, նաախաձեռնություն կարող են ցուցաբերել եւ զբաղվածության ծառայությունների հետ համագործակցել նաև հասարակական կազմակերպությունները:

Ամփոփելով հարցման արդյունքները գալիս ենք այն հետեւության, որ աշխատանքի շուկայում օրեցօր աճող մրցակցության պայմաններում մրցունակ մնալը դարձել է օրախնդիր եւ քիչ ջանքեր չի պահանջում անձից: Շուկայական տնտեսության պայմաններում որոշ մասնագիտություններ դարձել են «ժամանակավրեպ» եւ աշխատանքի շուկայում մրցունակ մնալու միակ պայմանը վերամասնագիտանալն է: Այս դեպքում կարելի է աշխատանք փնտրող անձի արագ կողմնորոշվելու, ինչու չէ, նաև հոգեբանական մի շարք արգելքներ հաղթահարելու ընդունակությունը: Շատ աշխատանք փնտրողներ դեռևս չեն գիտակցում, որ ապրում ենք նոր հասարակության

մեջ, նոր ձեւավորվող տնտեսական հարաբերությունների պայմաններում, ուր յուրաքանչյուր առանձին դեպքում աշխատողին ընտրելու չափանիշները սահմանում է գործատուն: Շատերը շարունակում են մնալ այն թյուր կարծիքին, թե զբաղվածության ծառայությունը պարտավոր է իրենց տեղավորել աշխատանքի: Շուկայական տնտեսության պայմաններում պետությունը (այս պարագայում զբաղվածության ծառայությունը որպես պետական կառույց) մնան պարտավորություն չունի: Նրա խնդիրն է աջակցել աշխատանք փնտրողին իր հիմնական նպատակին հասնելու գործում: Այն կարող է լինել մի դեպքում աշխատանքի խորհրդատվություն, մեկ այլ դեպքում վերամասնագիտացման կամ որակավորման բարձրացման ճանապարհով անձի մասնագիտական հմտությունների համապատասխանեցում գործատուի պահանջներին: Զուգահեռաբար զբաղվածության ծառայության մասնագետի խնդիրն է բացատրել իր հաճախորդին, որ աշխատանք փնտրելը նույնպես աշխատանք է եւ այն էլ ոչ այնքան հեշտ: Այս աշխատանքը, բացի ունեցած մասնագիտական հմտություններից, պահանջում է մի շարք այլ ունակություններ եւս. այն է՝ սեփական հնարավորությունների ճիշտ գնահատում, նպատակաուղղվածություն, անընդհատ ինքնակրթությամբ զբաղվելու ջանք, համառություն, հաղորդակցվելու ձիրք, ճկունություն եւ համբերություն, առաջարկելու եւ համոզելու ընդունակություն:

Այսորակները եւ ի հարկե, առաջին հերթին բարձր մասնագիտական պատրաստվածությունն է, որ հնարավորություն կտան անձին դիմանալու աշխատաշուկայի մրցակցությանը, ի հարկե, պետական աջակցության եւ հոգածության պայմաններում:

Հետեւությունը մեկն է՝ աշխատաշուկայի զարգացումը մեծապես կախված է զբաղվածության բնագավառում տարվող ակտիվ քաղաքականությունից, որի հիմնական միջոցառումներից է մարդկային ռեսուրսների զարգացումը: Ահա այն առաջարկները, որոնց իրականացմամբ հնարավոր կլինի հավասարակշռություն ստեղծել աշխատաշուկայում.

Պետական քաղաքականության մշակում՝ ուղղված մասնագիտական ուսուցման միասնական համակարգի ստեղծմանը եւ տնտեսության կադրային ապահովմանը.

Հանրապետությունում զբաղվածության տարածքային կենտրոններին կից մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծում.

Ուսումնական մասնագիտական հաստատությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխան տեխնիկական զինում.

Կրթական համակարգի կողմից աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան մասնագիտությունների ճիշտ պլանավորում՝ զբաղվածության ծառայության հետ սերտ համագործակցելու ճանապարհով.

Պետական կրթության համակարգում սոցիալական աշխատողի պատրաստման ինստիտուտի ձեւավորում.

Գործազուրկների մասնագիտական ուսուցման ծավալների ընդլայնում.

Մեծահասակների մասնագիտական ուսուցման ցանցի ստեղծում.

Ձեռնարկություններում աշխատողների մասնագիտական հմտությունների բարձրացման հարցում գործատուների պատասխանատվությունը մեծացնելուն ուղղված օրենսդրական դաշտի ստեղծում.

Գործարարությամբ զբաղվել ցանկացողների համար տեղեկատվական-խորհրդատվական պետական կենտրոնների ստեղծում.

Հանրապետությունում տնտեսության զարգացման առաջնային ճյուղերի եւ դրանց համապատասխան մասնագիտությունների ճշտում՝ ըստ միջազգային զբաղմունքի դասակարգիչների.

Ոչ պետական ուսումնական հաստատությունների լիցենզավորման չափանիշների խստացում եւ համապատասխանեցում ժամանակակից պահանջներին:

Սիրելի՛ աշխատանք փնտրող քաղաքացիներ, այո՛, այսօր ապրում ենք ոչ հեշտ ժամանակներում: Գործատուի պահանջներն այսօր այլ են եւ դա ժամանակի պահանջն

է: Ձե՛ր մեջ փորձեք փնտրել Ձեր դժվարությունները: Վերագնահատեք ինքներդ Ձեզ, Ձեր հնարավորությունները, կատարեք փոքրիկ ներդրում, լրացրեք Ձեր գիտելիքները, հմտությունները եւ հաջողությունը կժպտա Ձեզ: Այդ հարցում Ձեզ կաջակցեն Ձեր բնակավայրում գործող զբաղվածության կենտրոնները, որտեղ Դուք կստանաք մասնագիտական կողմնորոշում եւ մանրամասն տեղեկություններ՝ մարզի տարածքում գործող այն ուսումնական հաստատությունների վերաբերյալ, որտեղ կազմակերպվում են մեծահասակների մասնագիտական ուսուցում՝ Ձեզ անհրաժեշտ մասնագիտությամբ:

Մարզերի տարածքներում գործող ուսումնական հաստատությունների ցանկը

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ք. Աշտարակ

Ն. Աշտարակեցու անվան համալսարան
Երեւանյան 51, հեռ. 35783

Աշտարակի արհեստագործական դպրոց
Էջմիածնի խճուղի 33, հեռ. 33212

ք. Թալին

թիվ 76 ՄՏՈՒ
Խանջյան 16

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ք. Արտաշատ

Արտաշատի արհեստագործական ավագ դպրոց
Աթարբեկյան 156

Արտաշատի արտադպրոցական աշխատանքային կենտրոն հեռ. 23697

ք. Մասիս

Մասիսի գյուղատնտեսական պետական քոլեջ հեռ.44417

Մասիսի «Սիս» համալսարան հեռ.45377

«Ինֆոպրինթ» ՍՊԸ

ք. Մասիս 9/44, հեռ.40960, 42108

Հայկական կարմիր խաչի Մասիսի մասնաճյուղ

ք. Մասիս, Շիրազի 10, հեռ.41941

ք. Արարատ

«Սաբլայն» Շահումյան 50, հեռ.41513

«Քոլտոն» երիտասարդական կենտրոն

Իսահակյան, հեռ.42139

ք. Վեդի

Վեդու իրավատնտեսագիտական քոլեջ

Ս. Վարդանյան 1-ին նրբ., հեռ.24541

Վեդու բժշկական ուսումնարան

Թումանյան 5, հեռ.2 11 36

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ք. Արմավիր

Ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ

Աբովյան 140, հեռ.63709

ք.Վաղարշապատ

Գրիգոր Լուսավորիչ համալսարան

Սպանդարյան,

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ք. ՍԵԼԱՆ

Սելանի պետական քոլեջ
Նաիրյան 156, հեռ.23170
Սելանի բժշկական ուսումնարան
Թումանյան 2
Թիվ 9 արհեստագործական ավագ դպրոց
Նաիրյան 1-ին նրբ., 30

ք. Մարտունի

«Վանեվան» համալսարան
Երեւանյան 14, հեռ.43062
«Տարոն» մենեջերների կրթախորհրդատվական ակումբ
Չարենցի 21, հեռ.43309
«Թոփ մենեջմենթ»
Սայաթ Նովա 39, (42741
«Անահիտ» ՍՊԸ լեզվի կենտրոն
Միասնիկյան 3, հեռ.42734

ք. Գավառ

«ՇԱՅ» ՍՊԸ Գ. Նարեկացի 43, հեռ.24674
Գավառի պետական համալսարան
Ազատության, հեռ.23803
Ինդուստրիալ-մանկավարժական տեխնիկում
Ազատության 25, հեռ.23652
Ա. Թամամշելի անվան գյուղատնտեսական քոլեջ Ազատության 1, հեռ.23402

ք. Վարդենիս

Մանկավարժական ինստիտուտ
Երիտասարդ կանանց քրիստոնեական կենտրոն
Պետական քոլեջ

ԼՈՌԻ ՄԱՐԶ

ք. Վանաձոր

«ԱԵԼ». քիզնես կենտրոն
Վարդանանց 82/34, հեռ.22719
«Արմինֆո» ՍՊԸ
Վարդանանց 102, հեռ.40455
«ԲԼԵՅՁ» ՍՊԸ
Տիգրան Մեծի 47/4, հեռ.23266
ՀՀ Լոռու մարզի հանրային գրադարանի ինֆորմացիոն վերլուծական կենտրոն
Վարդանանց 25, հեռ.41062
«Մխիթար Գոշ» հայ ռուսականմիջազգային համալսարան
Տիգրան Մեծի 30ա
Լոռու մարզային հեռաուսուցման կենտրոն հեռ.2 57 38
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ
Տիգրան Մեծի 36
«Կոմայուտեր սերվիս» ՍՊԸ
Մյասնիկյան 3, հեռ.42352
«ՄՎԿ» ՍՊԸ
Մովսես Խորենացու 19/ 124
ՀՊԾՀ Վանաձորի կրթահամալիր
Մաշտոցի 116, հեռ.5 85 70, 5 67 04

ք. Ալավերդի

Ալավերդու պետական քոլեջ
Սանահին, Սարահարթ 3/6ա, հեռ.22528

- ք. Սպիտակ
«ԵՄՔԸ» հասարակական կազմակերպություն
Միասնիկյան 1, հեռ.22548
- ք. Ստեփանավան
«Լեզվի եւ համակարգչային կենտրոն»
Միլիոնի 11

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

- ք. Հրազդան
Հրազդանի թիվ 67 արհեստագործական ավագ դպրոց
Միկրոշրջան, հեռ.26571
Հրազդանի պետական քոլեջ
Կենտրոն թաղամաս, հեռ.21486
«Տելենտ» ՍՊԸ
Կենտրոն թաղամաս, հեռ.23246
- ք. Չարենցավան
Չարենցավանի պոլիտեխնիկում
1-ին միկրոշրջան, 1-ին թաղ., հեռ.43282
Չարենցավանի թիվ 79 պրոֆտեխնիկական ուսումնարան
1 -ին թաղամաս, 6-րդ շենք
- ք. Եղվարդ
Եղվարդի թիվ 1 միջն. դպրոց
Սաֆարյան 50, հեռ.21253
- ք. Աբովյան
Աբովյանի կրթահամալիր
4-րդ միկրոշրջան, ուս.թաղ., հեռ.21467

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

- ք. Գյումրի
Մանկավարժական ինստիտուտ
Պ. Սեւակի փ. 4, հեռ.32199
Պոլիտեխնիկում
Միասնիկյան փ., 4-րդ թաղ., հեռ.31298
ճարտարագիտական ինստիտուտ
Մ. Մկրտչյանի փ. 2, հեռ.31926
Ժողովրդական ինստիտուտ
Վ. Սարգսյանի փ. 41, հեռ.35711
Բիզնեսի օժանդակության կենտրոն
Նժդեհի փ., 14 տ., 45 բն.
«Շիկ» ընկերություն
Շիրակացու 68, հեռ.22153
- ք. Մարալիկ
ՀՀ ԿԳՆ Մարալիկի արհեստագործ. ավագ դպրոց
Տեքստիլագործների 2, հեռ.21210
- ք. Արթիկ
Արթիկի պետական քոլեջ
Տոնակայան 5
Արթիկի բժշկական քոլեջ
ՄՊՏՈՒ Աբովյան 14, հեռ.52212

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ք. Գորիս

ՀՊՆԳ Գորիսի կրթահամալիր
Ավանգարդ, հեռ. 422767
ԿԳՆ ԿԲԿ-ի Սյունիքի մասնաճյուղ
Գ. Աշոտի 2, հեռ.24000
Գորիսի գյուղատնտեսական պետական քոլեջ
Վանքի տափ 7, հեռ. 20005
ԿԳՆ Գորիսի պետական մանկավարժական քոլեջ
Հայկազունների 4, հեռ.20185
«Սյունիք» ինստիտուտ
Կապանի խճուղի, թիվ 21 միջն. դպր.

ք. Կապան

ՀՊՃՀ-ի Կապանի կրթահամալիր
Գ. Արզումանյան 11, հեռ.66761
Կապանի պետական ճարտարագիտական քոլեջ
Գ. Արզումանյան 11, հեռ.53061
Կապանի ձռներեցության աջակցության կենտրոն
Մ. Ստեփանյան 6, հեռ.63876
ՀՊՃՀ-ի Կապանի հենակետային վարժարան
Ռ. Մելիքյան 8, հեռ.65241
Կապանի հատուկ կրթության գիշերօթիկ արհեստագործական դպրոց
Սպանդարյան 4

ք. Մեղրի

Մեղրու պետական քոլեջ
Զ. Անդրանիկ 10, հեռ.2892

ք.Սիսիան

Ինտերնետ կենտրոն
Շիրվանզադեի 12 , հեռ.3651
Հումանիտար քոլեջ
Սիսիական 41, հեռ.3232
Ժողովրդական տնտեսության քոլեջ
Չարենցի 12, հեռ.4847
«Լուսնթաց» կրթական կենտրոն
Ա. Մանուկյան 4, հեռ.5490
Սիսիանի ուսուցիչների միություն
Սիսիական 41, հեռ.2944

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ք. Եղեգնաձոր

Եղեգնաձորի պետական քոլեջ
Սպանդարյան 3, հեռ.23750
Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան
Վ. Տեր-Առաքելյան 10. հեռ.24530
Եղեգնաձորի բիզնես կենտրոն
Միկոյան 3, հեռ.22113

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ք. Իջեւան

ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղ
Ուսանողական 13, հեռ.32202

«Գալիք» կրթարան
Նալբանդյան 1, (թիվ 4-րդ դպրոց)

ք. Դիլիջան

Դիլիջանի համակարգչային ուսուցման կենտրոն

Գորկու 2, (2427

«Դիլսետ սերվիս»

Գորկու 2, հեռ.2427

Խորհրդատվական գրքույկը հրատարակման է պատրաստել ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «Ձբաղվածության հանրապետական գործակալություն» ծառայությունը:

Սոցիոլոգիական ուսումնասիրության արդյունքները հետաքրքիր եզրահանգումների տեղիք են տալիս, նաեւ օգտակար խորհուրդներ են պարունակում շուկայական հարաբերությունների պայմաններում մրցունակ լինելու, մասնագիտական ունակություններն ու հմտությունները նոր պահանջներին համապատասխան մակարդակ ապահովելու, սեփական հնարավորությունները վերագնահատելու եւ դրանց համապատասխան աշխատանք ունենալու առումով: Աշխատաշուկան թելադրում է նոր պահանջներ, որոնք հաղթահարելու պայմաններից մեկն էլ իրատեսական մոտեցումն է, նոր մտածելակերպի արմատավորումը:

Ուրախ կլինենք, եթե այս գրքույկը Ձեզ փոքր ինչ կողմնորոշի դեռեւս լարված աշխատաշուկայում: Բայց եւ չմոռանանք, որ «բոլոր ամրոցները կառուցված են... մի օր գրավելու համար»:

Գրքույկը հրատարակվել է ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Աղքատության հաղթահարման ամփոփ ռազմավարական ծրագրի մշակման մասնակցության գործընթացի շրջանակներում:

Առաջարկությունների համար կարող եք դիմել ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն», հասցեն՝ Երեւան 375010, Հանրապետության Հրապարակ, Կառավարության տուն1, մասնաշենք 4, հեռ. 52-37-90, 54-30-51, ֆաքս՝ 52-37-90, էլ. փոստ՝ info@gov.am:

ԱՆՌԾ. Ամփոփ ծրագրի մշակման գործընթաց



ՄԱՐԲԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԹԱԳԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԾՐԱԳԻ

Մասնակցության Գործընթաց

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐ

ՉԱՋՈՂՈՒԹՅԱՆ 10 ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՉԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆԸ

*Դու պետք է ամբողջ օրն
աշխատես այնպես, ասես քո
կյանքը դրված է կշեռքի նժարին*

Քո կյանքը չպետք է անցնի ծուլության մեջ: Չես կարող առավոտից իրիկուն միայն ուտել, խմել, սիրով զբաղվել ու զվարճանալ: Աշխատանքը քո թշնամին չէ, այլ քո բարեկամն է ու օգնականը: Եթե ամեն կարգի աշխատանք արգելվի, դու ծնկի կիջնես ու մահ կաղերսես:

Դու ամենեւին էլ պարտավոր չես սիրել քո աշխատանքը: Անգամ թագավորները երբեմն երագում են այլ աշխատանքների մասին: Կարելուր չէ, թե ինչ ես անում, կարելուր է՝ ինչպես ես անում այն, ինչով քեզ վիճակված է զբաղվել: Իր մուրճին մատների արանքով նայող ոչ մի մարդ չի կարող պալատ կառուցել:

Դու կարող ես աշխատել ակամա, կարող ես աշխատել շնորհակալության զգացումով, կարող ես աշխատել իբրև մարդ, կարող ես աշխատել նաև անասունի պես: Աշխարհում չկա այնպիսի աշխատանք, որքան էլ կոպիտ ու կեղտոտ լինի այն, որ չկարողանաս կատարել. չկա այնպիսի ստորացուցիչ աշխատանք, որի մեջ չկարողանաս հոգի դնել. մարդկությունը դեռևս չգիտի այնպիսի ծանր ու ձանձրալի աշխատանք, որը չկարողանաս դարձնել հետաքրքիր:

Միշտ կատարիր այն, ինչ քեզ խնդրում են, անգամ ավելին արա:

Իմացիր, որ հաջողության հասնելու միայն մի հայտնի միջոց կա՝ անդադրում աշխատելը: Սակայն եթե դու չես կարող վճարել այդքան բարձր պարգևի՝ այդ գնով հաջողության համար, ապա պատրաստ եղիր կյանքդ ապրել գորշության ու աղքատության մեջ: Խղճահարության զգացումով վերաբերվիր նրանց, ովքեր ասում են, որ դու ավելին ես անում, քան ստանում ես: Իմացիր, որ քիչ արդյունք տվողն առավել քիչ է ստանում:

Երբեք մի նվազեցրու քո ծառայություններն ու ջանքերը, անգամ եթե աշխատում ես ուրիշի համար: Նրանից, որ ինչոր մեկը քեզ վճարում է կատարածդ աշխատանքի դիմաց, քո վաստակը չի պակասում: Միշտ էլ քո գործը կատարիր լավագույն ձևով:

Այսօր ցանած աշխատանքի պտուղները կհնձես վաղը:

Շնորհակալ եղիր աշխատանքիդ համար եւ հարգիր նրան, ով այն քեզ տվել է: Եթե աշխատանք չունենայիր, անգամ ամենանվաստացուցիչն ու ծանրը, այժմ չէիր

կարող ոչ ուտել, ոչ էլ կյանքի ողջ գեղեցկությունը վայելել: Դու չէիր կարող հանգիստ քնել, չէիր լինի հիմնկվա պես առողջ, չէիր ուրախանա հարազատներիդ ու սիրելիներիդ շնորհակալական ժպիտների համար: Իսկ նրանք քեզ սիրում են ոչ թե քո կատարած աշխատանքի բնույթի, այլ նրա համար, որ դու ուղղակի աշխարհում կաս:

ՉԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՆՈՆԸ

Դու պետք է հիշես, որ քո համբերությամբ ի զորու ես փոխել ճակատագիրդ

Իմացիր, որքան համբերատար ու համառորեն ես գնում առաջ, այնքան նշանակալից կդառնա ակնկալվող վարձատրությունը: Մեծագույն հաջողությամբ կվաճատրվի համբերատար ու ջանադիր աշխատանքը:

Կյանքը ձիարշավ չէ՝ առաջին տեղը գրավել շտապելու անհրաժեշտություն չկա:

Ցանկացած ճանապարհ քեզ այնքան էլ երկար չի թվա, եթե քո յուրաքանչյուր քայլը մտածված եւ անշտապ լինի: Ինչպես ժամտախտից՝ խուսափիր այն սայլից, որ ամենակարճ ճանապարհով ուղեւորություն է խոստանում, խոստանալով արագ հարստություն, հաջողություն եւ փառք: Գնա ոտքով: Դու ունես ուժեր ամենին ինքնուրույն հասնելու:

Համբերությունը դառը բան է, բայց նրա պտուղները քաղցր են: Համբերությամբ կարող ես դիմակայել ցանկացած դժբախտության ու փորձության, գոյատևել ու հաղթել:

Ձինվելով համբերությամբ, կյանքում կարող ես հասնել ամենին, ինչին կցանկանաս:

Համբերությունը քո եւ քո հարազատների առջեւ նվիրյալ ցանկությունների դռներ բացող բանալի է:

Հասկացիր, որ դու ի զորու չես միանգամից հասնել հաջողության, այնպես, ինչպես ժամանակից շուտ դաշտում չեն ծաղկում շուշանները: Նայիր, թե ինչ հսկայական բուրգեր են կանգնեցված, բայց այն կառուցողներն ունեցել են միայն քարեր ու ժամանակ: Աղքատ է նա, ով համբերություն չունի: Ահավոր վերքերն ու սարսափելի հիվանդությունները բուժվում են աստիճանաբար:

Հաջողության հասնելու համար անհրաժեշտ թեկուզ հազարավոր հատկություններ ունեցիր ու տարածիր դրանց մասին աշխարհով մեկ, ոչ մեկը դրանցից քեզ չի օգնի, եթե միեւնույն ժամանակ չունես համբերություն: Առանց համբերության խիզախությունը քեզ կսպանի: Եթե դու հպարտ ես ու անհամբեր, ի վիճակի ես կործանել քո ամենափայլուն կարիերան:

Պայքարել հեքիաթային հարստության հասնելու համար, ընդ որում չունենալով համբերություն, նշանակում է միայն դրանից էլ ավելի հեռացնել միհար դրամապանակը: Համառությունն առանց համբերության անհնարին է: Ոչ ոք ի զորու չէ հասնել ցանկալի արդյունքների, եթե ի զորու չէ համբերատար սպասել:

Համբերությունը հզոր ուժ է: Կիրառիր այն, ամրապնդիր ոգիդ եւ մեղմիր բնավորությունդ, զսպիր զայրույթդ եւ դեն նետիր նախանձն ու սնափառությունդ: Չսպիր լեզուդ, ազատություն մի՛ տուր ձեռքերիդ եւ ազատվիր ամենից, ինչը խանգարում է քեզ արժանավայել կյանք սկսել:

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԿԱՆՈՆԸ

*Դու պարտավոր ես մանրամասն
նախագծել քո ձեռքբերումների ուղին,
այլապես չես լինի քո ճակատագրի տերը*

Հուսով եմ, արդեն հասկացել ես, որ առանց համառ աշխատանքի անհնարին է ցանկալի հաջողության հասնել: Նույն արդյունքն է քեզ սպասվում, եթե անհամբեր լինես:

Սակայն դու կարող ես փութաջան աշխատել եւ լինել Հոբից էլ համբերատար, բայց երբեք վեր չես բարձրանա քո մռայլ ու խղճուկ գոյությունից, եթե չունես հստակ մշակված ծրագրեր եւ քո առջեւ դրված նպատակներ: Ոչ մի նավ չի բարձրացնի խարիսխը եւ բաց ծով դուրս չի գա՝ չիմանալով նպատակը: Ոչ մի, նույնիսկ ամենահզոր բանակը, դուրս չի գա թշնամու դեմ, առանց պայքարի նախագիծ ունենալու: Նույնիսկ ծիթեմին երբեք չի ծաղկի առանց պտուղ տալու հույսի:

Անհնարին է կյանքում ցանկալիին իսկապես հասնել՝ առանց նպատակ ունենալու:

Կյանքը խաղ է՝ մի քանի խաղացողներով եւ բազմաթիվ դիտողներով: Բայց նրանք, ովքեր պարզապես դիտարկում են անիմաստ զոյատեւումը, աննպատակ եւ աներազանք անօգուտ թափառում են կյանքում, նույնիսկ առանց վաղվա օրվա ծրագրերի, կատարել են իրենց ընտրությունը՝ անվտանգության մեջ մտած դիտել կյանքի ընթացքը: Կարո՞ղ է սխալվել նա, ով ոչ մի քայլ չի արել խաղին մասնակցելու համար:

Ո՞վ ես դու՝ հանդիսատես թե՞ խաղացող: Եթե խաղացող ես, ապա իմացի՞ր խաղացողը չի կարող չհաղթել: Նրանք, ովքեր հաղթանակում են, բաժին են ընկնում փառքն ու հաղթանակի պտուղները, իսկ պարտվողն իր հետ տանում է անգին դաս, որ վաղն իրեն կօգնի հաղթել:

Ինչի՞ ես դու ուզում հասնել կյանքում: Նախքան եռանդով գործին անցնելը կենտրոնացիր եւ ուշադիր մտածիր՝ ինչի՞ ես ուզում հասնել: Ուզում ես հարստանա՞լ, իշխանություն ունենալ, ուզո՞ւմ ես ընտանիքիդ հետ համահունչ ապրել, ուզո՞ւմ ես նվաճել հարգանք ու պատիվ: Ինչպիսին էլ որ լինեն քո նպատակները, հիշիր եւ հետեւիր դրանց: Բայց, հաշվի առ, որ ողջ ասվածն էլ կարող է հերիք չլինել, քանզի կյանքը նենգ է: Համբերությամբ լցված ու նպատակաուղղված համառորեն աշխատողներից ոչ բոլորն են հաջողության հասել: Այնուամենայնիվ, առանց այս երեք բաղկացուցիչների հաջողությունն անհնար է:

Հաջողության հասնելու համար պետք է օգտագործել ամեն հնարավորություն: Ու եթե դրանցից մեկը չի հաջողվել, նորից ու նորից փորձիր:

Պլանավորիր կյանքդ այսօր: Հարց տուր քեզ, ինչի՞ կուզենայիր հասնել, եթե շարունակեիր զբաղվել նրանով, ինչով զբաղվում ես: Ապա որոշիր, ինչի կուզենայիր հասնել նախանշված ժամանակահատվածում՝ հարստության, հասարակական դիրքի թե այլ բանի եւս, ի՞նչ ես այդքան վաղուց երազում: Ապա մանրամասն ծրագրավորիր գործերդ: Գրանցիր՝ ի՞նչ ես անելու հաջորդ տասներկու ամիսներին, որպեսզի հասնես նպատակիդ:

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԿԱՆՈՆԸ

*Ճանապարհորդելով
արելի լույսով միշտ պետք է
պատրաստ լինես մթությանը*

Հասկացիր. ոչինչ հաստատուն չկա աշխարհում: Փոփոխությունները քո կյանքում նման են տարվա եղանակների փոփոխությանը, եւ դա անխուսափելի է: Ամեն ինչ անցնում է, եւ՝ լավը, եւ՝ վատը:

Պետք չէ մտածել երկար տարիներ առաջ: Կյանքում, ինչպես պատերազմում, հեռուն գնացող ծրագրերն անիմաստ են: Ամեն ինչ կախված է հակառակորդի գործողությունների անսպասելիությունից, որ անհնար է կանխագուշակել, սակայն պետք է իմանալ ինչպես պայքարել դրանց հետ:

Եթե դու պատրաստ չլինես քո թշնամիներին՝ տհաճություններին դիմադրել, ապա նրանք կհայտնվեն քո ճանապարհին որոշակի հաջորդականությամբ, եւ քո կյանքը կազմված կլինի անկանխատեսելի թռիչքներից ու անկումներից: Այն կնմանվի փոթորկի ժամանակ ծովի ահեղ ալիքներին: Մակընթացություններն ու տեղատվությունները, արեւածագերն ու մայրամուտները, հարստությունն ու աղքատությունը, ուրախությունն ու դժբախտությունը. այս ուժերից յուրաքանչյուրը կիշխի քեզ վրա, բայց յուրաքանչյուրն իր ժամանակն ունի:

Խղճահարության է արժանի այն հարուստը, որ լող տալով բավականության մեջ, մտածում է, թե դա անվերջ է: Եվ երբ դժբախտությունը թակի իր դուռը, նա չի կարող պայքարել. նա անպաշտպան է դրա անողոք հայացքի դիմաց, եւ նրա աշխարհը փլատակների կվերածվի:

Խղճալի է անհաջողությունների ու հիասթափությունների, ցավի ու տխրության հերթափոխով տառապած աղքատը: Աստիճանաբար նա դադարում է գործել, չի փորձում իր հաջողությունը բռնել եւ հասնել դրան, նույնիսկ եթե վերջինս նրան օգնության ձեռք է մեկնել: Երբեք մի հրաժարվիր փորձերից, որքան էլ դրանք քեզ անպտուղ թվան սկզբում:

Միշտ հուսա, որ ցանկացած իրավիճակ կարելի է փոխել: Թեեւ սիրտդ ծանրացած է, մարմինդ տնքում է բազմաթիվ հարվածներից, դրամապանակդ դատարկ է եւ ամեն ինչ ձեռքիցդ փախչում է՝ մի՛ հանձնվիր: Չէ՞, որ գիշերվա մթին հաջորդում է առավոտը, եւ, ուրեմն, քո բոլոր դժբախտություններին էլ վերջ կլինի: Այդպես եղել է: Եվ այդպես կլինի՝

Եթե աշխատանքդ, համբերությունդ եւ ապագայի քո պլանները քեզ հաջողություն են բերել, գտիր նրանց, ովքեր թաղված են հիասթափության հատակում, եւ օգնիր նրանց բարձրանալ: Միշտ պատրաստ եղիր ցանկացած անսպասելիության, մի օր կարող է այնպես պատահել, որ նա, ում օգնել ես դժվար պահին, քեզ դժբախտության մեջ չի թողնի:

Լավ հիշիր, որ ոչինչ հավերժ չէ, բացի միակ գանձից՝ սիրուց: Երբ անհայտանում են թե՛ հարստությունը, թե՛ գեղեցկությունը, մնում է միայն սերը:

Բայց դու պետք է պատրաստ լինես այն բանին, որ կարելի է նաեւ սերը կորցնել. ավար դու գիտես, որ ժամը կգա եւ դու կչքանաս հավիտենության մեջ, հանգիստ կգտնես այնտեղ, որտեղ չկա ոչ թռիչք, ոչ անկում, ոչ ցավ, ոչ ողբ, որտեղ չկան հաղթողներ ու պարտվողներ:

ՉԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՉԻՆԳԵՐՈՐԴ ԿԱՆՈՆԸ

*Միշտ ժպտա անհաջողություններիդ
երեսին, եւ նրանք կնահանջեն*

Դու աստիճանաբար հասնում ես կյանքի իմաստությանը, քանզի արդեն հասկացել ես, որ դժբախտությունը մշտական չէ: Բայց այս ճշմարտության միայն իմացությունը բավարար չէ: Անհաջողություններն ու ձախողությունները կարող են քո ծրագրերն ու կյանքդ լավացնելու փորձերդ խախտել:

Դրա հետ պայքարի ձեւը միակն է.

ԳՐԿԱԲԱՑ ԴԻՄԱՎՈՐԻՐ ԴՐԱՆՔ:

Քանի որ այս պատվիրանը հակասում է ցանկացած տրամաբանությանն ու սկզբունքին, այն շատ դժվար է հասկանալ, իսկ առավել դժվար է շարժվել դրա խորհրդով:

Բայց ուզածիդ չափ լացելով անհաջողություններիդ վրա, շտապ մաքրիր աչքերդ, որ արցունքները չխանգարեն քեզ ճիշտը տեսնել: Հասկացի՛ր, անհաջողությունները, որոնց դեմ պայքարում ես, օգնում են քեզ, դարձնում են ավելի ուժեղ, խիզախ եւ փորձառու:

Քո հակառակորդը, վերջիվերջո, կդառնա քո լավագույն օգնականը:

Քո թախիծը նման է տանուկ, տհաճ եւ օտար անձրեւի: Բայց անձրեւից հետո ամպերի տակից նորից արեւն է դուրս գալիս, բացվում են շուշանները, վարդերը, ծաղկում են նարնջի ծառերը: Ո՞վ գիտի՝ ինչ բացառիկ գործեր կանես դու տանջանքների բարեբեր անձրեւից ու դժբախտությունների տապից հետո: Չէ՞, որ նույնիսկ անապատն է ծաղկում փոթորկից հետո:

Դժբախտությունը նաեւ քո լավագույն ուսուցիչն է: Հաղթելով՝ քիչ բան կյուրացնես, բայց ձախողումից ձեռք կբերես անհամեմատ ավելին՝ գիտելիքների մեծ պաշար: Միայն այդ անգին գիտելիքների շնորհիվ ես դու ճանաչում քո «եսը», քանզի դժբախտությունը քեզ կազատի շրջապատող քծնողներից: Իսկ ովքե՞ր են քո ընկերները: Ստուգելու համար, թե ով է քո ընկերը, ամենալավ միջոցը դժբախտության պահին օգնություն խնդրելն է:

Կյանքիդ սեւ օրերին հիշիր, որ անհաջողություններն եւս իրականում մի քայլ են դեպի հաջողությունը: Ցանկացած ճանապարհ, նույնիսկ այն, որ ընտրել ես սխալմամբ, քեզ կբերի ճշմարտության, իսկ յուրաքանչյուր փորձությունն նվազեցնում է սխալվելու քո հնարավորությունները: Դժբախտությունները միայն աստիճաններ են, որ տանում են դեպի հանգստություն եւ երազանքների կատարում: Արդյո՞ք երկար ժամանակով:

Դա կախված է քեզանից:

ՉԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ԿԱՆՈՆԸ

*Լավ հիշիր, որ կյանքիդ
ծրագրերը կարող են ընդամենը
երազանք մնալ, եթե անգործ լինես*

Նա, ում պատվախնդրությունը սողում է երկրի վրա երկնքում ազատ ճախրելու փոխարեն, նա, ով դանդաղում է այն ժամանակ, երբ վաղուց պետք էր նետվել մարտի, դատապարտված է անընդհատ պայքարել անհաջողությունների հետ:

Հիմար է նա, ով տեսնում է, ինչպես է ծովից հսկա ալիքն իր վրա հասնում, բայց շարունակում է անշարժ մնալ՝ վաղ թե ուշ այն իրեն կտանի բաց ծով: Հավանաբար հիմար է նաեւ նա, ով իր ճակատագիրը փոխելու հնարավորություն է ստացել, բայց չի շտապում. մերձավորը կօգտվի այդ հնարավորությունից:

Միայն գործողություններն են ուժ եւ հսկայական հնարավորություններ տալիս: Կյանքն ինքը կգնահատի քո արարքները՝ առանձնացնելով հատիկը մոլախոտից: Ո՞վ է ընդունակ գնահատել քո տաղանդը՝ առաջնորդվելով քո զգացմունքներով ու էմոցիաներով: Եվ ինչպե՞ս կհայտարարես քո ընդունակությունների մասին, եթե ընդամենը դիտարկում ես խաղը:

Խիզախությամբ գինվիր: Աշխատանքն ու տխրությունը հավերժական թշնամիներ են: Երբ լարված են մկանները, մատները բռունցք են, երբ պատրաստ ես մարտի, իսկ ուղեղը զբաղված է քո առջեւ դրված նպատակով, ապա դու ժամանակ չես ունենա ո՛չ ափսոսանքի, ո՛չ էլ քեզ խղճալու համար: Տեղում մի՛ նստիր, գործողությունը դարձան է, որ բուժում է ցանկացած վերք:

Հիշիր, որ համբերությունը սպասումի արվեստն է, այն բանի հույսը, որ քո աշխատանքով դու դառնում ես արժանի լավագույն կյանքի, իսկ գործողությունը այն ուժն է, որ ընդունակ է քո ցանկացած երազանք իրականացնել: Հավատա, արժեքավորն արժանի է երկար սպասման, բայց եթե դու անընդհատ զբաղված ես, այն քեզ ուժասպառ չի անի:

Ոչ ոք ոչինչ չի անի քո փոխարեն: Քո պատվախնդիր ծրագրերը կդադարեն անբանի երազանք լինելուց, եթե մարտի դուրս գաս այն ուժերի դեմ, որ քեզ դարձնում են ոչնչություն: Ինչոր բան նախաձեռնելը միշտ էլ վտանագավոր է, բայց նստել եւ սպասել, որ ամեն ինչ կհոսի ձեռքերիդ մեջ, անհաջողությունից էլ վատ է:

Ամեն ինչ, ծնվելու օրվանից սկսած մինչեւ մահ, կնքված է անվստահության դրոշմով: Ծիծաղիր քո կասկածների վրա եւ վստահորեն առաջ քայլիր: Եվ եթե քո նպատակը կյանքից հաճույք ստանալն է, ապա հավաքիր քեզ եւ աշխատիր: Որքան շատ ես անում, այնքան շատ կարող ես անել, եւ որքան շատ ես զբաղված այսօր, այնքան մեծ ուրախություն է քեզ սպասվում ապագայում: Ուրեմն շարունակիր գործել ինքդ, որպեսզի հանգամանքների ձեռքին գործիք չդառնաս:

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ԿԱՆՈՆԸ

*Դու պարտավոր ես անընդհատ
մաքրել ուղեղդ, այլապես այն կվերածվի
սարդոստայնով պատված ձեղնահարկի*

Միտքն ի վիճակի է մեր կյանքը դրախտից դժոխքի եւ դժոխքից դրախտի վերածել:

Ինչո՞ւ ես փորփրում անցյալը եւ վերհիշում գնացած սերն ու քո հիմար արարքները: Այդ մտքերը քեզ չեն օգնի այս առավոտ:

Մի՞թե մինչ օրս չես կարող մոռանալ քեզ բաժին ընկած բոլոր վիրավորանքներն ու հիասթափությունները: Մի՞թե, արցունք թափելով ես ձեռք բերում անհրաժեշտ փորձառությունը, որ քեզ կօգնի ավելի լավ աշխատել ընտանիքի բարօրության համար: Մի՞թե դեռ հիշում ես քեզ վիրավորողի դեմքը: Եվ մի՞թե քաղցր վրիժառության մասին մտքերը քեզ օգնում են քնել:

Ընկերների մահը, անհաջողությունները, ծրագրերի կործանումը, գումարի կորուստը, բառերը, որ վիրավորում են, դավաճանությունները, բաժանումները, չիրականացած նպատակները... Քի՞չ դժբախտություններ են մեզ պատահում: Միայն թե ինչո՞ւ ես այդքան խնամքով պահպանում ողջ այդ հնոտին: Ի՞նչ իմաստ ունի: Ինչո՞ւ ես թույլ տալիս, որ փոշին, սարդոստայնն ու աղբը հավաքվեն քո գիտակցության ձեղնահարկում: Ավելի լավ չէր լինի այն մաքրել եւ սենյակ դարձնել, որտեղ միայն երջանիկ անցկացրած այսօրվա մասին մտքեր կլինեն:

Ավլի՛ր տարիների ընթացքում կուտակված անցյալի տխուր մնացորդները: Նրա փտող ներքինը ժամանակի ընթացքում կթունավորի քեզ, եթե ժամանակին չազատվես դրանից: Մոռանալու ընդունակությունը արատ չէ, այլ՝ բարերարներից մեկն է:

Իմացիր, որ քեզ ցավ պատճառած երեկվա օրն իր սխալներով ու ցանկություններով առհավետ գնացել է քո կյանքից եւ այլեւս ի գորու չէ քեզ որեւէ վնաս պատճառել: Բավական է ափսոսաս անցածի համար: Եվ միշտ իմացիր, որ ոչինչ չես կարող անել վաղվա համար, մինչեւ արեւը նորից դուրս չգա: Կյանքում քո ունեցած ամեն ինչից, եւ ամենը, ինչ ի վիճակի ես փոխել քո կամքով, ընդամենը կարող ես տեղաշարժել ժամացույցիդ սլաքները:

Երբեք թույլ մի տուր, որ անցյալը ստվեր գցի քո այսօրվա վրա:

Սպասել չարին նախքան այն կգա՝ հիմարություն է: Մի մտածիր այն մասին, ինչը կարող է եւ երբեք չլինել: Հոգա միայն ներկայի մասին: Նա, որ անհանգստանում է ապագա անհաջողությունների մասին, դրանք երկու անգամ է ապրում:

Մոռացիր անցյալը եւ թույլ տուր Աստծուն հոգալ քո ապագան. նա շատ ավելի լավ կանի այդ, քան դու:

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ԿԱՆՈՆԸ

*Հասնելով ճամփիդ վերջին,
միշտ թեթևացրու բեռդ*

Այն ժամանակվանից, երբ դու երեխա էիր, շատ ես փոխվել: Դու այս աշխարհ ես եկել առանց որեւէ բանի, բայց տարիների ընթացքում բավարար պաշար ես հավաքել, որպեսզի հիմա, սեփական բարօրության համար ճկվես դրա ծանրության տակ: Կյանքի հաճելի ուղեւորությունը քեզ համար դարձել է պատիժ:

Այսօրվանից սկսած աշխատիր թեթևացնել բեռդ:

Հասկացիր, որ մարդու հարստությունը չափվում է ոչ թե իր ձեռք բերածով, այլ նրանով, առանց ինչի նա չի կարող: Կյանքի մեծագույն բարիքները քո մեջ են, կամ այնտեղ, ուր դու կարող ես հասնել: Լայն բաց աչքերդ եւ կտեսնես ճշմարտությունը՝ երկրային գանձեր մի փնտրիր: Սերը, հանգստությունն ու երջանկությունը. ահա այն թանկագին գանձերը, որոնց արժեքը, ի տարբերություն երկրայինի կամ փողի, ժամանակի ընթացքում չեն նվազում:

Ինչ օգուտ կա ոսկուց, մետաքսից ու պալատներից, եթե ձեռք բերելով դրանք կորցրել ես երջանկությունդ, որ կարծում էիր, թե միշտ քեզ հետ կլինի: Այն միտքը, որ փողն ու սեփականությունը քեզ ուրախություն կբերեն, աշխարհում մեծագույն մոլորություն է: Եթե հարստությունը բեռիդ գլխավոր մասն է կազմում, ուրեմն դու խղճուկ աղքատ ես եւ էշի պես քարշ կտաս քո ոսկե բեռը, մինչեւ մահը քեզ ազատի դրանից:

Քեզ շրջապատող բոլոր անհրաժեշտ թվացող իրերից, բոլոր հաճույքներից այն աշխարհ դու ոչինչ չես տանելու: Չուզենալով ներս թող հարստությունը քո տուն, եւ փակիր նրա ճանապարհը դեպի քո սիրտը: Մի նախանձիր հարուստին ու նրա ունեցվածքին: Նրա բեռը քեզ համար էլ այնքան ծանր կլինի, որքան եւ նրա համար: Մի զոհիր առողջությունդ, հանգստությունդ, պատիվդ, սերդ, աշխարհդ ու խիղճդ երկրային հարստության հասնելու համար: Չափից ավելի բարձր կլինի գինը, որ կվճարես քեզ ոչ անհրաժեշտ իրերի համար, չափից ավելի՝ կորուստը:

Հնարավորինս պարզեցրու կյանքդ: Հարուստ է նա, ով քչով է բավարարվում:

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ԿԱՆՈՆԸ

Միշտ հիշիր, որ կարող ես ուշանալ

Հիշիր, որ մահվան սեւ ուղտը միշտ կողքիդ է:

Միշտ ապրիր այն մտքով, որ քո կյանքը հավերժ չէ: Այդպիսին է կյանքի տխուր հեգնանքը, բայց միայն դա հասկանալով դու ձեռք կբերես ամենօրյա գեղեցկությունը գնահատելու եւ գիշերվա մթության մեջ չլացելու ընդունակություն:

Ծնված օրվանից մեզ վիճակված է մեռնել, եւ ամենքս մեր ժամն ունենք: Հասկացիր այս ճշմարտությունը, եւ թող ամեն ինչ մնա իր տեղում: Բաց աչքերդ եւ կտեսնես, որ քեզ վախեցնող լեռներն իրականում մրջնաբույն են, իսկ քեզ կուլ տալ փորձող հրեշներն ընդամենը՝ մոծակներ: Թող մահը քո ուղեկիցը դառնա, դու չպետք է նրանից վախենաս: Բոլոր նրանք, ովքեր վախենում են մեռնել, լիարժեք չեն էլ ապրում: Պետք է խղճահարություն ունենալ նրանց հանդեպ: Ինչպես կարող են նրանք իմանալ, որ մահվան երջանկությունը մեզնից պահված է եւ, հնարավոր է, որ մենք երջանիկ ենք հավիտենական կյանքում:

Պատկերացրու, որ արդեն այս գիշեր դու պետք է գնաս առհավետ: Քանի դեռ կարող ես, ողբա այն օրը, որ խոստացել ես ընտանիքիդ:

Լաց եղիր քո գնացող սիրո վրա, լացով ողողիր ծիծաղդ եւ հարստության հետեւից վազքդ: Հիմա հասկանում ես, որքան ցնորական էր այն: Ո՞ւմ բաժին կընկնի քո ոսկին: Ընտանիքիդ: Բայց նրանց ինչի՞ն է պետք այն, եթե դու գնում ես: Աշխարհի ոչ մի ոսկու դիմաց նրանք չեն կարող եւս մեկ անգամ տեսնել քո ժպիտը:

Արցունք թափիր, քանի դեռ սիրտդ բաբախում է, այն բանի համար, որ երբեք այլեւս չես շնչի ծաղիկների բույրը, չես մխիթարի վիրավորվածին, չես վերջացնի բարի գործերը, չես այցելի մորդ, երբեք չես վայելի երաժշտության հնչյունները, քեզ զգվեցնող ցավն այլեւս չես զգա, եւ այն բանի համար, որ քո երազանքներն այլեւս երբեք չեն իրականանա:

Հասկացիր, որ հավանաբար ժամանակն ավելի հեռուն է գնացել, քան դու կարծում ես:

Սովորիր ապրել, միշտ հիշիր մահվան մասին եւ երբեք մի վախեցիր նրանից: Քանզի Աստված քեզ հետ է. թե՛ կյանքում եւ թե՛ մահվան մեջ:

Եղիր այն, ինչ կաս, ինչ կարող ես դառնալ. դրանում է երջանիկ կյանքի գաղտնիքը:

Կենդանի հոգիներից յուրաքանչյուրն ունի բազմաթիվ տաղանդներ, տարբեր ցանկություններ, տարբեր ունակություններ: Եղի՛ր ինքդ: Փորձելով լինել ուրիշի նման՝ ընդօրինակելով, ընդամենը կհասնես նրան, որ չես բացահայտի քո տաղանդներից եւ ոչ մեկը եւ կդառնաս հազար անգամ վատը, քան ոչինչ:

Մի ջանա լինել այն, ինչ դու լինել չես կարող. ջանքեր մի թափիր դրա վրա:

Ոչ մեկին մի հարմարվիր: Մի հագիր կեղծ դիմակներ, որ հագուրդ տաս սնափառությանդ: Մի սպասիր եւ մի պահանջիր շնորհակալություն քո արածի համար, այլապես կկորցնես հարգանքը քո նկատմամբ:

Ուշադիր նայիր բույսերին ու կենդանիներին: Ծնվել է արդյո՞ք գեթ մի խնձոր բամբակի թփի վրա: Կա արդյո՞ք գեթ մի նարինջ նռան ծառի ճյուղերին: Փորձո՞ւմ է արդյոք առյուծը թռչել:

Կենդանի էակներից միայն մարդն է, հիմարությամբ ու սնափառությամբ հաղթված, փորձում կերպափոխվել այլ մարդու, դրանով իսկ զրկելով իրեն եզակիությունից եւ իր կյանքը սխալմունքի վերածելով: Երբեմն, դժբախտություններից հաղթված, նա սկսում է հասկանալ իր սխալների էությունը եւ փոխում վարքը, բայց շատ հաճախ պայծառացումը գալիս է չափազանց ուշ:

Դու չես ընտրում քո կոչումը, այլ կոչումդ է ընտրում քեզ:

Աստված քեզ շնորհել է կարողությամբ, քո սեփական կարողությամբ: Ուրեմն օգտագործիր այն, ինչպիսին էլ որ այն լինի: Մի փորձիր գլխիդ քաշել գլխարկը, որը փոքր է քեզ: Չկան նվաստացուցիչ տաղանդներ եւ մասնագիտություններ: Նույնսիկ հմուտ կառապանը կարող է ոսկե գավաթ վաստակել եւ փառքով պատվել: Իսկ եթե ստիպես նրան թուզ հավաքել, նա կմեռնի սովից:

Աշխարհում ոչ ոք չի փոխարինի քեզ: Հասկացիր այդ եւ եղիր ինքդ: Հաջողության հասնելու խոստումներ մի տուր ինքդ քեզ: Տուր միայն մեկ խոստում՝ արդար լինել քո նկատմամբ: Լավագույն ձեռով արա այն, ինչ կարող ես, եւ հենց քո լավագույն ստեղծագործություններում էլ պարփակված է աշխարհում մեծագույն հաջողությունը՝ դու դա կհասկանաս հոգով:

Խորհրդատվական գրքույկը հրատարակման է պատրաստել «Loyalty Systems» ընկերությունը (www.reforms.am/loyalty) ըստ Օգ.Մանդինայի «Ամենամեծ հաջողությունը աշխարհում» գրքի:

Գրքույկը հրատարակվել է ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Աղքատության հաղթահարման ամփոփ ռազմավարական ծրագրի մշակման մասնակցության գործընթացի շրջանակներում:

Առաջարկությունների համար կարող եք դիմել ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն», հասցեն՝ Երևան 375010, Հանրապետության Հրապարակ, Կառավարության տուն1, մասնաշենք 4, հեռ. 52-37-90, 54-30-51, ֆաքս՝ 52-37-90, էլ. փոստ՝ info@gov.am:

ԱՆՌԾ. Ամփոփ ծրագրի մշակման գործընթաց



ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԹԱՅԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԾՐԱԳԻ

Մասնակցության Գործընթաց

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐ

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ

Որակի ժամանակակից հայեցակարգերում կյանքի որակ հասկացությունը բնութագրվում է որպես սոցիալտնտեսական, քաղաքական, մշակութային, գաղափարախոսական, բնապահպանական գործոնների եւ անհատի գոյության, ինչպես նաեւ մարդու հասարակության մեջ գրաված դիրքի ամբողջություն: Աղքատությունը կյանքի որակ կատեգորիան ձեւավորող «մարդկենսագործունեության միջավայր» համակարգում անհրաժեշտ հատկանիշների բացակայությունն է կամ ձեւախախտումը, որն առաջանում է տնտեսապես թույլ զարգացած պետության կողմից կարգավորվող հարաբերությունների ճնշման արդյունքում: Աղքատություն կատեգորիան կազմավորվում է կյանքի տեւողության կրճատմամբ, կրթության անհասանելիությամբ, աշխատանքային ակտիվության իրացման հնարավորության սահմանափակմամբ, որակյալ արտադրանքի եվ ծառայությունների, այդ թվում՝ բժշկական ծառայությունների անմատչելիությամբ, հասարակական կյանքից ազգաբնակչության լայն շերտերի մեկուսացմամբ:

Արտադրանքի եւ ծառայությունների որակը ուղղակի կամ անուղղակի կերպով ներազդելով երկրի քաղաքացիների կյանքի որակի վրա եւ ներկայացնելով մարդու կյանքի ինտեգրալ որակական ցուցանիշ, բացահայտում է հասարակության ոչ միայն կենսագործունեությունը եւ կենսապահովվածությունը, այլեւ կենսունակությունը՝ որպես սոցիալական մի ամբողջական օրգանիզմ: Վերջինս անհատի, ինչպես նաեւ հասարակության սոցիալական, հոգեւոր եւ կենսաբանական ֆունկցիաների առավել արդյունավետ իրականացման ունակությունն է: Ձեռք բերելով բարձրորակ արտադրանք, անհատը հնարավորություն է ստանում բավարարելու իր ֆիզիկական, մշակութային եւ այլ կարիքները, դրանով իսկ խթանելով տնտեսության վերելքը եւ բնակչության զբաղվածության աճը, նպաստելով աշխատավարձի, սոցիալական ապահովման եւ վճարունակ կարիքների մեծացմանը: Այն նպաստում է նաեւ հոգեւոր արժեքների ստեղծմանը՝ դաստիարակելով մասնագիտական հպարտության եւ հայրենասիրական զգացմունքներ:

ՈՐԱԿԸ ԵՎ ՍՊԱՌՈՂԸ

Որակը կարելի է սահմանել որպես արտադրանքի (ծառայության) տեխնիկական, տեխնոլոգիական եւ շահագործման բնութագրերի ամբողջականություն, որի միջոցով այն շահագործման ժամանակ կբավարարի սպառողի պահանջները: Որակը չափվում է նրա նկատմամբ գիտակցված կամ չգիտակցված, պայմանավորված կամ չպայմանավորված կամ նույնիսկ ամբողջովին սուբյեկտիվորեն շարունակական փոփոխության ենթարկվող պահանջներով:

2002 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ Սպառողների իրավունքների

պաշտպանության մասին օրենքը սահմանում է.

սպառող՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացի:

1962թվականի մարտի 15-ին, առաջին անգամ, ԱՄՆ նախագահ Ջ. Քեննեդին խոսեց մարդ-քաղաքացու.

- անվտանգ արտադրանքից օգտվելու,
 - ընտրություն կատարելու,
 - տեղեկացված լինելու եւ
 - խաբված չլինելու
- իրավունքների մասին:

1985թվականին «Սպառողների շահերի պաշտպանության ղեկավար ցուցումներ» փաստաթղթով ՄԱԿ-ն ավելացրեց նաեւ.

- վնասի փոխհատուցման,
- առողջ միջավայրում ապրելու,
- կրթված լինելու իրավունքները:

Առանձնացնելով աղքատություն կատեգորիան ձեւավորող որակյալ արտադրանքի եւ ծառայությունների աննատչելիության գործոնը նկատենք, որ, սպառողների վճարունակությամբ պայմանավորված, միեւնույն նշանակության արտադրանքը որակի տարբեր մակարդակներում կարող է ունենալ տարբեր պահանջարկ:

Սոցիալտնտեսական զարգացման արդի փուլում երկրի ազգաբնակչությունը արտադրանքի սպառման տեսանկյունից կարելի է բաժանել հետեւյալ երեք խմբերի.

սպառողների առաջին խումբ

- ցածր վճարունակությամբ, էժանագին եւ, որպես կանոն, ցածրորակ արտադրանք (ծառայություն) սպառողների խումբ, որն ըստ էության ներկայացնում է ազգաբնակչության ամենաստվարածավալ շերտը,

սպառողների երկրորդ խումբ

- միջին արժեք եւ միջին մակարդակի որակ ունեցող արտադրանք (ծառայություն) սպառողների խումբ, որը ներկայացնում է ազգաբնակչության փոքրաթիվ միջին խավը,

սպառողների երրորդ խումբ

- բարձրարժեք եւ բարձրորակ արտադրանք (ծառայություն) սպառողների խումբ, որը ներկայացնում է ազգաբնակչության սակավաթիվ ունեւոր խավը:

Սպառողների առաջին խումբը, որը հիմնականում ներկայացված է հասարակության ամենախոցելի շերտերով, կանգնած թերսնման, երբեմն նաեւ քաղցի հիմնախնդրի առջեւ, այսօր սպառում է անորակ եւ որպես կանոն առողջության համար վտանգավոր սնունդ, որն իր կասկածելի բաղադրությամբ հաճախ ալերգազեն, մուտագեն եւ կանցերազեն ազդեցությամբ շարունակաբար թունավորելով արդեն իսկ դիմադրողականությունը կորցրած մարդկային օրգանիզմը՝ այն հանգեցնում է խորը փոփոխությունների եւ հիվանդությունների: Եթե այս իրավիճակը դիտարկենք նաեւ վճարովի հիմունքներով տրամադրվող բուժօժանությունների ընդհանուր համատեքստում, ապա կունենանք ազգաբնակչության, հատկապես սպառողական առաջին խմբի ներկայացուցիչների

(չմոռանաճաք, որ նրանք մեծամասնություն են կազմում) ֆիզիկական եւ ինչու ոչ, նաեւ բարոյական առողջության վիճակի ամբողջական պատկերը: Դրա մասին են խոսում նաեւ ազգաբնակչության առողջությունը բնութագրող տարեցտարի վատթարացող ցուցանիշները, որոնք արդյունք են նաեւ ազգաբնակչությանը, հատկապես անվճարունակ շերտերին մատուցվող բժշկական ցածրորակ ծառայությունների:

Շարունակելով միտքը եւ գնահատելով արտադրանքի եւ ծառայությունների բարձր որակի ապահովման կարելիությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կյանքի որակի մակարդակի ձեւավորման խնդրում եւ դիրարկելով որակի կատեգորիան որպես հոգեւոր, մտավոր, սոցիալական, տնտեսական, արտադրական եւ կառավարման ոլորտները ինտեգրող միասնական գաղափար, «Որակի համընդհանուր ղեկավարման աջակցության» հասարակական կազմակերպությունը, որպես քաղաքացիական հասարակության մասնակցության դրսեւորում, առաջարկում է արտադրանքի եւ ծառայությունների բնագավառում ազգային քաղաքականության հայեցակարգի նախագիծ, որն արդեն ներկայացվել է հայրենական ընկերությունների դատին: Քննարկումների արդյունքում նրանք դրսեւորելով հուսադրող հետաքրքրություն, տվեցին իրենց առաջարկությունները եւ դիտողությունները՝ արտահայտելով իրենց պատրաստակամությունը մասնակցելու հայեցակարգով նախատեսված քաղաքականության իրականացմանը:

Ընդհանուր գծերով հայեցակարգն ընթերցողին ներկայացնելուց առաջ առանձնացնենք այն մի քանի խնդիրները, որոնց գերակայությունը նշել են հայրենական ձեռնարկությունները.

- հայրենական արտադրողների շահերի պաշտպանություն,
- հայրենական որակյալ արտադրանքի պաշտպանություն անբարեխիղճ միջակցությունից ներքին շուկայում՝ տեղական եւ ներմուծվող անորակ արտադրանքից,
- հայրենական արտադրանքի արտահանման աջակցություն,
- հայրենական արտադրողների համար միջազգային առաջավոր փորձի վերաբերյալ տեղեկատվության ապահովում,
- հայրենական որակյալ արտադրանքն սպառողին ճիշտ ներկայացնելու եւ սպառողին կրթելու համար զանգվածային լրատվական միջոցների լայնածավալ կիրառում,
- հասարակության տարբեր շերտերի հետ ամենօրյա աշխատանքի շնորհիվ մարդկանց ինքնագիտակցության, արտադրանքի եւ ծառայությունների նկատմամբ պահանջկոտության բարձրացման աշխատանքների կազմակերպում:

Եվ այսպես, որոնք են հայեցակարգի մշակման նպատակները:

Տնտեսության զարգացման ոլորտում հայեցակարգի նպատակն է խթանել հայրենական արտադրանքի որակի բարձրացումը եւ ապահովել նրա մրցունակությունը արտաքին եւ ներքին շուկայում, ինչը բարենպաստ պայմաններ կստեղծի երկրի տնտեսության կայուն զարգացման եւ ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացման համար: Այն կհանգեցնի բնակչության վճարունակության եւ, բնականաբար, առավել որակյալ արտադրանքի նկատմամբ պահանջարկի աճի:

Մրցունակությունը արտադրանքի ինտեգրալ բնութագրերից մեկն է, որը պայմանավորում է նրա իրացման հնարավորությունը: Արտադրանքի մրցունակության վրա ազդում են նրա որակը, արժեքը, շահագործման արժեքը, տեխնիկական սպասարկման հարմարավետությունը, արտադրողի վարկանիշը եւ այլ գործոններ:

Մրցունակության գործոնների նախապատվությունը պայմանավորված է հասարակության սոցիալտնտեսական զարգացման մակարդակով, այն շուկայի բնույթով, որտեղ իրացվում է արտադրանքը եւ, իհարկե, կոնկրետ սպառողի առանձնահատկություններով:

Արտադրանքի որակի մակարդակը պետք է համապատասխանի բնակչության պահանջարկի կառուցվածքին՝ հաշվի առնելով նրա տարբեր խմբերի վճարունակությունը, ժողովրդագրական եւ այլ առանձնահատկությունները, իսկ որակի աճի դինամիկան պետք է համապատասխանի պահանջարկի դինամիկային:

Անկասկած, պետք է ապահովվի մարդու կյանքի, առողջության եւ գույքի պահպանության համար անհրաժեշտ արտադրանքի անվտանգությունը:

Արտադրանքի եւ ծառայությունների որակը, որն ապահովում է երկրի գիտատեխնիկական եւ արդյունաբերական զարգացման բարձր մակարդակը, հնարավորություն է ստեղծում ամրապնդելու երկրի դիրքերը ինտեգրման փոխհարաբերություններում եւ փոխշահավետ համագործակցություն ծավալել բոլոր երկրների հետ:

Որակի էկոլոգիական պարամետրերը կարելի է որագույն դեր են խաղում շրջակա միջավայրի պահպանության եւ առողջացման խնդիրների լուծման, երկրի եւ ընդհանրապես երկրագնդի էկոլոգիական անվտանգությունն ապահովելու գործում: Անկասկած, պետք է ապահովեն արտադրանքի նկատմամբ սահմանված էկոլոգիական պարտադիր պահանջները: Նոր արտադրանքի նախագծման ժամանակ պետք է մշակվեն արտադրության անվտանգության էկոլոգիական պարամետրերը եւ օգտահանման միջոցները:

Արտադրանքի եւ ծառայությունների որակի բնագավառում ազգային քաղաքականության հիմնական ուղղությունները պետք է ձեւավորվեն են որոշակի սկզբունքների վրա եւ սահմանեն.

- ազգային շահերից բխող տնտեսական, սոցիալական եւ այլ խնդիրների լուծման հարցում հասարակության տարբեր շերտերի, ղեկավարների եւ աշխատողների կողմից որակի դերի ու նշանակության գիտակցման անհրաժեշտությունը,
- բոլոր մակարդակների ղեկավարների եւ մասնագետների կողմից որակի ղեկավարման մեթոդների տիրապետման անհրաժեշտությունը՝ որակի ղեկավարումը դիտարկելով որպես տնտեսության տարբեր ճյուղերում եւ գործունեության ոլորտներում կիրառվող արդյունավետ մեթոդների, գիտելիքների առանձնահատուկ բնագավառ,
- իրավական, տնտեսական, սոցիալական եւ կազմակերպա-իրավական ընդհանուր այնպիսի պայմանների ստեղծման անհրաժեշտությունը, որոնք հայրենական ընկերություններին հնարավորություն կտան հաջողությամբ լուծելու որակի բնագավառում ծագած խնդիրները,
- անորակ արտադրանքից սպառողների պաշտպանության գործող մեխանիզմի ձեւավորման անհրաժեշտությունը, ինչն անկասկած կխթանի ընկերությունների կողմից բարձրորակ արտադրանք թողարկելու եւ իրացնելու գործընթացը:

Վերոհիշյալ սկզբունքների իրականացումը կնպաստի երկրում ընդհանուր կուլտուրայի ձեւավորմանը, ինչպես նաեւ տնտեսության բոլոր ոլորտներում արտադրանքի եւ ծառայությունների որակի բարձրացմանը:

Որակի բնագավառի քաղաքականությունը պետք է նախատեսի նաեւ պետական միջոցառումների իրականացման ծրագրեր, որոնք կբացահայտեն որակի գործընթացների կառավարման ողջ համակարգը, այդ համակարգում որոշեն.

- գործընթացների հաջորդականությունը,
- դրանց փոխկապակցվածությունը,
- դրանց փոխազդեցությունը:

Ստրատեգիական նպատակների տեսանկյունից սահմանեն.

- հիմնական գործընթացները,
- յուրաքանչյուր կոնկրետ գործընթացի կառավարման եւ գնահատման առավել

արդյունավետ չափանիշները:

Ծշգրտեն.

- գործընթացների արդյունավետ կառավարման եւ մոնիտորինգի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացման ու վերլուծության մեխանիզմները,
- կանխարգելիչ եւ ուղղիչ միջոցառումների իրականացման մեխանիզմները,

Սահմանեն.

- գործընթացներում փոփոխություններ կատարելու կարգը:

Այդ ծրագրերով միջոցառումների իրականացման յուրաքանչյուր գործընթացի ղեկավարման համար պետք է նշանակվեն այնպիսի լիազորված անձինք, որոնք կունենան համապատասխան մասնագիտական հմտություններ եւ պատրաստ կլինեն իրենց վրա վերցնել նման պատասխանատվություն:

Պետական միջոցառումների իրականացման ծրագրերը պետք է ազգային խնդիրների լուծման համար առաջնային նշանակություն ունեցող տնտեսության ճյուղերում ապահովեն արտադրանքի որակի եւ մրցունակության բարձրացում:

Որակի կուլտուրայի ձեւավորումը պրոպագանդայի եւ կրթական ողջ համակարգի հիմնախնդիրն է: Այս գաղափարի պարզաբանման եւ տարածման գործին պետք է լծվեն երկրում գործող զանգվածային լրատվության բոլոր միջոցները՝ ներգրավելով ոլորտի մասնագիտական բարձրորակ ներուժը:

Ինչպես վկայում է միջազգային փորձը, որակի կառավարման համակարգերի ներդրումը հնարավորություն է ընձեռում էպես բարձրացնել գործունեության արդյունավետությունը, ապահովել սպառողներին նորմատիվ պահանջներին համապատասխանող արտադրանքով եւ ծառայություններով: Ժամանակակից տեխնոլոգիաների եւ որակի կառավարման մեթոդների վրա հիմնված արդյունավետ որակի համակարգերի ստեղծումը հանդիսանում է ցանկացած ընկերության հաջողության գրավականը շուկայում:

Որակի կառավարման համակարգերի լայնածավալ ներդրմանը պետք է նպաստեն պարտադիր եւ խորհրդատվական գործունեության ոլորտում միջոցառումների համակարգի մշակումն ու որակի համակարգերի կիրառմանը նպաստող միջոցառումների իրականացումը:

Արդյունավետ որակի համակարգերի ներդրումը պահանջում է բարձր մասնագիտական հմտություն, տարբեր մակարդակի ղեկավարների եւ աշխատողների կողմից որակի ղեկավարման մեթոդների ու միջոցների, որակի համակարգերի նախագծման իմացություն՝ հիմնված միջազգային ստանդարտների եւ առաջատար փորձի վրա: Որակը, լինելով իմացության հատուկ ոլորտ, պահանջում է կրթական համակարգային հստակ մոտեցում: Անհրաժեշտ որակի ապահովման ստրատեգիան եւ մեթոդները կյանքի բազմակողմանի պրակտիկայում պահանջում են ժամանակակից մոտեցումների եւ որակյալ որոշումների ընդունում: Այդ կապակցությամբ այսօր առավել օրհասական է դարձել որակի բնագավառի մասնագետների կրթական պատրաստվածության խնդիրը: Այսօր արդեն որակի բնագավառի կրթության եւ պատրաստման խնդիրները չի կարելի դիտարկել որպես կրթական համակարգի հավելված: Անհրաժեշտ է ամենայն խորությամբ գիտակցել, որ արդի պայմաններում որակը ֆունդամենտալ, համընդհանուր ուսումնասիրման ենթակա գիտելիքների համակարգ է եւ իրենից ներկայացնում է հասարակության սոցիալ-տնտեսական գործունեության գիտական կազմակերպման ասպարեզ եւ ուսումնասիրությունների բարդ բնագավառ:

Այս ոլորտի քաղաքականության նպատակն է կազմավորել որակի բնագավառի կադրերի պատրաստման անընդհատ բնույթ կրող կրթական համակարգ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է միջնակարգ դպրոցների, միջնակարգ մասնագիտական եւ բարձրագույն կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներգրավել որակի խնդիրների հետ առնչվող առարկաներ: Անհրաժեշտ է պատրաստել որակյալ արտադրության կազմակերպման եւ ապահովման մասնագետներ, բոլոր բնագավառներում ներգրավված քաղաքացիներին ծանոթացնել որակի ղեկավարման հիմունքների հետ, աջակցել սույն առարկայի վերաբերյալ հատուկ գրականության, ամսագրերի եւ այլ տեղեկատվական նյութերի պատրաստման գործընթացին:

Անհրաժեշտ է նաեւ իրականացնել համալիր միջոցառումներ աշխատանքային ռեսուրսների որակի էական բարելավման, նրանց տեխնիկական մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա ապահովել ազգային տնտեսության ոլորտը բարձրորակ մասնագետներով:

Որակի բնագավառում գիտական ուսումնասիրությունների իրականացման համար անհրաժեշտ է մշակել որակի ղեկավարման խնդիրների գիտական ուսումնասիրությունների եւ նախագծերի ծրագրեր, սահմանել դրամաշնորհների (գրանտների) համակարգ՝ որակի կառավարման խնդիրների առավել արդիական գիտական ուսումնասիրությունները ֆինանսավորելու համար:

Ձեռնարկություններում որակի կառավարման համակարգերի ներդրման եւ դրանց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է զարգացնել բարձրորակ խորհրդատվական ծառայություն մատուցող կազմակերպությունների ցանցը:

Պետությունը պետք է ստեղծի հնարավոր բարենպաստ պայմաններ այդ կազմակերպությունների արդյունավետ գործունեության համար: Փոքր ձեռնարկություններում որակի համակարգերի ներդրման աշխատանքների խթանման համար անհրաժեշտ է միջոցներ գտնել՝ մասնակիորեն փակելու համար խորհրդատվական ծառայությունների հետ կապված ծախսերը:

Հայեցակարգի նախագծում անդրադարձ է կատարվել նաեւ ընկերություններում արտադրանքի եւ ծառայությունների որակի բարելավմանը նպաստող կազմակերպատեխնիկական պայմանների ստեղծման քաղաքականությանը, որը պետք է նախատեսի որոշակի բարեփոխումներ ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման ոլորտներում:

Շուկան անորակ արտադրանքից պաշտպանելու համար անհրաժեշտ է ստեղծել շուկայի հսկողության գործունե եւ հստակ պետական ու հասարակական համակարգ, որը հնարավորություն կտա համատեղ հայտնաբերել անհամապատասխան եւ կեղծված արտադրանքը, ինչպես նաեւ կանխել դրա իրացումը: Հսկողություն իրականացնող, իրավապահ մարմինների համագործակցությունը, սպառողների բողոքները օպերատիվ կերպով վերլուծող եւ բյուրոկրատիզմի տարրերից զուրկ արդյունավետ գործող համակարգի առկայությունը, ինչպես նաեւ արտադրողի եւ արտադրանքի անհամապատասխանության պատճառ դարձած կազմակերպությանը անվիճելի պատասխանատվության ենթարկելու մեխանիզմի ճիշտ կիրառումը արտադրող-վաճառող-սպառող շարքում գտնվող բոլոր օղակներին կստիպեն հաստատել կայուն կապեր վստահելի մատակարարների հետ, ապահովել պատշաճ մակարդակի որակ ունեցող մրցունակ արտադրանք եւ ծառայություն:

Շուկան անհամապատասխան արտադրանքից պաշտպանելու համար անհրաժեշտ է նաեւ զարգացնել արտադրանքի կամավոր սերտիֆիկացման եւ արտադրողի կողմից իր արտադրանքի որակի մասին հայտարարագրի կիրառման մեխանիզմը, որն իր բնույթով շուկայական մեխանիզմ է եւ իրականացվում է արտադրողի ցանկությամբ:

Անորակ արտադրանքից սպառողական շուկայի պաշտպանության տարբեր մեխանիզմների փոխկապակցված գործողությունները պետք է ունենան հիմնականում կանխարգելիչ բնույթ:

Հաշվի առնելով հայրենական շատ ընկերությունների անբարենպաստ մեկնարկային վիճակը, պետությունը պետք է իրականացնի աջակցության միջոցառումների ծրագրեր, կիրառելով ներդրումային, վարկային, բյուջետային ֆինանսավորման նորարարական ներդրումների եւ այլ մեխանիզմներ:

Որակի գործոնի կարելու որման քաղաքականության էությունն այն է, որ պետական ցանկացած աջակցության համար նախատեսված ընկերության ընտրության ժամանակ պետական գործադիր մարմինները պետք է ղեկավարվեն պետական աջակցության ցուցաբերման ժամանակահատվածում տվյալ ձեռնարկության մրցունակ որակ ապահովելու փաստացի հնարավորություններով: Ձեռնարկություններն իրենց հերթին, պետք է պաշտպանեն պետական աջակցության միջոցառումներից օգտվելու իրենց իրավունքը՝ ներկայացնելով հատուկ միջոցառումների համար նախատեսված ժամանակահատվածում արտադրանքի որակի բարելավման եւ մրցունակության բարձրացման ապահովման ծրագրեր:

Տնտեսական նպատակային ծրագրերը պետք է պարունակեն հստակ խնդիրներ արտադրանքի եւ ծառայությունների անհրաժեշտ մակարդակի որակի, ստանդարտացման, չափազիտական եւ այլ ռեսուրսների ապահովման, ինչպես նաեւ արդյունավետ որակի համակարգերի ներդրման եւ, անհրաժեշտության դեպքում, սերտիֆիկացման վերաբերյալ:

Ելնելով վերոհիշյալից, անհրաժեշտ է մշակել քաղաքականության իրականացման եւ խնդիրների լուծման ռազմավարական ծրագրեր:

Հանրապետության բոլոր մարզերում պետությունը պետք է աջակցի արտադրանքի եւ ծառայությունների որակի բնագավառի քաղաքականության ձեւավորման գործընթացին: Հանրապետության յուրաքանչյուր մարզ պետք է ձեւակերպի արտադրանքի եւ ծառայությունների որակի բնագավառի ազգային քաղաքականության հայեցակարգից բխող իր խնդիրների եւ գործողությունների ռազմավարությունը, ինչպես նաեւ դրանց իրականացման ուղղությունները:

Աղքատության դեմ պայքարը նախելառաջ բարենպաստ տնտեսական միջավայրի ստեղծումն է, որը հնարավոր է միայն արժեք գոյացնող որակ ապահովող արտադրական պոտենցիալի ընդլայնման միջոցով, ինչը կբարձրացնի աշխատող, ինչպես նաեւ սոցիալական նպաստներ ստացող ազգաբնակչության բարեկեցությունը, նրա զբաղվածության աստիճանը, կյանքի տեւողությունը եւ կյանքի որակը բնութագրող այլ հիմնական ցուցանիշները:

Սպառողներին, ինչպես նաև արտադրողներին առավել հաճախ հետաքրքրող հարցերը եւ դրանց պատասխանները

Չարց

Ինչպե՞ս պարզել առաջին հայացքից, որակյա՞լ է արդյոք արտադրանքը, թե ոչ:

Պատասխան

Նախ. սպառողը պետք է իմանա, որ արտադրանքի մասին առաջին կարծիքը կարելի է կազմել նրա փաթեթավորման վրա կատարված մակնշման միջոցով: Տեղեկացնենք, որ ՀՀ արտադրվող, վերամշակվող, փաթեթավորվող ցանկացած արտադրանքի վրա, համաձայն ՀՀ գործող օրենսդրության, մակնշումը կատարվում է հայերեն լեզվով, որը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը.

- արտադրանքի անվանումը,
- նորմատիվ փաստաթղթի նշագրիը, համաձայն որի արտադրվել է արտադրանքը,
- զտաքաշը կամ ծավալը (եթե սննդամթերքը փաթեթավորված է),
- արտադրության տարեթիվը եւ պիտանիության ժամկետը,
- բաղադրությունը,
- սննդամթերքում հավելումների ցանկը,
- սննդամթերքի օգտագործման վերաբերյալ ցուցումներ, առանձնահատուկ հանձնարարականներ դրա պահպանման եւ օգտագործման մասին,
- տվյալներ արտադրողի վերաբերյալ,
- սննդամթերքի ծագման երկիրը,
- սննդային եւ էներգետիկ արժեքը,
- գծիկային կոդը,
- համապատասխանության հավաստման վերաբերյալ եւ նորմատիվ փաստաթղթերով սահմանված այլ տեղեկատվություն (ըստ արտադրատեսակի):

Եթե արտադրանքի փաթեթավորման վրա առկա չէ պատշաճ կերպով ձեւակերպված տեղեկատվություն կամ եթե այն բացակայում է (իսկ դա շատ հաճախ է պատահում), ապա նշանակում է, որ սպառողին թյուրիմացության մեջ ընկնելու հավանականությունը մեծ է:

Այն դեպքերի համար, երբ արտադրանքը փաթեթավորված չէ եւ ապրանքի որակը կասկած է առաջացնում, սպառողը կարող է վաճառողից պահանջել արտադրանքի համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ:

Չարց

Ի՞նչ է համապատասխանության հավաստումը:

Պատասխան

Համաձայն ՀՀ նորմատիվ պահանջներին արտադրանքի եւ ծառայությունների համապատասխանության հավաստման մասին օրենքի, համապատասխանության հավաստումը մի գործողություն է, որի արդյունքում համապատասխանության սերտիֆիկատի կամ համապատասխանության մասին հայտարարագրի միջոցով հավաստվում է արտադրանքի կամ ծառայության համապատասխանությունը նորմատիվ պահանջներին:

Չարց

Ի՞նչ է համապատասխանության պարտադիր հավաստումը:

Պատասխան

Համապատասխանության պարտադիր հավաստումը համապատասխանության

հավաստում է, որը գործարկվում է ՀՀ օրենքներով կամ այլ իրավական ակտերով սահմանված որոշակի արտադրանքի կամ ծառայության համար եւ կատարվում է պարտադիր կարգով այդպիսի արտադրանքի կամ ծառայության անվտանգությունն ապահովող պարտադիր նորմատիվ պահանջներին համապատասխան:

ՀՀ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի եւ ծառայությունների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 2000թվականի մայիսի 12-ի թիվ 239, 2001 թվականի փետրվարի 17-ի թիվ 110 եւ 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 297 որոշումներով:

Չարց

Ի՞նչ է համապատասխանության սերտիֆիկատը:

Պատասխան

Համապատասխանության սերտիֆիկատը սերտիֆիկացման մարմնի կողմից տրված փաստաթուղթ է, որը հավաստում է սահմանված կարգով նույնականացված արտադրանքի կամ ծառայության համապատասխանությունը նորմատիվ պահանջներին:

Չարց

Ի՞նչ է համապատասխանության մասին հայտարարագիրը:

Պատասխան

Համապատասխանության մասին հայտարարագիրը վավերացված փաստաթուղթ է, որով արտադրանք արտադրողը, ներմուծողը կամ ծառայություն մատուցողը իր մոտ եղած տվյալների հիման վրա հավաստիացնում է իր արտադրած, ներմուծվող արտադրանքի կամ մատուցվող ծառայության համապատասխանությունը նորմատիվ պահանջներին:

Չարց

Ի՞նչ է ստանդարտացումը, որո՞նք են ստանդարտացման նպատակները եւ օբյեկտները:

Պատասխան

ՀՀ ստանդարտացման մասին օրենքը սահմանում է.

ստանդարտացում՝ իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր եւ բազմակի կիրառման համար դրույթների սահմանման միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանի հասնելուն ուղղված գործունեություն:

Ստանդարտացման նպատակն է ապահովել՝

- շրջակա միջավայրի, կյանքի, առողջության եւ գույքի պահպանման համար արտադրանքի, աշխատանքի, ծառայությունների անվտանգությունը,
- տեխնիկական եւ տեղեկատվական համատեղելիությունը, արտադրանքի համափոխարինելիությունը,
- արտադրանքի, աշխատանքի, ծառայության որակի բարձրացումը,
- չափումների միասնականությունը,
- ռեսուրսախնայողությունը,
- արտակարգ իրավիճակներում կառույցների եւ շինությունների անվտանգությունը եւ հուսալիությունը,
- առելտրում խոչընդոտների վերացումը,
- պետության պաշտպանության եւ մոբիլիզացիոն պատրաստականության անհրաժեշտ պայմանները:

Հարց

Որո՞նք են ՀՀ գործող ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը:

Պատասխան

ՀՀ գործող ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերն են.

- տեխնիկական կանոնակարգերը,
- ազգային ստանդարտները,
- տեխնիկական պայմանները,
- տեխնիկատնտեսական տեղեկատվության դասակարգիչները,
- կազմակերպության ստանդարտները:

Հարց

Որո՞նք են տեխնիկական կանոնակարգերը:

Պատասխան

Կանոնակարգը իրավական նորմեր պարունակող փաստաթուղթ է եւ ընդունվում է իշխանության մարմնի կողմից:

ՀՀ տեխնիկական կանոնակարգերը ՀՀ այն օրենքները եւ իրավական ակտերն են, որոնցում ընդգրկված են տեխնիկական պահանջներ ստանդարտացման օբյեկտներ հանդիսացող արտադրանքի, աշխատանքի եւ ծառայության, ինչպես նաեւ ՀՀ օրենսդրությամբ արտադրանքի (ծառայության) եւ դրանց հետ կապված արտադրման (կատարման) գործընթացների եւ մեթոդների վերաբերյալ պարտադիր պահանջներ սահմանելու իրավասություն ունեցող պետական մարմինների կողմից ընդունված գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերը, որոնց կատարումը կրում է պարտադիր բնույթ:

Հարց

Որո՞նք են ազգային ստանդարտները:

Պատասխան

Ազգային ստանդարտներն են.

- Հայաստանի Հանրապետության ստանդարտները,
- ստանդարտացման ազգային համակարգով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող միջազգային, տարածաշրջանային, միջպետական եւ այլ պետությունների ազգային ստանդարտները:

Ըստ ստանդարտացման օբյեկտի առանձնահատկության, ստանդարտները լինում են.

- հիմնադրական ստանդարտներ (կազմակերպամեթոդական եւ ընդհանուր տեխնիկական),
- արտադրանքի եւ ծառայությունների ստանդարտներ,
- աշխատանքների (գործընթացների) ստանդարտներ,
- վերահսկման (փորձարկումների, չափումների, վերլուծության) մեթոդների ստանդարտներ:

Ազգային ստանդարտների համար կիրառվում է «ՀՍ» դասիչը:

Ազգային ստանդարտների կիրառումը կամավոր է: Դրանց կիրառումը դառնում է պարտադիր, եթե տեխնիկական կանոնակարգերում այդ ստանդարտները վկայակոչված են պարտադիր կիրառման համար (բացառիկ կարգավիճակ):

Հարց

Որո՞նք են տեխնիկական պայմանները:

Պատասխան

Տեխնիկական պայմանները իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը մշակում եւ հաստատում են որոշակի արտադրանքի, աշխատանքի կամ ծառայության համար:

Տեխնիկական պայմաններով սահմանվում են այնպիսի պահանջներ, որոնք կարգավորում են արտադրանք մատակարարողի եւ սպառողի հարաբերությունները:

Տեխնիկական պայմանների մշակման եւ հաստատման անհրաժեշտությունը սահմանվում է ստանդարտացման ազգային համակարգի կանոններով: Տեխնիկական պայմանները եւ դրանցում կատարվող փոփոխությունները ենթակա են պետական գրանցման:

Չարց

Որո՞նք են տեխնիկական տեղեկատվական դասակարգիչները:

Պատասխան

Տեխնիկական տեղեկատվական դասակարգիչներով սահմանվում են դասակարգման օբյեկտների եւ դրանց ենթաբազմության կողերի, ինչպես նաեւ անվանումների հավաքածուները:

Դասակարգումը օբյեկտների, երեւոյթների, հատկությունների կանոնակարգման հիմքն է: Այն կիրառվում է տարբեր օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման եւ մշակման անհրաժեշտության դեպքում:

Չայաստանի Չանրապետությունում կիրառվում են ազգային մարմնի կողմից ընդունված հետեւյալ դասակարգիչները.

- ՉԴ 001 Ստանդարտների դասակարգիչ,
- ՉԴ 002 Երկրների անունների դասակարգիչ,
- ՉԴ 003 Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչ,
- ՄԴ (միջազգային դասակարգիչ) ԻՍՕ4217 Տարադրամի դասակարգիչ,
- ՉԴ 005.1, ՉԴ 005.2 Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ,
- ԱՏ ԱԱ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (արտադրանքի խմբերի դասակարգիչ):

Միջազգային, միջպետական կամ այլ պետությունների դասակարգիչները կարող են կիրառվել Չայաստանի Չանրապետությունում՝ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգով:

Չարց

Ի՞նչ է գծիկային կոդը:

Պատասխան

Գծիկային կոդը որոշակի կանոններով ստեղծված գծիկային պայմանանշանների, մթնեցված (գծերի) եւ լուսավոր (բացակների) տարբեր լայնությունների ուղղանկյունաձեւ տարրերի հաջորդական դասավորվածությունն է, որն ապահովում է այդ պայմանանշանների տվյալների ներկայացում մեքենայական ընթերցման համար: Տվյալները կարող են ներկայացված լինել թվերի, տառերի, ինչպես նաեւ տեղեկատվության փոխանցման, ծրագրերի մշակման եւ տեխնիկական միջոցներում կիրառվող գրաֆիկական պայմանանիշերի ձեւով:

1932 թվականին հիմնադրված արտադրանքի գծիկային նույնականացման գործընթացի՝

գծիկային կոդի կիրառման ընդլայնումը կապված է էլեկտրոնային տեխնիկայի հետագա զարգացման հետ:

Այսօր միջազգայնորեն լայն կիրառում ունի EAN (European Article Numbering) կոդը:

Ապրանքների համարակալման եվրոպական միջազգային (European Article Numbering) ընկերությունը տարբեր երկրների միջև առևտրական փոխհարաբերություններ իրականացնելու գործընթացում արտադրող երկրի, կազմակերպության եւ ապրանքատեսակի մասին տեղեկատվության կոդավորման եւ փոխանցման ավտոմատացման նպատակով ստեղծել է EAN 13 եւ EAN 8 համակարգեր:

1996 թվականին Լիսաբոնում կայացած EAN միջազգային ընկերության համաժողովը EAN Armenia ընկերությանն ընդունեց իր շարքերը եւ նրան տվեց 485 կոդը: Այդ ժամանակից ի վեր ՀՀ կազմակերպությունների կողմից արտադրվող եւ այլ երկրներ առաքվող ապրանքները մակնշվում են գծիկային կոդով:

Փաստացի, գծիկավոր կոդը ընդգրկում է տեղեկատվություն.

- արտադրող երկրի,
- արտադրող կազմակերպության
- եւ արտադրատեսակի մասին:

Արտադրող երկրի կոդը տալիս է EAN միջազգային ընկերությունը:

Արտադրող կազմակերպության կոդը տալիս է ապրանքների մեքենայացման նույնականացման մարմինը, այսինքն ՀՀ դեպքում EAN Armenia ընկերությունը:

Արտադրանքի տեսակի կոդը տալիս է ապրանք արտադրող կազմակերպությունը:

EAN 13 կոդավորման համակարգը ունի հետևյալ կառուցվածքը.

- առաջին 3 նիշով տրվում է արտադրող երկրի կոդը,
- հաջորդ 9 նիշով նշվում են արտադրող կազմակերպությունը եւ արտադրատեսակը, որից 6 նիշը տրվում է կազմակերպությանը,
- 1 նիշով տրվում է ստուգիչ թիվը:

EAN 8 կոդավորման համակարգը ունի հետևյալ կառուցվածքը.

- առաջին 3 նիշով ներկայացվում է արտադրող երկիրը,
- հաջորդ 4 նիշով՝ արտադրող կազմակերպությունը եւ արտադրատեսակը,
- 1 նիշով տրվում է ստուգիչ թիվը:

Ստուգիչ թվի հաշվարկը EAN 13 եւ EAN 8 կոդերի համար նույնն է:

ՀՀ գծիկային կոդավորման վերաբերյալ գործող ազգային ստանդարտներն են.

- ՀՍ 171 «Կոդեր եւ տեղեկատվության կոդավորում. ծիկային կոդավորում. Ընդհանուր պահանջներ»,
- ՀՍ 172 «Կոդեր եւ տեղեկատվության կոդավորում. ծիկային կոդավորում. Տերմիններ եւ սահմանումներ»:

Հարց

Որո՞նք են միջազգային ստանդարտները:

Պատասխան

Միջազգային ստանդարտները ստեղծվում են ստանդարտացման աշխատանքներով զբաղվող ստանդարտացման միջազգային կազմակերպության կողմից և մատչելի են սպառողների լայն շրջանակների համար:

Միջազգային ստանդարտացման կազմակերպությունը (International Standardization Organization), կարճ՝ ԻՍՕ/ISO/ հիմնադրվել է 1946 թվականի հոկտեմբերի 14-ից 26-ը Լոնդոնում տեղի ունեցած համաժողովում, 1926 թվականին Նյու-Յորքում ստեղծված Ազգային ստանդարտացման ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի և 1944 թվականին հիմնադրված ՄԱԿ-ի Ստանդարտների Կոորդինացման կոմիտեի միավորմամբ: Համաժողովում, որին ներկա էին 25 երկրներից 65 պատգամավորներ, ստանդարտների միջազգային կոորդինացման հեշտացման և նույնականացման նպատակով հիմնադրված Ստանդարտացման միջազգային կազմակերպության պաշտոնական լեզուներ ընտրվեցին անգլերենը, ֆրանսերենը և ռուսերենը: Պաշտոնապես ԻՍՕ-ն սկսել է գործել 1947 թվականի փետրվարի 23-ից: Որպեսզի կազմակերպության անվանման հապավումը բոլոր լեզուներով հնչի միանման, որոշվեց հիմք ընդունել հունարեն ISOS բառը, որը նշանակում էր հավասար, միեւնույն և խորհրդանշում էր «ընկերություն հավասարների միջև» մոտեցումը:

2001 թվականին ԻՍՕ-ին անդամակցում էին 138 երկրներ՝ ներկայացված ստանդարտացման ազգային մարմիններով: Տեղին է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը՝ ներկայացված Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչությանը, ԻՍՕ-ի լիիրավ անդամ է 1996 թվականից: Հիշեցնենք նաև, որ Հայաստանի առաջին Ստանդարտների բյուրոն ստեղծվել է դեռևս 1931 թվականին և հանդիսացել է Պետստանդարտի համակարգի մասնաճյուղ: Ներկայիս Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչությունը, միջազգայնորեն հայտնի որպես SARM, հիմնադրվել է 1993 թվականին:

ԻՍՕ-ի գործունեությունը տարածվում է ստանդարտացման բոլոր ոլորտների վրա՝ բացառությամբ էլեկտրոնային և էլեկտրատեխնիկայի ոլորտի, որով զբաղվում է Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովը:

Հարց

Որո՞նք են կազմակերպության ստանդարտները:

Պատասխան

Կազմակերպության ստանդարտները մշակվում և հաստատվում են իրավաբանական անձանց կողմից՝ ղեկավարվելով ստանդարտացման ոլորտի նպատակներով, ինչպես նաև արտադրության կազմակերպման և կատարելագործման համար դրանց կիրառման անհրաժեշտությունից: Խտատեխնիկական, ինժեներական, հասարակական և այլ կազմակերպությունների ստանդարտները մշակվում և ընդունվում են այդ կազմակերպությունների հիմնավոր և կիրառական հետազոտությունների, մշակումների արդյունքների, տարբեր բնագավառներում ձեռք բերված գիտելիքների տարածման և օգտագործման հիման վրա: Կազմակերպության ստանդարտների մշակման, հաստատման, հաշվառման, փոփոխությունների կատարման և չեղյալ հայտարարման պահանջները սահմանվում են կոնկրետ կազմակերպության կողմից:

Եվ իհարկե, չնոռանանք շեշտել, որ կազմակերպության ստանդարտները չպետք է հակասեն տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին:

Խորհուրդ է տրվում ծանոթանալ հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հետ.

- ՀՀ ստանդարտացման մասին օրենք (9 նոյեմբերի 1999թ.),
- ՀՀ նորմատիվ պահանջներին արտադրանքի եւ ծառայությունների համապատասխանության հավաստման մասին օրենք (9 նոյեմբերի 1999թ.),
- ՀՀ չափումների միասնականության ապահովման մասին օրենք (30 ապրիլի 1997թ.),
- ՀՀ սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենք (26 հունիսի 2001թ.),
- ՀՀ սննդամթերքի անվտանգության մասին օրենք (ընդունված 8 դեկտեմբերի 1999թվականի),
- ՀՍ 1.0-2001 Ստանդարտացման ազգային համակարգ. Հիմնական դրույթներ,
- ՀՍ 5.3-2000. Համապատասխանության հավաստման համակարգ. Արտադրանքի սերտիֆիկացում,
- ՀՍ 5.7-2000. Համապատասխանության հավաստման համակարգ. Որակի համակարգերի սերտիֆիկացման կարգ,
- ՀՍ 5.9-2000. Համապատասխանության հավաստման համակարգ. Ծառայությունների սերտիֆիկացում,
- ՀՍ 6.01-98 Տեխնիկատնտեսական եւ սոցիալական տեղեկատվության դասակարգման միասնական համակարգ. Հիմնական դրույթներ,
- ՀՍ 6.01-2-98 Տեխնիկատնտեսական եւ սոցիալական տեղեկատվության դասակարգման միասնական համակարգ. Դասակարգիչների մշակման կարգը,
- ՀՍ 8.0-93 Չափումների միասնականության ապահովման ազգային համակարգ. Հիմնական դրույթներ,
- ՀՍ 171-98 Կոդեր եւ տեղեկատվության կոդավորում. Ժկային կոդավորում. Ընդհանուր պահանջներ,
- ՀՍ 52- 97 Ստանդարտացում եւ գործունեության հարակից տեսակներ. Տերմիններ եւ սահմանումներ,
- ՀՍ ԻՍՕ8402-97 Որակի ղեկավարում եւ որակի ապահովում. Տերմիններ եւ սահմանումներ,
- ՀՍ ԵՆ 45011-2000 Արտադրանքի սերտիֆիկացման մարմիններին ներկայացվող ընդհանուր պահանջներ:

«Աղքատությունը եւ կյանքի որակը» տեղեկատվական-վերլուծական գրքույկի հեղինակն է «Որակի հանընդհանուր ղեկավարման աջակցության» հասարակական կազմակերպության նախագահ, Գերմանիայի TÜV Ակադեմիայի որակի ղեկավարման փորձագետ, ՌԴ եւ ՀՀ որակի ղեկավարման փորձագետ, աուդիտոր Էլեոնորա ԱՍՍՐՅԱՆԸ:

Հեռ` (37410) 23 45 97
E-mail:eleonora@web.am

Գրքույկը հրատարակվել է ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Աղքատության հաղթահարման ամփոփ ռազմավարական ծրագրի մշակման մասնակցության գործընթացի շրջանակներում:

Առաջարկությունների համար կարող եք դիմել ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն», հասցեն` Երեւան 375010, Հանրապետության Հրապարակ, Կառավարության տուն 1, մասնաշենք 4, հեռ. 52-37-90, 54-30-51, ֆաքս` 52-37-90, էլ. փոստ` info@gov.am:

ԱՆՌԾ. Ամփոփ ծրագրի մշակման գործընթաց



ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՅԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԾՐԱԳԻՐ

Մասնակցության Գործընթաց

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐ

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՅԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ (ԱՅՌԾ) ԵՆԹԱՏԵՔՍՈՒՄ

Նահրուհի Ջրբաշյան

- Մոնիտորինգը որպես ԱՅՌԾ-ի անհրաժեշտ բաղկացուցիչ
- Ծրագրային նպատակներ ու խնդիրներ, մոնիտորինգային ցուցանիշներ, մոնիտորինգի համակարգ
- ԱՅՌԾ մոնիտորինգի համակարգի ինստիտուցիոնալացման եւ մասնակցային գործընթացի հիմնադրույթները
- Սոցիալական մոնիտորինգը որպես ԱՅՌԾ-ի մոնիտորինգի համակարգի բաղկացուցիչ մաս
- ԱՅՌԾ-ի մոնիտորինգի համակարգի գործունեության հիմնադրույթները

ՀՀ կառավարության նախաձեռնությամբ մշակման գործընթացում գտնվող Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՅՌԾ) նպատակ ունի սահմանել երկրում կայուն ու համապարփակ տնտեսական առաջընթացի այն ուղիները, որոնք կապահովեն նաև աղքատության հաղթահարումը երկրում:

Ցանկացած ծրագիր կամ քաղաքականություն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել նաև այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան գնահատել, թե արդյո՞ք տվյալ ծրագրի իրականացումը ճիշտ ուղու վրա է, ծրագրով նախատեսված միջոցառումները ո՞ր չափով են ուղղվում իրական հասցեատերերին եւ այդ միջոցառումների արդյունքները արդյո՞ք համապատասխանում են ծրագրով սահմանված նպատակներին:

Այդ պատճառով էլ ԱՅՌԾ ենթատեքստում կարելի էր կարելու է ԱՅՌԾ մոնիտորինգի համակարգի ստեղծման ու գործունեության անհրաժեշտությունը: Ըստ որում, մոնիտորինգի համակարգը կոչված պետք է լինի ոչ միայն վեր հանել աղքատության բնութագրիչները/գործոնները երկրում եւ նրա առանձին տարածաշրջաններում, այլև (ԱՅՌԾ իրականացմանը զուգընթաց) ապահովել ծրագրի իրականացման արդյունավետ կառավարում պարբերաբար գնահատելով երկրում աղքատության հաղթահարման գործում տեղի ունեցող առաջընթացը եւ ապահովելով հետադարձ կապ այս ոլորտում որոշումներ ընդունող կառավարական կառույցների հետ:

Խորհրդատվական գրքուկը պարզաբանում է մոնիտորինգի հասկացությունը, ԱՅՌԾ ենթատեքստում մոնիտորինգի համակարգի ստեղծման ու գործունեության սկզբունքները, ինչպես նաև ԱՅՌԾ մոնիտորինգի համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքն ու քաղաքացիական հասարակության մասնակցության մեխանիզմները:

Մոնիտորինգը որպես ԱՅԴ-ի անհրաժեշտ բաղկացուցիչ

Մոնիտորինգը տեղեկատվություն է տալիս այն մասին, թե արդյո՞ք այս կամ այն ծրագիրը, քաղաքականությունը կամ ռազմավարությունը իրականացվում է այնպես, ինչպես պլանավորված էր եւ հասնում է իր առջեւ դրված նպատակներին ու խնդիրներին: Այսպիսով, երբ ասում ենք «իրականացնել մոնիտորինգ», նկատի ենք ունենում հետեւել ծրագրի կամ ռազմավարության իրականացման ընթացքին եւ պարզել, թե ինչպիսի՞ առաջընթաց է տեղի ունենում ծրագրի սահմանած նպատակներին հասնելու գործում: Բնականաբար, այդ առաջընթացը գնահատելու համար առաջին հերթին անհրաժեշտ է վերլուծել եւ ֆիքսել նախքան ծրագրի գործունեությունը սկսելը եղած իրավիճակը, որը մոնիտորինգի իրականացման առաջին փուլի խնդիրն է եւ տեղեկատվական հիմք է հանդիսանում ԱՅԴ-ը մշակողների համար: Հետագայում, ծրագրի գործունեությանը զուգահեռ, մոնիտորինգը հնարավորություն պետք է տա նաեւ պարբերաբար գնահատել ծրագրի արդյունքներն ու ազդեցությունը ամենատարբեր ոլորտներում եւ այսպիսով, ապահովելով հատադարձ կապը՝ ճշգրտել վերջինիս սահմանած նպատակներն ու դրանց հասնելու մեխանիզմները:

Այսպիսով, մոնիտորինգի իրականացումը կամայական ծրագրի, այդ թվում նաեւ ԱՅԴ-ի արդյունավետ կառավարման գրավականն ու անհրաժեշտ բաղկացուցիչն է:

ԱՅԴ-ի մոնիտորինգի իրականացման առաջին քայլն, ինչպես նշվեց, այսպես կոչված «նախնական իրավիճակի» պարզաբանումն է, թե աղքատության եւ թե սոցիալական մոնիտորինգի միջոցով:

Աղքատության մոնիտորինգը իրականացվում է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից եւ հնարավորություն է տալիս պարզել, թե.

- ինչպիսի՞ն է աղքատության մակարդակը երկրում եւ ի՞նչ սրություն ու խորություն այն ունի,
- ովքե՞ր են աղքատները եւ ի՞նչ հիմնական բնութագրիչներ նրանք ունեն,
- ի՞նչ առանձնահատուկ դրսեւորումներ ունի աղքատությունը երկրում:

Աղքատության մոնիտորինգը լայնածավալ, երկարատեւ ու ծախսատար գործընթաց է: Դրա արդյունքների ամփոփումը երկար ժամանակ է պահանջում եւ, ամենակարեւորը՝ տալիս է ընդհանրացված պատկեր երկրում աղքատության ու դրա բնութագրիչների մասին, արձանագրելով փաստը: Նկատի ունենալով, որ աղքատությունը համակարգային երեւույթ է եւ դրա արմատները ընկած են տնտեսական, պետական կառավարման, հասարակական-քաղաքական, ինչպես նաեւ բարոյա-հոգեբանական արժեքների համակարգերի մեջ, անհրաժեշտություն է առաջանում առավել խորքային վերլուծություններ կատարել երկրում աղքատության ու դրա տարածվածության հնարավոր պատճառներն ու հետեւանքները բացահայտելու համար: Այդ նպատակի համար տեղեկատվական ու վերլուծական հիմք է հանդիսանում սոցիալական մոնիտորինգը:

Սոցիալական մոնիտորինգը իրականացվում է սոցիալական մոնիտորինգի եւ վերլուծության հանրապետական համակարգի կողմից եւ հնարավորություն է տալիս պարզել, թե.

- որո՞նք են մեր երկրում աղքատության ձեւավորման վրա շարունակաբար ազդող տնտեսական, սոցիալական ու հասարակական, ինչպես նաեւ կառավարման բնագավառներն ու գործոնները,
- տնտեսական, սոցիալական ու հասարակական ո՞ր բնագավառները եւ ինչպե՞ս են կրում աղքատության բացասական հետեւանքներն ամենատարբեր մակարդակներում:

Եթե աղքատության մոնիտորինգի գործիքամիջոցները տնային տնտեսությունների եկամուտների/ծախսերի կամ կենսամակարդակի հետազոտություններն են, ապա սոցիալական մոնիտորինգը մշակում է մեր երկրում աղքատության հետ առավել կապված տնտեսական ու սոցիալական ցուցանիշների համակարգ եւ հետեւում, թե այդ ցուցանիշների ինչպիսի՞ պատկեր ու միտումներ են դիտվում երկրում ու նրա առանձին տարածաշրջաններում:

ԱՅՈՒԾ-ի ամփոփ փաստաթղթի մշակումը հնարավորություն կտա անցնել արդեն ԱՅՈՒԾ-ի ու նրանով սահմանված նպատակների ու խնդիրների իրականացման ընթացքի մոնիտորինգի փուլին: Ըստ որում, աղքատության, ինչպես նաեւ սոցիալական մոնիտորինգը պետք է շարունակեն մնալ այս փուլի անհրաժեշտ բաղկացուցիչները՝ հիմք հանդիսանալով ԱՅՈՒԾ-ի մոնիտորինգի համար:

Այսպիսով, ԱՅՈՒԾ-ի մոնիտորինգը ընդհանուր առմամբ «հետեւում» է, թե աղքատության հաղթահարման առումով ինչպիսի՞ առաջխաղացում է տեղի ունենում նշված ռազմավարության արդյունքում: Օրինակ, աղքատության կրճատման միջանկյալ ռազմավարական ծրագրում որպես լավատեսական ծրագրային նպատակ է նշվում 2003թ-ի դրությամբ բնակչության թվում շատ աղքատների տեսակարար կշռի նվազեցումը մինչեւ 12%-ի (1999թ. դրությամբ՝ 23%-ից), իսկ աղքատների թվի նվազեցումը մինչեւ 44%-ի (1999թ. դրությամբ՝ 55%-ից) : Մոնիտորինգը, օրինակ, մասնավորապես հետեւում է, թե ծրագրի գործունեության շնորհիվ այս ցուցանիշները ինչպե՞ս են փոփոխվում ժամանակի մեջ, հանրապետության տարբեր մարզերում, գյուղական ու քաղաքային բնակչության շրջանում, նրանց տարբեր սոցիալական խմբերում եւ այլն:

Այժմ անդրադառնանք ԱՅՈՒԾ-ի մոնիտորինգի եւ ազդեցության գնահատման՝ որպես այդ ծրագրի երկու անհրաժեշտ բաղկացուցիչների, հիմնահարցերին: ԱՅՈՒԾ մոնիտորինգի տեղեկատվական բազան պետք է հնարավորություն տա հետեւել ծրագրի իրականացման արդյունքների միտումներին ժամանակի մեջ, սոցիալական ու տարածքային տարբեր խմբերի կտրվածքներով եւ, այդպիսով, գնահատել աղքատության կրճատման միջոցառումների ազդեցությունը: Այսպիսով, ԱՅՈՒԾ մոնիտորինգը եւ ազդեցության գնահատումը միմյանց փոխադարձաբար լրացնող գործընթացներ են: Դրանք երկուսն էլ ուղղված են աղքատության կրճատման ուղղությամբ պետական միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով տեղեկատվության սիստեմատիկ հավաքագրմանն ու վերլուծությանը, սակայն՝ տարբեր մեթոդոլոգիական հիմքերով: ԱՅՈՒԾ մոնիտորինգը եւ ազդեցության գնահատումը սերտորեն կապված են որոշումների ընդունման գործընթացների հետ՝ բոլոր մակարդակներում եւ ապահովում են հետադարձ կապ ծրագրի իրականացման շրջանում: Հետադարձ կապը հնարավորություն է տալիս տարածել ԱՅՈՒԾ մոնիտորինգի ու ազդեցության գնահատման արդյունքները հասարակության լայն խավերի շրջանում, քաղաքացիական հասարակությանը այդպիսով մասնակից դարձնելով ԱՅՈՒԾ գործընթացներին:

Ծրագրային նպատակներ ու խնդիրներ, մոնիտորինգային ցուցանիշներ, մոնիտորինգի համակարգ

Ծրագրի մոնիտորինգն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ վերջինիս նպատակներն ու խնդիրները հստակորեն սահմանված լինեն, ինչպես նաեւ մշակվեն գործիքամիջոցներ ու առանձնացվեն ինստիտուցիոնալ կառույցներ, որոնց միջոցով հնարավոր կլինի հետեւել դրանց հասնելու գործում տեղի ունեցած առաջխաղացմանը: Այս ենթատեքստում բերենք մոնիտորինգի համակարգի գործունեությանը վերաբերող որոշ ընդունված սահմանումներ, որոնք կպարզեցնեն նյութի հետագա շարադրանքը:

Նպատակներ - այն, ինչին երկիրը կամ հասարակությունը ցանկանում է հասնել ծրագրի իրականացման արդյունքում: Օրինակ, ԱՅԲ-ի իրականացման արդյունքում նպատակ է դրվում աղքատության հաղթահարումը Հայաստանում: Նպատակները մեծամասնությամբ որակական սահմանումներ են լինում:

Մոնիտորինգային ցուցանիշներ - Փոփոխական մեծություններ, որոնք օգտագործվում են նպատակներին հասնելու գործընթացում տեղի ունեցող առաջընթացը գնահատելու համար: Օրինակ, վերը նշված նպատակին հասնելու գործում տեղի ունեցող առաջընթացը կարելի է գնահատել հետեւելով, թե ինչպե՞ս է ժամանակի մեջ փոփոխվում աղքատ բնակչության թիվը երկրում:

Խնդիրներ - ցուցանիշների որոշակի մակարդակներ, որոնք քանակապես չափելի են: Օրինակ, «մինչեւ 2003 թվականը շատ աղքատ բնակչության տեսակարար կշիռը 1.5-2 անգամ պետք է կրճատվի»:

Արդյունքներ - ծրագրի գործունեության ուղղակի կամ միջնորդավորված ազդեցությունը բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման վրա:

ԱՅԲ-ի մշակումը ենթադրում է նպատակների հստակ սահմանում եւ նրանց համաձայնեցում, ինչպես նաեւ խնդիրների ձեւակերպում եւ դեզագրեզացիա (օրինակ՝ ռեգիոնալ, աղքատության, տարիքային, սեռային կտրվածքներով եւ այլն):

Միայն այս հիմքի վրա ԱՅԲ-ի իրականացմանը զուգահեռ հնարավոր է դառնում վերջինիս մոնիտորինգի համակարգի գործունեությունը, որը ենթադրում է.

- ԱՅԲ-ի մոնիտորինգի համակարգի ինստիտուցիոնալացում, վերջինիս գործունեության համար անհատեշտ մեխանիզմների եւ տեխնիկական միջոցների ապահովում,

- մոնիտորինգի համակարգի կառավարման ու գործունեության ընդհանուր մեթոդաբանության մշակում,

- մոնիտորինգային ցուցանիշների համակարգի մշակում, նրանց հավաքագրման/ հաշվարկման մեթոդոլոգիայի, դեզագրեզացիայի մակարդակների որոշում ու պարբերականությունների սահմանում, ցուցանիշների հավաքագրման աղբյուրների որոշում:

Պայմանականորեն ԱՅԲ-ի մոնիտորինգային ցուցանիշները կարելի է բաժանել երկու խմբի՝ միջանկյալ եւ վերջնական: Վերջնական ցուցանիշները չափում են սահմանված նպատակներին հասնելու ուղղությամբ ձեռքբերումները, դրանք այսպես կոչված «արդյունքների» եւ «ազդեցության» գնահատման ցուցանիշներ են: Օրինակ, եթե որպես նպատակ ԱՅԲ-ն սահմանում է աղքատ բնակչության տեսակարար կշռի էական նվազեցումը, ապա աղքատության գծից ցած գտնվող բնակչության թիվը կարող է հանդիսանալ վերջնական մոնիտորինգային ցուցանիշ: Միջանկյալ ցուցանիշները գնահատում են արդյունքների վրա ազդող գործոնները, կամ արդյունքներն ապահովող գործոնները: Դրանք այսպես կոչված «ռեսուրսների» եւ «թողարկման» ցուցանիշներն են: Օրինակ, եթե աղքատության հաղթահարման էական գործոն է համարվում զբաղվածության ապահովումը, ապա կարիքավոր բնակչության արդյունավետ զբաղվածությունն ապահովող ծրագրերի վրա կատարված ծախսերը, ինչպես նաեւ դրանց արդյունքում ստեղծված աշխատատեղերի քանակը միջանկյալ մոնիտորինգային ցուցանիշներ են (համապատասխանաբար՝ ռեսուրսների ու թողարկման ցուցանիշներ):

Հարկ է նշել, որ վերջնական ցուցանիշները, չնայած գնահատում են ծրագրի հաջողությունները, սակայն դանդաղ են փոխվում եւ ժամանակի մեջ դրանց փոփոխության վերահսկումը բավականին ուշանում է՝ այս ցուցանիշների վերաբերյալ վարչական վիճակագրական տվյալների ձեւավորման մեխանիզմների առանձնահատկություններից ելնելով: Ի տարբերություն դրանց, միջանկյալ ցուցանիշները առավել ճկուն են եւ ավելի արագ են վեր հանում տեղի ունեցած փոփոխությունները: Այսպիսով, մոնիտորինգի համակարգում կարելի է օգտագործել վերջնական (արդյունքային ու ազդեցության) եւ թե միջանկյալ (ռեսուրսների ու թողարկման) ցուցանիշները:

Նշենք նաեւ, որ մոնիտորինգային բոլոր ցուցանիշները պետք է բավարարեն որոշակի պայմանների, դրանք պետք է.

- հնարավորություն տան հնարավորինս ճշգրիտ գնահատել ծրագրի նպատակներին հասնելու գործընթացում տեղի ունեցող առաջընթացը,
- լինեն բավականաչափ զգայուն եւ արտացոլեն հատկապես վարվող քաղաքականության (ծրագրի գործունեության) հետեւանքով առաջացած փոփոխությունները,
- տարբերվեն ըստ դեգադրեցացիայի մակարդակների՝ ըստ սոցիալական ու աղքատության խմբերի, մարզերի, եւ այլն, ինչպես նաեւ ժամանակի մեջ,
- չփոփոխվեն պատահական, այլաժին ազդեցություններից, որպեսզի ճշգրտորեն ցույց տան առաջընթացը՝ հատկապես ծրագրի գործունեության արդյունքում,
- լինեն հնարավորին չափ պարզ՝ հավաքագրելու, հաշվարկելու & նրանց նշանակության հասկանալիության առումով, լինեն հուսալի:

Հատկապես կարելի է մոնիտորինգային ցուցանիշների դեգադրեցացիան: Եթե ազդեցացված ցուցիչները օգտագործվում են ամբողջ երկրի մակարդակով ԱՅԴ-ի գործունեության արդյունքները գնահատելու ու այլ երկրների հետ համեմատության հնարավորությունն ապահովելու համար, ապա դեգադրեցացված ցուցանիշներն արտացոլում են տարբերությունները երկրի տարբեր վարչական միավորների, աշխարհագրական շրջանների, գյուղ-քաղաք կտրվածքի, տարբեր սոցիալական խմբերի միջև: Ցուցանիշների դեգադրեցացիան հնարավորություն է տալիս վարել առավել հասցեական քաղաքականություն՝ ելնելով ծրագրով նախանշված նպատակներից ու երկրի առանձնահատկություններից:

Եվ վերջապես, նշենք, որ ԱՅԴ-ի մոնիտորինգի համակարգի գործունեության համար որպես մոնիտորինգային ցուցանիշների հաշվարկման/հավաքագրման տեղեկատվական հիմք կարող են ծառայել ազգային հաշիվները, մարդահամարի տվյալները, վարչական վիճակագրությունը, մարզային ու տարածաշրջանային վարչական միավորների տեղեկատվությունները, տնային տնտեսությունների բազմապատկային հետազոտությունները, որակական ու քանակական հատուկ հետազոտությունները եւ այլն:

ԱՅԴ-ի եւ դրա մոնիտորինգի համակարգի ինստիտուցիոնալացման եւ մասնակցային գործընթացի հիմնադրույթները


ԱՅԴ-ի մշակման համակարգող մարմինը ՀՀ Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունն է: ԱՅԴ-ի ամփոփ փաստաթղթի մշակման իրականացումը համակարգելու նպատակով ՀՀ կառավարությունում ստեղծվել է հատուկ Համակարգող Խորհուրդ, որի կազմում ընդգրկված են հինգ նախարարներ, ՀՀ ազգային ժողովի երեք մշտական հանձնաժողովների ղեկավարներ, համագործակցող միջազգային կառույցների՝ ՀԲ, ԱՄՀ, ՄԱԿ-ի գործակալությունների ու քաղաքացիական հասարակության

Ներկայացուցիչներ: Համակարգող Խորհրդի նախագահը ՀՀ Ֆինանսների եւ Էկոնոմիկայի նախարարն է: Համակարգող Խորհուրդը նշանակել է Աշխատանքային խումբ՝ ԱՀՌԾ մշակող ազգային փորձագետների խումբ ընտրելու ու ամփոփ փաստաթղթի պատրաստման աշխատանքները կորդինացնելու համար: Համալրվել են ազգային փորձագետների վեց խմբեր. աղքատության գնահատման ու վերլուծության, ԱՀՌԾ մեթոդաբանության, տնտեսական հիմնախնդիրների, սոցիալական հիմնախնդիրների, կառավարման, մասնակցության եւ մոնիտորինգի ու գնահատման: Ներկայումս ԱՀՌԾ-ի ամփոփ փաստաթուղթը մշակման փուլում է:

Այս հիմքի վրա, հաշվի առնելով, որ ԱՀՌԾ-ի մեթոդաբանությունը պահանջում է քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը դրա մշակման ու իրագործման ամբողջ ընթացքին, ԱՀՌԾ-ի մոնիտորինգի բաղկացուցիչ հիմնադրումը ենթադրում է՝ մոնիտորինգի մեթոդաբանության մշակում, մոնիտորինգի իրականացման ու կառավարման ինստիտուտների ու դրանց փոխկապակցված գործունեության մեխանիզմների ստեղծում, ԱՀՌԾ-ի մոնիտորինգին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովում:

Քաղաքացիական հասարակությունը՝ ի դեմս ոչ-կառավարական ու հասարակական կազմակերպությունների, գիտնականների, տարբեր շահագրգիռ խմբերի, շահառուների եւ այլն, պետք է ակտիվորեն մասնակցեն ԱՀՌԾ-ի մոնիտորինգին՝ դրա համար ձեւավորելով հասարակական օժանդակության խմբեր:

Ամենաընդհանուր գծերով, ԱՀՌԾ-ի մոնիտորինգի համակարգի գործունեությունը կարելի է ներկայացնել հետեւյալ սխեմայով:



Սոցիալական մոնիտորինգը որպես ԱՅԴԾ-ի մոնիտորինգի համակարգի բաղկացուցիչ մաս

ԱՅԴԾ-ի մոնիտորինգի բաղկացուցչի հիմնադրման ու գործունեության ուղղությամբ ազգային կարողությունների ուժեղացման նպատակով ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիրը եւ ՀՀ Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը համատեղ իրականացնում են «Սոցիալական մոնիտորինգի եւ վերլուծության (ՄՎ) համակարգի ստեղծում» ծրագիրը: Այն կոչված է օժանդակելու ԱՅԴԾ-ի մշակմանն ու հետագայում նաեւ վերջինիս մոնիտորինգի համակարգի գործունեությանը՝ աղքատության բնութագրիչների հանդիսացող սոցիալական ցուցանիշների համակարգի ստեղծման, դեզագրեզացման տարբեր մակարդակներով դրանց պարբերական հաշվարկման/հավաքագրման ու հրապարակման միջոցով:

«Սոցիալական մոնիտորինգի եւ վերլուծության համակարգի ստեղծում» ծրագրի շրջանակներում՝

1. մշակվել է աղքատության հետ առավել կոռելացված սոցիալական մոնիտորինգի ցուցանիշների համակարգ,
2. ստեղծվել է այդ ցուցանիշների հավաքագրման/հաշվարկման ու վերլուծության մեթոդաբանություն,
3. կազմակերպվել է ՀՀ մարզային ու հանրապետական կտրվածքներով դրանց հավաքագրումը եւ վերլուծությունը,
4. հրապարակվել է «Հայաստանի սոցիալական միտումները» տեղեկատվական-վերլուծական զեկույցը, որը լիապարփակ պատկերացում տալով հանրապետության սոցիալական վիճակի, աղքատության պատճառների, բնույթի ու ռիսկային խմբերի մասին, օժանդակում է ԱՅԴԾ մշակմանն ու այդ գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցությամբ:

«Սոցիալական ՄՎ համակարգի ստեղծում» ծրագրի իրականացման կազմակերպական շրջանակները նախանշելու նպատակով ՀՀ բոլոր մարզպետարանների (այդ թվում՝ Երեւանի քաղաքապետարանի) սոցիալական ապահովության ստորաբաժանումներում, մարզպետների հրամաններով, ստեղծվել են սոցիալական մոնիտորինգի եւ վերլուծության մարզային միավորներ ու նշանակվել են աշխատակիցներ (մարզպետարանների նշված բաժնի աշխատողներից: Աշխատակիցների ցանկը եւ կոնտակտային հեռախոսահամարները բերված են Հավելվածում): Սոցիալական ՄՎ կենտրոնական միավորը գտնվում է ՀՀ Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունում եւ կոչված է համակարգել ՄՎ մարզային միավորների աշխատանքները:

Սոցիալական ՄՎ համակարգի աշխատանքների մեթոդաբանական հիմնադրույթների մշակման եւ համակարգման գործընթացները կազմակերպվել են ՄԱԶԾ մասնագետ-խորհրդականների կողմից: Վերջիններս մշակել են աղքատության հետ առավել առընչվող սոցիալական եւ մոնիտորինգային ցուցանիշների համակարգ, որը բաղկացած է 56 ցուցանիշներից: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ մակրոտնտեսական ցուցանիշներ /14/, տնային տնտեսությունների ցուցանիշներ /12/ եւ սոցիալական ցուցանիշներ /30/: Ըստ որում, եթե մակրոտնտեսական ցուցանիշներն ու տնային տնտեսությունների ցուցանիշները ագրեզացված են եւ տալիս են հանրապետության սոցիալ-տնտեսական ամփոփ նկարագիրը, ապա սոցիալական ցուցանիշների խումբը դեզագրեզացված է ՀՀ մարզային կտրվածքով եւ հնարավորություն է տալիս վեր հանել մարզային առանձնահատկությունները կրթության, առողջապահության, տնտեսական

ակտիվության ու սոցիալական պաշտպանվածության ոլորտներում: Յուրաքանչյուր ցուցանիշի համար մշակված է դրա հաշվարկման մեթոդաբանությունը, չափման միավորը, սկզբնաղբյուրները, ազդեցացման աստիճանը եւ հավաքագրման պարբերականությունը: ՄՎ ցուցանիշների համակարգի հիմնական աղբյուրներն են՝ ազային հաշիվները, պաշտոնական վիճակագրության տեղեկատվությունը, մարզային ու տարածաշրջանային վարչական տեղեկատվությունը, տնային տնտեսությունների բազմապատկային քանակական հետազոտություններն ու որակական հատուկ հետազոտությունները: Ըստ որում, վերջինները հնարավորություն են տալիս առավել խորը ուսումնասիրել աղքատության հետ կապված առանձին հարցերն ու երեւոյթները՝ սոցիալական տարբեր խմբերում կարծիքների, նախապատվությունների ու գնահատականների մասին հարցումներ կատարելու միջոցով: Քանակական հետազոտությունների հետ միասին դրանք լրացնում են միմյանց՝ որպես սոցիալական մոնիտորինգը իրականացնելու գործում տեղեկատվական բազաների ստեղծման մեթոդներ:

ԱՅՈՒԾ-ի մշակումը, դրա նպատակների ու խնդիրների սահմանումը հնարավորություն կտա ստեղծել ԱՅՈՒԾ-ի մոնիտորինգի ամբողջական համակարգը, ուր սոցիալական ՄՎ արդեն իսկ ձեւավորված ինստիտուտները հանդես կգան որպես կարելորագույն բաղկացուցիչ մաս՝ համալրելով ու հարստացնելով ԱՅՈՒԾ միջանկյալ ու վերջնական մոնիտորինգային ցուցանիշների համախմբությունը:

ԱՅՈՒԾ-ի մոնիտորինգի համակարգի գործունեության հիմնադրույթները

Այսպիսով, ԱՅՈՒԾ-ի մոնիտորինգի համակարգի ստեղծման ու գործունեության ընթացքը պայմանականորեն կարելի բաժանել երկու փուլերի: Դրանցից առաջինը աղքատության եւ սոցիալական մոնիտորինգներն են, որոնք հնարավորություն են տալիս բազմակողմանիորեն վերլուծել աղքատության, ինչպես նաեւ դրա հետ առնչվող սոցիալական ցուցանիշների իրավիճակն ու միտումները երկրում եւ նրա առանձին մարզերում՝ նախքան ԱՅՈՒԾ-ի իրականացումը սկսելը: Երկրորդ փուլը արդեն ներառում է նաեւ բուն ԱՅՈՒԾ-ի մոնիտորինգը, այսինքն՝ ԱՅՈՒԾ սահմանած նպատակներին հասնելու գործընթացում տեղի ունեցող առաջխաղացումների պարբերական գնահատումը ԱՅՈՒԾ մոնիտորինգային ցուցանիշների համակարգին հետեւելու եւ հատուկ քանակական ու որակական հետազոտություններից ստացվող տեղեկատվության վերլուծությունների միջոցով:

ԱՅՈՒԾ-ի մոնիտորինգի համակարգի գործունեության առաջին փուլը իրականացնում է՝

- աղքատության մոնիտորինգ՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կենսամակարդակի հետազոտությունների արդյունքների վերլուծության միջոցով, դոնոր հանրույթի (WB, USAID, UNICEF, UNDP, TACIS եւ այլն) տեխնիկական ու մեթոդաբանական աջակցությամբ,
- սոցիալական ՄՎ համակարգի ինստիտուցիոնալացում, գործունեության մեթոդաբանության մշակում եւ սոցիալական մոնիտորինգ՝ սոցիալական ՄՎ ազգային համակարգի միջոցով:

Երկրորդ փուլը պետք է իրականացնի՝

- ԱՅՈՒԾ-ի մոնիտորինգի ամբողջ համակարգի ինստիտուցիոնալացում
- ԱՅՈՒԾ սահմանած կոնկրետ նպատակներին ու խնդիրներին համապատասխանող ռեսուրսների, թողարկման, արդյունքների ու ազդեցության ցուցանիշների մոնիտորինգ, զուգակցելով այն աղքատության եւ սոցիալական մոնիտորինգային ցուցանիշների համակարգի պարբերական մոնիտորինգի հետ,

- Ցուցանիշների նորացված համակարգի պարբերական մոնիտորինգի հիման վրա ԱՅԴ-ի ազդեցության գնահատման ու դրա խնդիրների վերանայման համար տեղեկատվական ու վերլուծական բազիսի ստեղծում:

Հարկ է նշել, որ ԱՅԴ-ի մոնիտորինգի համակարգի գործունեության առաջին փուլն իր բոլոր կոմպոնենտներով արդեն իսկ իրականացվում է, իսկ երկրորդ փուլը պետք է սկզբնավորվի ԱՅԴ-ի նպատակների ու խնդիրների սահմանման հետ միասին եւ ցիկլային ձեւով իրականացվի ԱՅԴ գործունեության ամբողջ ընթացքում՝ հետադարձ կապի մեխանիզմների ապահովման շնորհիվ:

Մոնիտորինգի այս փուլի իրականացումը պետք է հնարավորություն տա գնահատել ԱՅԴ-ի սահմանած նպատակներին հասնելու գործում ձեռք բերված առաջընթացը՝ տարբեր ոլորտներին ուղղված ռեսուրսների, դրանցից ստացված արդյունքների ու ազդեցության գնահատումն ապահովող ցուցանիշների մշակման ու մոնիտորինգային ցուցանիշների համակարգում դրանց ընդգրկման միջոցով: Այսպիսով, այս փուլում մոնիտորինգային ցուցանիշների համակարգը պետք է նորացվի եւ կողմնորոշվի դեպի ԱՅԴ արդյունքների գնահատումը, զուգակցվելով աղքատության ու սոցիալական մոնիտորինգի հետ: Վերջինս հնարավորություն կտա պարբերաբար իրականացնել նաեւ ԱՅԴ ազդեցության գնահատում եւ, որպես արդյունք՝ կճշգրտի ծրագրի կառավարման մեխանիզմները:

Գրքույկը հրատարակման է պատրաստվել ՄԱԶԾ եւ ՀՀ կառավարության կողմից համատեղ իրականացվող «Սոցիալական մոնիտորինգի եւ վերլուծության համակարգի ստեղծում» ծրագրի կողմից:

Գրքույկը հրատարակվել է ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Աղքատության հաղթահարման ամփոփ ռազմավարական ծրագրի մշակման մասնակցության գործընթացի շրջանակներում:

Առաջարկությունների համար կարող եք դիմել ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն», հասցեն՝ Երեւան 375010, Հանրապետության Հրապարակ, Կառավարության տուն1, մասնաշենք 4, հեռ. 52-37-90, 54-30-51, ֆաքս՝ 52-37-90, էլ. փոստ՝ info@gov.am:

ԱՆՌԾ. Ամփոփ ծրագրի մշակման գործընթաց



ԱՂԲԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՅԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԾՐԱԳԻ

Մասնակցության Գործընթաց

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅՎՆԵՐ

ԻՆՉ Է ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇՆ

- Անհատական համարանիշ. ի՞նչ է սա
- Համարանիշի հատկացում
- Տեղեկատվական համակարգերում անհատական համարանիշի կիրառում
- Տեղեկատվության փոխանակում տարբեր տեղեկատվական համակարգերի միջև՝ համարանիշը կիրառելով որպես տեղեկատվության սուբյեկտի նույնականացման միջոց
- Հայաստանի Հանրապետությունում անհատական համարանիշերի համակարգի ներդրումը եւ անհատական տվյալների պաշտպանությունը
- Ինչպիսին պետք է լինի անհատական համարանիշերի համակարգը
- Ինչպես են պաշտպանվելու քաղաքացիների իրավունքները
- «ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անհատական համարանիշ. ի՞նչ է սա

Մեր հանրապետության սոցիալական ապահովության համակարգը ներկայումս գտնվում է բարեփոխումների փուլում: Անցում է կատարվում դեպի քաղաքացու սահմանադրական իրավունքների իրացման, սոցիալական դժվար կացության մեջ գտնվող քաղաքացիների իրավիճակը մեղմացնող՝ համաշխարհային պրակտիկայում ընդունված սկզբունքները: Ակնհայտ է, որ այդ սկզբունքների իրագործման համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան մեխանիզմներ:

Մի կողմից՝ սոցիալական ապահովության համակարգում անհրաժեշտ է հստակ, նպատակաուղղված եւ ակտիվ քաղաքականություն՝ առկա սահմանափակ ռեսուրսները հնարավորինս նպատակային օգտագործելու համար, քանի որ ներկայումս իրականացվող պասիվ հայեցողական քաղաքականությունն ի վիճակի չէ էականորեն ազդել իրավիճակի բարելավման վրա. անհրաժեշտ է անցնել դեպի ակտիվ կառուցողական քաղաքականության:

Մյուս կողմից՝ առարկայական է դարձել կենսաթոշակային բարեփոխումների անհրաժեշտությունը: Հարկ է նշել, որ սկսված բարեփոխումների հիմքում ընկած է կուտակային համակարգի ներմուծումը: Սա նշանակում է, որ ներկայումս գործող սոցիալական համերաշխության սկզբունքից, երբ կենսաթոշակները կախված չեն անձի ներդրման չափից, պետք է անցում կատարել դեպի սոցիալական արդարության

սկզբունքը, երբ սոցապահովագրական փոխհատուցման սկզբունքը դառնում է իրոք ապահովագրական՝ կախված կոնկրետ անձի ներդրումից:

Այս երկու գործընթացներն էլ անհնար է արդյունավետ իրականացնել առանց քաղաքականության օբյեկտի մասին անհատականացված, ամփոփ տեղեկատվության կուտակման ժամանակակից միջոցների առկայության:

Ընդհանրապես, ցանկացած ոլորտում աշխատանքների արդյունավետության գրավական են ճշգրիտ տեղեկատվությունը եւ այդ տեղեկատվության օպերատիվ կառավարման հնարավորությունը:

Տեղեկատվությանը ժամանակին եւ ամբողջությամբ տիրապետելը թույլ է տալիս արդյունավետ վերահսկել գործընթացը, անհրաժեշտ կանխատեսումներ կատարել եւ բարդ իրավիճակներում ճիշտ որոշումներ կայացնել: Այդ առումով բացառություն չէ նաեւ սոցիալական ոլորտը: Այստեղ մենք գործ ունենք տվյալների հսկայական ծավալների հետ, քանի որ ոլորտում ընդգրկված է հանրապետության գրեթե ողջ ազգաբնակչությունը: Ամբողջ տեղեկատվությանը չտիրապետելը, մի կողմից, թույլ չի տալիս արդյունավետ իրագործել նախագծված բարեփոխումների ծրագրերը, մույս կողմից՝ տեղիք է տալիս բազմաթիվ չարաշահումների:

Գիտատեխնիկական առաջընթացի ներկա պայմաններում ակնհայտ է վերոհիշյալ գործընթացում համակարգիչները լայնորեն կիրառելու անհրաժեշտությունը:

Այս համատեքստում առաջ է գալիս ինքնաշխատ (համակարգչավորված) տեղեկատվական համակարգերում քաղաքացուն նույնականացնելու միասնական միջոցի անհրաժեշտություն:

Այսպիսով անհատական համարանիշը (ԱՅ) կյանքի ընթացքում քաղաքացուն մեկ անգամ տրվող եզակի տասանիշ թիվ է, որը ձեւավորվում է քաղաքացու ծննդյան ամսաթվի, ամսվա, տարեթվի, սեռի, հերթական համարի եւ հսկիչ նիշի հիման վրա, եւ որը կոչված է քաղաքացուն նույնականացնելու համակարգչավորված տեղեկատվական համակարգերում:

Իսկ անհատական համարանիշերի համակարգը տեղեկատվական համակարգ է, որը քաղաքացու մասին պարունակում է այնպիսի տվյալներ, որոնք անհրաժեշտ են համարանիշեր հատկացնելու համար եւ նպատակ ունեն բացառել երկրորդ համարանիշի հատկացումը՝ իր հնարավոր բացասական հետեւանքներով:

Այստեղ բնական հարց է ծագում. ինչու՞ հնարավոր չէ քաղաքացուն նույնականացնելու համար օգտագործել այժմ գոյություն ունեցող միջոցներից որեւէ մեկը, օրինակ՝ անձնագրի համարը:

Անձնագրի համարը փաստաթղթի հերթական համարն է, ի տարբերություն անհատական համարանիշը հաստատող վկայականի, որի դեպքում փաստաթուղթը հաստատում է համարանիշը: Անձնագիրը կորցնելու կամ քաղաքացու՝ անձնագրում ֆիքսված տվյալներից որոշների փոփոխության դեպքում տրվում է նոր անձնագիր՝ նոր համարով, որն անհարմարություններ կստեղծի քաղաքացուն նույնականացնելու գործում:

Իսկ անհատական համարանիշը կյանքի ընթացքում քաղաքացուն տրվում է մեկ անգամ, եւ այն հաստատող փաստաթուղթը կորցնելու դեպքում տրվում է նույն համարանիշը հաստատող նոր փաստաթուղթ:

Ուշադրություն պետք է դարձնել, որ քաղաքացին համարանիշերի համակարգում ֆիքսվելու է անփոփոխ համարանիշով, իսկ անձնագրի տվյալները լինելու են միայն համարանիշի «ուղեկցող» տվյալներ, որոնց փոփոխությունը համակարգում ֆիքսելուց հետո էական նշանակություն չի ունենալու անձին նույնականացնելու գործում, քանի որ ամեն դեպքում համարանիշը մնալու է նույնը:

Փաստորեն, համարանիշը միայն համար է, որը հնարավորություն կտա դրա տակ կուտակել տեղեկատվություն եւ ստեղծել անձի մասին տվյալների բանկ:

Համարանիշերի համակարգի ներդրումն ինչ-որ առումով պետք է հանդես գա որպես մի ավելի գլոբալ գործընթացի սկիզբ եւ բաղկացուցիչ մաս: Խոսքը պետական կառավարման համակարգում քաղաքացիների մասին տվյալներ պարունակող տեղեկատվական համակարգերի համակարգչավորման, նոր տեղեկատվական համակարգերի ստեղծման, եւ դրանց միջեւ տեղեկատվության փոխանակման գործընթացներում համարանիշի՝ որպես քաղաքացուն ֆիքսելու միասնական միջոցի, օգտագործելու մասին է:

Փաստորեն, համարանիշը լինելու է մի մեծ մեխանիզմի բաղկացուցիչ մասը, առանց որի անհնար է պատկերացնել այդ մեխանիզմի աշխատանքը:

Ելնելով վերոհիշյալից՝ ամբողջ գործընթացը կարելի է բաժանել երեք պայմանական փուլի՝ կապված սուբյեկտների գործընթացի ամբողջականացումն ապահովող գործողությունների հետ.

1. համարանիշի հատկացում կենտրոնի կողմից (կամ անհատական համարանիշերի համակարգի ներդրում),
2. տեղեկատվական համակարգերում անհատական համարանիշի կիրառում,
3. տեղեկատվության փոխանակում տարբեր տեղեկատվական համակարգերի միջեւ՝ համարանիշը կիրառելով որպես տեղեկատվության սուբյեկտի նույնականացման միջոց:

Համարանիշի հատկացում

Սա աշխատանքի հիմնական եւ կարելու մասերից մեկն է: Այս փուլի հաջողությամբ է պայմանավորված ամբողջ գործընթացի իրականացումը:

Այս փուլում գործընթացները պետք է կարգավորվեն այնպես, որ ապահովվի համարանիշի եզակիությունն ու բացառվի միեւնույն անձին երկրորդ համարանիշի հատկացումը, ինչը հնարավոր է միայն համարանիշ հատկացնելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության հավաստիության դեպքում: Սա ենթադրում է պետական այլ մարմինների հետ լայն համագործակցություն եւ նրանցից անհրաժեշտ ու հավաստի տեղեկատվության ստացում: Այս պայմանական փուլն իրականացնելու համար ծրագրի տեխնիկական կողմից բացի անհրաժեշտ է նաեւ հստակ օրենսդրական դաշտի առկայություն, որը կստեղծի համարանիշերի հատկացման իրավական հիմքն ու կկարգավորի այդ գործընթացում ծագող իրավահարաբերությունները: ՀՀ Ազգային ժողովն արդեն առաջին ընթերցմամբ ընդունել է «Անհատական համարանիշերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Տեղեկատվական համակարգերում անհատական համարանիշի կիրառում

Այստեղ եւս անհրաժեշտ է հստակ օրենսդրական դաշտի առկայություն, որը կկարգավորի անհատական համարանիշերի կիրառումը տեղեկատվական համակարգերում:

Հարկ է նկատել, որ ի սկզբանե նախատեսվում էր, որ համարանիշը պարտադիր կկիրառվի միայն սոցիալական ապահովության ոլորտի տեղեկատվական համակարգերում՝ որպես անձին նույնականացնելու միջոց: Սակայն հետագա քննարկումների շնորհիվ, գիտակցելով նման միջոցի համապետական կիրառման առավելությունները, վերոհիշյալ օրենքի նախագծում ամրագրվեց, որ համարանիշերի կիրառումը պարտադիր է հետեւյալ դեպքերում.

- ա) քաղաքացիներին եկամուտների վճարման ժամանակ,
- բ) օրենսդրությամբ սահմանված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումներ եւ հատուցումներ, ինչպես նաեւ հարկեր, տուրքեր եւ պարտադիր այլ վճարներ կատարելու ժամանակ,
- գ) սոցիալական ապահովության պետական կամ ոչ պետական նպատակային ծրագրեր իրականացնելու ընթացքում անհատական տվյալներ մշակելու ժամանակ եւ այլն:

Տեղեկատվության փոխանակում տարբեր տեղեկատվական համակարգերի միջեւ՝ համարանիշը կիրառելով որպես տեղեկատվության սուբյեկտի նույնականացման միջոց

Սա ընդհանուր առմամբ կարելի է համարել այն գործընթացը, որից կախված է պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետությունը թե սոցիալական ապահովության, թե մյուս ոլորտներում:

Տվյալների փոխանակության գործընթացում անհրաժեշտ է առաջնորդվել հետեւյալ սկզբունքներով.

- անհրաժեշտ տեղեկատվությունը պետք է արագ ստացվի, քանի որ հակառակ դեպքում տեղեկատվությունը դառնում է անիմաստ,
- տեղեկատվությունը պետք է լինի հավաստի,
- տեղեկատվությունը պետք է լինի հասցեական:

Տեղեկատվության փոխանակման արդյունքների արդյունավետությունը մեծի մասամբ պայմանավորված է վերոհիշյալ սկզբունքների իրացումով, իսկ վերջինս էլ՝ անհատական համարանիշերի կիրառումով:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է ձեւակերպել անհատական համարանիշերի համակարգի ներդրման նպատակը՝ անհատական համարանիշերի համակարգի ներդրումը (անհատական համարանիշերի հատկացումը) նպատակ ունի եզակի անհատական համարանիշի օգտագործման միջոցով կանոնակարգել եւ բարելավել քաղաքացուն վերաբերող անհատական տվյալները օրենսդրությամբ սահմանված կարգով հավաքագրող տեղեկատվական տարբեր համակարգերի միջեւ տեղեկատվության փոխանակման գործընթացները, ինչպես նաեւ պետական նպատակային ծրագրերի, այդ թվում նաեւ պետական կառավարման, սոցիալական, ֆինանսաբանկային եւ այլ ոլորտների աշխատանքների որակը:

Վերը նշված բոլոր գործընթացների միջով կարմիր թելի պես անցնում է անհատական տվյալների գաղտնիության խնդիրը:

Հարկ է նշել, որ այս խնդիրը կլուծվի «Անհատական տվյալների մասին» օրենքով, որն արդեն սահմանված կարգով ներկայացված է ՀՀ կառավարություն: Վերոհիշյալ օրենքը կկարգավորի անհատական տվյալների մշակման գործընթացում ծագող իրավահարաբերությունները՝ իրավական հիմք ստեղծելով քաղաքացու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի իրացման համար:

Հայաստանի Հանրապետությունում անհատական համարանիշերի համակարգի ներդրումը եւ անհատական տվյալների պաշտպանությունը

Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության համակարգն այսօր գտնվում է բարեփոխումների վճռորոշ փուլում: Տնտեսական նոր իրավիճակը թելադրում է համաշխարհային պրակտիկայում ընդունված սկզբունքների կիրառում: Այդ սկզբունքների իրագործումը պահանջում է համապատասխան մեխանիզմներ, ինստիտուցիոնալ եւ կառուցվածքային բարեփոխումներ, ինչպես նաեւ համապատասխան գործիքների ներդրում, որոնք հաճախ նորամուծություն են եւ պահանջում են որոշակի մասնագիտական եւ քաղաքական կողմորոշում:

Այս կոնտեքստում էլ պետք է դիտարկել հանրապետությունում անհատական համարանիշերի համակարգի ներդրումը, որը թելադրված է հետեւյալ հիմնական հարցերի առկայությամբ.

ա) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ կատարողների եւ հարկատուների անբողջական հաշվառման անհրաժեշտությունը եւ որպես դրա հետեւանք՝ ստվերային տնտեսության նվազեցումը,

բ) սոցիալական օգնության տարբեր պետական եւ ոչ պետական ծրագրերի միջեւ տվյալների փոխանակման անհրաժեշտությունը՝ ռեսուրսների արդար վերաբախման նպատակով,

գ) պետական կառավարման տարբեր ոլորտների միջեւ տվյալների փոխանակման անհրաժեշտությունը,

դ) սոցիալական ապահովության համակարգի կառավարման բարելավման անհրաժեշտությունը:

Դեռեւս 1999թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանության արժանացրեց «Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների սոցիալական ապահովության անհատական ծածկագրային համակարգի ներդրման մասին» հայեցակարգը եւ դրանով հիմք դրվեց անհատական համարանիշերի համակարգի ներդրմանը: Այդ հայեցակարգի ոգով է նախապատրաստվել «Անհատական համարանիշերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Վերոհիշյալ հայեցակարգը կաեւորում է նաեւ անհատական տվյալների պաշտպանության անհրաժեշտությունը, եւ, հաշվի առնելով հանրապետությունում այդ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի բացակայությունը, նախապատրաստվել է նաեւ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Ինչպիսին պետք է լինի անհատական համարանիշերի համակարգը

Քաղաքացուն հատկացվող անհատական համարանիշի հիմնական նպատակն է նրա նույնականացումը, իդենտիֆիկացիան: Անհատական համարանիշը քաղաքացուն տրվելու է ողջ կյանքի ընթացքում մեկ անգամ եւ, անկախ ամեն ինչից, փոփոխման ենթակա չէ: Այն պետք է հստակ տարբերակվի արդեն գոյություն ունեցող համարակալման այլ համակարգերից: Անձնագրի փոփոխության դեպքում փոխվում է նաեւ նրա համարը, իսկ անհատական համարանիշը մնալու է անփոփոխ:

Քաղաքացիներին հատկացվող անհատական համարանիշերը հիմք են հանդիսանում անհատական համարանիշերի համակարգի ստեղծման համար: Այդ համակարգի ստեղծման նպատակներն են՝

- քաղաքացու վերաբերյալ անհատական տվյալներ հավաքագրող տեղեկատվական

տարբեր համակարգերի միջև տեղեկատվության փոխանակման ընթացակարգերի եւ որակի բարելավումը,

- պետական նպատակային ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացումը,

- սոցիալական պետական տարբեր ծրագրերից օգտվող քաղաքացիների ամբողջական հաշվառումը,

- սոցիալական ապահովության ոլորտում քաղաքացիների վերաբերյալ տեղեկությունների միասնական եւ թափանցիկ համակարգի ստեղծումը:

Անհատական համարանիշը պետք է բաղկացած լինի 10 նիշից եւ ձեւավորվի քաղաքացու ծննդյան թվի, սեռի, օժանդակ հերթական համարի եւ հսկիչ նիշ հիման վրա: Համաշխարհային պրակտիկայում գոյություն ունի նաեւ համարանիշի ձեւավորման այլ «համր» տեսակ, համաձայն որի համարանիշը իր մեջ չի կրում որեւէ կոդավորված տեղեկություն, այնուամենայնիվ, ի կատարումն ՀՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 2-ի N 733 որոշմամբ հաստատված հայեցակարգի դրույթների, օրենքի նախագծում ընտրվել է համարանիշի «խոսող» տարբերակը:

Կարելի է նշել տեղեկատվության այն աղբյուրները, որոնցից պետք է ձեւավորվի անհատական համարանիշերի համակարգը: Համարանիշը տրվում է, հիմք ընդունելով այն տվյալները, որոնք օրենքով սահմանված կարգով ստացվում են սոցիալական ապահովության համակարգի համապատասխան ստորաբաժանումներից, ինչպես նաեւ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից:

Անհատական համարանիշերը պետք է օգտագործվեն քաղաքացիների եկամուտների վճարման ժամանակ, սոցիալական ապահովագրության վճարների վճարման ժամանակ, պետական կամ սոցիալական աջակցության նշանակման ժամանակ, եւ օրենքով սահմանված այլ դեպքերում: Օրենքի նախագծում տրված են նաեւ օրենքի սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները, սահմանված են անցումնային դրույթներ:

Ինչպես են պաշտպանվելու քաղաքացիների իրավունքները

Այսօր Հայաստանում իրականացվում է պետական մարմինների անհատական տվյալներ պարունակող տեղեկատվական բազաների համակարգչավորումը: Տարբեր պետական կառույցներ արդեն ունեն տեղեկատվական համակարգեր, որտեղ անհատական տվյալները կուտակվում, մշակվում եւ փոխանցվում են համակարգչի միջոցով: Մի շարք նախարարություններ, գերատեսչություններ ինչպես նաեւ պետական եւ մասնավոր կազմակերպություններ պլանավորում են ներդնել նոր տեղեկատվական համակարգչային բազաներ:

«Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների սոցիալական ապահովության անհատական ծածկագրային համակարգի ներդրման հայեցակարգն» ընդունում է անհատական տվյալների պաշտպանության անհրաժեշտությունը, նշելով, որ պետք է ապահովվի գոյություն ունեցող տվյալների գաղտնիությունը եւ պատշաճ հավաստիությունը:

Հաշվի առնելով այս ամենը ակնհայտ է դառնում անհատական տվյալներ մշակողների լիազորությունների ու պարտականությունների իրավական կարգավորման եւ անհատի

շահերի իրավական պաշտպանության անհրաժեշտությունը:

Հանրապետությունում գործող օրենսդրությունում չկա անհատական տվյալների պաշտպանության մասին մեկ միասնական իրավական ակտ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանում է անհատական տվյալների պաշտպանության մասին դրույթ: Սահմանադրության 20-րդ հոդվածն արգելում է քաղաքացիների մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկատվություն հավաքել, պահել, օգտագործել կամ տարածել այլ կերպ, քան նախատեսվում է օրենքով: Ուստի, անհրաժեշտ է ընդունել օրենք, որով կսահմանվեն անհատական տվյալների մշակման միասնական սկզբունքները, անհատական տվյալներ մշակողների եւ անհատի իրավունքներն ու պարտականությունները, եւ դրանց խախտման համար պատասխանատվությունը:

Անհատական տվյալների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության եւ միջազգային, հատկապես Եվրոպական, ստանդարտների մերձեցման կարելիությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Եվրոխորհրդին անդամակցությամբ: Անհատական տվյալների պաշտպանությունը բխում է միջազգային իրավունքի այնպիսի նորմերից, ինչպիսիք են Մարդու Իրավունքների Միջազգային Դաշնագիրը եւ Մարդու Իրավունքների եւ Հիմնական Ազատությունների Պաշտպանության Եվրոպական Կոնվենցիան, որտեղ ճանաչվում են մարդու անձնական կյանքի եւ հաղորդակցության գաղտնիության պաշտպանման իրավունքը: Այս փաստաթղթերի հիման վրա են ընդունված անհատական տվյալների պաշտպանության ոլորտը կարգավորող միջազգային իրավական փաստաթղթերը: Անհատական տվյալների պաշտպանության ներկայացված միջազգային ստանդարտների հիման վրա է մշակված «Անհատական տվյալների մասին» օրենքի նախագիծը:

Օրենքի նախագիծը սահմանում է անհատական տվյալների մշակման թույլատրելիությունը, կարգավորում է տվյալների փոխանցման, ուղղման, ուղեփակման եւ ոչնչացման գործընթացը: Մասնավորապես սահմանվում է, որ առանց տվյալների սուբյեկտի համաձայնության, տվյալները կարող են մշակվել միայն բացառիկ եւ խիստ սահմանափակ դեպքերում, օրինակ եթե՝

- ա) հնարավոր չէ նախապես ստանալ տվյալների սուբյեկտի համաձայնությունը եւ ակնհայտ է, որ դա համապատասխանում է տվյալների սուբյեկտի կենսական շահերին ու հիմքեր չկան ենթադրելու, որ նա, իմանալով մշակման մասին, չէր տա իր համաձայնությունը,
- բ) դա պահանջվում է պետական եւ հասարակական անվտանգությունն անմիջական սպառնալիքից պաշտպանելու համար,
- գ) դա պահանջվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ իրավական ակտերով սահմանված լիազորությունների իրականացման համար:

Այս դեպքերից մեկի դասական օրինակն է դժբախտ պատահարը, երբ քաղաքացին ի վիճակի չէ տալ համաձայնություն իր տվյալները մշակելու համար, սակայն նրա կենսական շահերը պահանջում են այդ տվյալների մշակումը, օրինակ՝ անուն, ազգանուն, բնակության վայր, արյան խումբ, հիվանդության պատմություն եւ այլն: Հարկ է նշել, որ արգելելով առանց սուբյեկտի համաձայնության նրա վերաբերյալ տվյալների մշակումը, օրենքից դուրս են մնում այսօր գործող այն համակարգերի գործունեությունը, որոնք մշակում են նաեւ անհատական տվյալներ՝ ի նպաստ հասարակության շահերին եւ անվտանգությանը, ինչպես նաեւ պաշտպանելով երրորդ անձին վնաս պատճառելու հնարավորությունից: Օրենքի նախագիծում օգտագործված դրույթը լայնորեն կիրառվում է անհատական տվյալների պաշտպանությունը կարգավորող միջազգային պայմանագրերում եւ օտարերկրյա պետությունների օրենսդրություններում:

Օրենքի կիրառման ապահովման, ինչես նաեւ տվյալների պաշտպանության ոլորտում

մշակման հարաբերությունների կարգավորման նպատակով նախնական տարբերակով նախատեսվում էր տվյալների պաշտպանության հանձնաժողովի ստեղծում: Ի տարբերություն դատական համակարգի, հանձնաժողովը՝

- հաշվառում է տվյալներ մշակողներին,
- վերահսկում է նրանց գործունեության համապատասխանելիությունը անհատական տվյալների մասին օրենքին,
- ուսումնասիրում առաջացած խնդիրները,
- անհրաժեշտության դեպքում միջոցներ է ձեռնարկում խախտումները վերացնելու եւ խախտողներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Վեճերի լուծման ժամանակ այս հանձնաժողովը չի փոխարինում դատարանին, ինչպես եւ դատական համակարգը չի կարող իրականացնել վերոհիշյալ գործառնությունները: Այդ իսկ պատճառով, նմանատիպ մարմիններ կան զարգացած իրավական համակարգ ունեցող պետություններում, եւ դրանք կարելուրագույն դեր են խաղում քաղաքացիների իրավունքների պաշտպանության, ինչպես նաեւ խախտումների կանխարգելման գործում: Սակայն քննարկումների արդյունքում որոշվեց օրենքի նախագծից հանել կանոնակարգիչ հանձնաժողովին վերաբերող դրույթները եւ խնդրի կարգավորումը թողնել դատական համակարգին:

Ամփոփելով վերն ասվածը, անհրաժեշտ է նշել, որ «Անհատական համարանիշերի մասին» եւ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքներն ընդունվելուց հետո («Անհատական համարանիշերի մասին» ՀՀ օրենքի նախագիծն արդեն ընդունվել է առաջին ընթերցմամբ) դրանք իրենց ուրույն դերը կունենան հանրապետությունում սոցիալական բարեփոխումների ընթացքի, պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման եւ հանրապետությունում ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման գործընթացում:

**«ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ինչպես «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, այնպես էլ այս օրենքի նախագիծը բացառիկ կարելուր նշանակություն ունի հանրապետության սոցիալական ապահովության համակարգում իրականացվող բարեփոխումների առաջընթացն ապահովելու գործում: Նշված օրենքի նախագիծը մշակելիս հաշվի է առնվել մի շարք երկրների փորձը:

Օրենքի նախագծով սահմանվում է անհատական համարանիշի հասկացությունը, համակարգի ստեղծման նպատակը, համակարգում հավաքագրվող անհատական տվյալների սպառիչ ցանկը, անհատական համարանիշի տրամադրման եւ կիրառման հիմնական սկզբունքները:

Օրենքի ընդունումից հետո համակարգի ներդրումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունն իրականացրել է նախատեսված նախապատրաստական աշխատանքների հիմնական ծավալը, մասնավորապես նախարարության համակարգում ստեղծվել է «Նեմրոթ» տեղեկատվական-վերլուծական կենտրոնը՝ հազեցված անհրաժեշտ տեխնիկայով ու համապատասխան ծրագրավորող-մասնագետներով: Այս կառույցի միջոցով պետք է իրականացվեն Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիներին անհատական համարանիշեր տրամադրելու աշխատանքները: Կենտրոնը, հազեցած լինելով համապատասխան ռեսուրսներով, առաջիկայում ի վիճակի

կլինի ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կենտրոնական ապարատի աջակցությամբ սոցիալական ապահովության բնագավառում իրականացնել տարաբնույթ վերլուծություններ: Հայաստանի Հանրապետությունում անհատական համարանիշերի համակարգի ներդրման աշխատանքների անմիջական կառավարման եւ համակարգի գործունեության նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով ստեղծվել է ծրագրի կառավարման խորհուրդ՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ նախարարությունների ներկայացուցիչներին (փոխնախարարներ), մշակվել են տեխնիկական առաջադրանքները եւ դրանց համապատասխան համակարգչային ծրագրերի փաթեթները:

ՀՀ կառավարության որոշմամբ ս/թ մարտ ամսից Կոտայքի մարզի Կոտայքի նախկին վարչական շրջանի տարածքում եւ Աբովյան քաղաքում իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում անհատական համարանիշերի համակարգի ներդրման փորձնական ծրագիր՝ համակարգի նախնական փորձարկում: Նշված փորձնական ծրագրի իրականացումն անհրաժեշտ է՝ հաշվի առնելով այդ համակարգի կարելիությունը, մեր հանրապետությունում առաջին անգամ նման համակարգ ներդնելու փաստը՝ իրենց նախադեպը չունեցող խնդիրների առաջացմամբ եւ ամբողջ հանրապետությունում ներդնելուց առաջ հնարավոր բոլոր հարցերը վեր հանելու եւ լուծումներ գտնելու անհրաժեշտությամբ:

Ամեն դեպքում անհատական համարանիշերի համակարգը մեկ օր առաջ ներդնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ներկայումս Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության համակարգում իրականացվող վերափոխումներն իրենց տրամաբանական հանգուցալուծմանը հասցնելու հանգամանքով:

- սոցիալական ապահովությանը հատկացվող սահմանափակ եւ տարեցտարի նվազող ռեսուրսները հնարավորինս նպատակային օգտագործելու եւ ընտանեկան նպաստների համակարգն առավել հասցեական դարձնելու համար,

- սոցիալական ապահովագրության, մասնավորապես կենսաթոշակային ապահովագրության համակարգի ներդրման եւ աստիճանաբար կուտակային սկզբունքով գործող կենսաթոշակային համակարգին անցնելու համար,

- սոցիալական աջակցության բոլոր ձեւերը, այդ թվում ստացվող մարդասիրական եւ այլ օգնություններն առավել նպատակային օգտագործելու համար, եւ վերջապես՝

- պետական կառավարման մարմինների միջեւ միջուկորտային տեղեկատվության փոխանակության, անհրաժեշտ տեղեկատվության հեշտ, արագ եւ օպերատիվ կառավարման եւ որ ամենակարելու է դրա հավաստիության ապահովման համար:

Ի հավելումն վերը նշվածի համակարգի ներդրումը կազատի քաղաքացիներին սոցիալական ապահովության համակարգի որեւէ ծառայությունից օգտվելիս տարաբնույթ տեղեկանքներ ներկայացնելու պարտականությունից, փոխարենը ապահովելով նշված գործընթացում որեւէ սուբյեկտիվ միջամտության բացառում:

Անհատական համարանիշը քաղաքացուն տրվելու է ողջ կյանքի ընթացքում մեկ անգամ եւ ցանկացած դեպքում փոփոխման ենթակա չէ: Սա այս համակարգի հիմնական եւ սկզբունքային տարբերությունն է Հայաստանի Հանրապետությունում գործող մյուս համարակալման համակարգերի համեմատ:

Առաջնահերթ նպատակներից է նաեւ առանց խիստ վարչական միջոցառումներ իրականացնելու հնարավորին չափով բացահայտել ստվերային տնտեսությունն ու

թաքնված զբաղվածությունը, իսկ անհատական համարանիշերի համակարգը նման հնարավորություն ընձեռում է:

Անհատական համարանիշերի հիման վրա կիրականացվեն նաև անհատականացված հաշվետվությունների ներկայացումը, որը կարտացուլի կենսաթոշակային ապահովագրության համար յուրաքանչյուր ապահովագրված անձի, այսինքն՝ Հայաստանի յուրաքանչյուր աշխատողի կողմից եւ նրա համար կատարված վճարումները: Այդ համակարգի առկայությունը թույլ կտա մեծացնել յուրաքանչյուր աշխատողի ապահովագրական ստաժի հաշվառման ճշտությունն ու ճշգրտությունը, կպարզեցնի կենսաթոշակի նշանակման գործընթացը եւ կպակասեցնի այն տեղեկանքների քանակը, որոնք պետք է ներկայացվեն կենսաթոշակ նշանակելիս, կկրճատի սովորաբար հատվածը, որովհետեւ յուրաքանչյուր աշխատող շահագրգռված կլինի, որ կենսաթոշակի իրավունք ձեռք բերի, այսինքն՝ վճարումներ կատարի, որոնք արտացուլվում են անձնավորված հաշվառման մեջ: Անձնավորված հաշվառում ներդրած բոլոր երկրներում նկատվել է սոցիալական ապահովագրության վճարների հավաքագրման արդյունավետության բարձրացում:

Սա համարվում է ցանկացած երկրում իրականացվող կենսաթոշակային վերափոխումների կարելուորագույն խնդիրներից մեկը.

- միասնական անհատական համարանիշի ներդրում,
- անցում գործատուների եւ ինքնազբաղված ֆիզիկական անձանց հաշվետվության նոր ձեւերի,
- անձնավորված հաշվառումն իրականացնելու համար անհրաժեշտ տեխնիկական բազայի ստեղծում:

Այսպիսով, անհատական համարանիշերի համակարգի ներդրումը հնարավորություն կտա համարանիշի միջոցով հավաքել տեղեկատվություն պետական ցանկացած ոլորտի համար, իսկ տարբեր ոլորտներում գործող նույն համարանիշը թույլ կտա տեղեկատվության արդյունավետ եւ հեշտ փոխանակում:

Պետք է նշել, որ այդ համակարգի ներդրումը թույլ կտա մեծացնել ոչ միայն սոցիալական ապահովության բոլոր ծրագրերի արդյունավետությունը:

Գրքույկը պատրաստվել է ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կողմից:

Գրքույկը հրատարակվել է ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Աղքատության հաղթահարման ամփոփ ռազմավարական ծրագրի մշակման մասնակցության գործընթացի շրջանակներում:

Առաջարկությունների համար կարող եք դիմել ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն», հասցեն՝ Երեւան 375010, Հանրապետության Հրապարակ, Կառավարության տուն 1, մասնաշենք 4, հեռ. 52-37-90, 54-30-51, ֆաքս՝ 52-37-90, էլ. փոստ՝ info@gov.am: